

ԴԱՎԻԴՅԱՆ ՈՈՐԵՐԸ



ՀԱՅԱՍՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

**ՀԱՅԱՍՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության և
Պատմության ինստիտուտների
զիտական խորհուրդների որոշմամբ



ԵՐԵՎԱՆ
«Լուսակն» հրատ.
2009

A 94374

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

GHAZARYAN ROBERT

HAYASA
THE POLITICAL AND CULTURAL
HISTORY

The book is recommended for publication by the Scientific
Councils of the Institute of Oriental Studies and Institute of
History of NAS RA



YEREVAN

Lusakn

2009

Պատասխանատու խմբագիրներ՝ պ.գ.դ. Ա.Վ. Քոյսյան
պ.գ.դ. Է.Լ. Դանիելյան

Աշխատությունը տպագրվում է պետական հոգանավորությամբ:

Այս աշխատանքը գրելու ընթացքում ստացած օգտակար խորհուրդների, դիտողությունների և տրամադրած գրականության համար շնորհակալություն են հայտնում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ՀՀ Արևելքի բաժնի աշխատակիցներին:

Ղ 158 Ղազարյան Ռ.Պ.

Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը.-Եր.: «Լուսակն» հրատ., 2008. 164 էջ:

Աշխատությունը Հայկական լեռնաշխարհի Ք.ա. II հազարամյակի պետական կազմավորումներից մեկի՝ Հայասայի քաղաքական և մշակութային պատմության ամբողջական վերականգնման փորձ է։ Ներկայացվում են խնդրին վերաբերող սկզբնադրյալները և պատմագիտական տեսակետները, ճշգրտվում է Ք.ա. XIV-XIII դր. Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի քաղաքական պատմությունը, տրվում են ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային իրավիճակների բնորոգքները։

Աշխատանքը կարող է օգտակար լինել հայագետներին, արևելագետներին և հայագիտությամբ և ՀՀ Արևելքի պատմությամբ հետքրքրվող ընթերցողներին։

Նվիրվում է ջավախսքի պապերին՝
Ղազարյան Ցոլակի և Դավթյան Հովհաննեսի հիշատակին

Գ.Ա.Դ. 63.3 (24)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի՝ ք.ա. II հազարամյակի պետական կազմավորումները քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական փոխհարաբերությունների մեջ են եղել հարակից տարածքների երկրների հետ, ուստի դրանց վաղ պատմության շատ դրվագներ միահյուսվում են Հին Արևելքի պատմությանը։ Այստեղ կարևորվում է սեպազիր աղբյուրներից հայտնի Հայասա երկիրը, որի անունը Հայք-Հայաստան անվան վկայությունն է ք.ա. II հազարամյակում¹։ Քանի որ այդ պետական միավորի մասին տեղեկություններն առկա են խեթական սկզբնադրյուրներում, ապա, ինչպես պարզված է պատմագիտության մեջ, երկրի անվանումը տրված է խեթերենին համապատասխան, որտեղ աշա-ն Փոքր Ասիայի տեղանուններում օգտագործվող վերջածանց էր և կապված էր խեթալուվական լեզվաշխարհի հետ։ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետականություններից մեկի՝ Հայասայի քաղաքության պատմության ուսումնասիրությունը հայոց պատմության այն հիմնահարցն է, որի հետազոտությունը կարևոր է թե՛ հայագիտության և թե՛ արևելագիտության մեջ և, ընդհանուր առմամբ, Հին Արևելքի պատմության խնդիրներն ուսումնասիրելու համար։

Հայասայի պատմությունն ուսումնասիրվել է հայրենական և արտերկրյա պատմագիտության կողմից։ Աշխատության թեմային վերաբերող կամ առնչվող ուսումնասիրություններն ակսվել են դեռևս ԽՀդ. 20-30-ական թվականներից։ Այս խնդրում հիմնարար նշանակություն ունի Գ. Ղափանցյանի հատկապես «Հայ-

¹ Հայա (որպես տեղանուն, ցեղանուն և անձնանուն) և Ազի (որպես տեղանուն և ցեղանուն) անվանումները փաստվել են Երլայի (ք.ա. III հազարամյակի կնաքրով թվագրվող առևտրական տերատերում) և Աշշուրի (Կապատրվկիայի տարածքից գտնված հինաստրաստանյան արձանագրություն՝ թվագրվող 42.ա. III-II հազարամյակների սահմանագծով) արձանագրություններում (Иванов В., Выделение различных хронологических словес в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, ИФЖ, 1983, № 4, с. 30-33):

սան-հայերի քնօրրան» աշխատությունը²: Դրա հետ մեկտեղ կարևորվում են նաև այլ հեղինակների մասնագիտական և ընդհանուր քնույթի ուսումնասիրությունները, որոնցում վեր են հանված Հայասայի լեզվին, ռազմաքաղաքական պատմությանը, տեղագրությանը և կրոնին նվիրված հարցերը: Սակայն Հայասայի պատմությունն արծարծող դասական աշխատանքներն ունեն տասնյակ տարիների վաղեմություն: Ժամանակի հրամայականն է անցած տասնամյակների ընթացքում սեպագրագիտության և հնագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումների լույսի ներքո կատարել Հայասա-Ազգի պատմության բննական ուսումնասիրությունը:

Միևնույն ժամանակ պետք է նշել երկու կարևոր հանգամանք, որոնք հեռու լինելով պատմագիտական խնդիրների ոլորտից՝ առկա են պատմական Հայասայի տարածքում պեղումներ կատարող օտար հնագետների հրապարակումներում: Առաջինը գիտականորեն ընդունված պատմաշխարհագրական անունների բոնագրոսիկ կերպով փոփոխությունն է: Երկրորդը հնագիտական հուշարձանները պատմական հասցեատիրոջից գրեթե լուսաք վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, այն ընդգրկող վայրերի աշխարհագրական անուններին և հայոց մշակութային ժառանգությանը³: Դրանով իսկ սույն մենագրությունում կարևորվում է խնդրո առարկա տարածքի թե՛ հնավայրերի պատմաաշխարհագրական անունների վերականգնումը և թե՛ հնագիտական հուշարձանների երնիկական պատկանելության արծարծումը, ինչը կարևոր նշանակություն ունի հին Հայոց երես-մշակութային ամբողջական պատմության առումով:

Խեթական սեպագիր սկզբնադրյուրներից հայտնի Հայասա-Ազգի թագավորության պատմությունը ներկայացնելիս մեր հետազոտության համար առանցքային խնդիրներ են.

1. Հայասայի ամբողջական ու բննական պատմությունը,

² Կառավար Դ., Խայասա-կոլուբել արմեն, Երևան, 1948.

³ Դանիելյան Է., Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ, “ՊԲՀ”, 2003, թիվ 3, էջ 30-37:

- Հայասայի տեղանունների ամբողջական ցանկը,
- Խեթական տերության հետ Հայասայի ռազմաքաղաքական փոխարարերությունները,
- Հայասայի քաջավորության դերը խնդրություն առարկա ժամանակաշրջանում իին Հայոց պատմության մշակութային ու ռազմաքաղաքական ընդհանուր համատեքստում՝ առկա ողջ նյութի (գրավոր, հնագիտական և հարակից) վերհանմամբ:

Թեմային վերաբերող կամ առնչվող ուսումնասիրություններն սկսվել են դեռևս XXդ. 20-ամական թվականներից: Չնայած անցած քավական ժամանակին, երբ հրատարակվեցին «Հայասա-Ազգի», «Հայասան-հայերի բնօրբան», «Հին Հայատանի պատմության և աշխարհագրության մի քանի վիճելի խնդիրների մասին», «Հայացիներ»⁴, ինչպես նաև մասնավոր և ընդհանուր բնույթի տարրեր ուսումնասիրություններ, տվյալ խնդրի ուսումնասիրման համար առաջին անգամ է փորձ արվում օգտագործել նաև պատմական Հայասա-Ազգի տարածքի հնագիտական նյութը:

Վերջին տասնամյակներում սեպագրագիտությունն ապրել է զգալի առաջընթաց, հայտնաբերվել են նոր աղբյուրներ, ճշգրտվել և վերահրատարակվել են հները, Վերանայվել են սկզբունքային մի շարք հարցեր: Բոլոր վերոհիշյալ գործոններն, ինչպես նաև նյութին բննական մոտեցման անհրաժեշտությունը պարտադրում են վերաշարադրել Հայասայի պատմությունը, ինչին և նվիրված է ներկա աշխատությունը:

Հայասայի պատմության աղբյուրագիտական հենքը կազմում են խեթական սեպագիր աղբյուրները, ասորեստանյան որոշ տեքստեր, գրավոր աղբյուրներին լրացնող հնագիտական նյութեր և հուշարձաններ, օժանդակ աղբյուրներ, որոնք ներառում են ֆիլիկաաշխարհագրական, լեզվաբանական և այլ ուղղություններ:

⁴ Forster E., Hajasa-Azzi, Caucasica, 1931, № 9, S. 1-24. Կապանյան Գ., Հայասակոլուբել արման, Երևան, 1948. Մանանյան Յ.. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван. 1956, с. 68-155. Խաչատրյան Յ., Հայасцы, ВОН. 1972, № 8, с. 32-41.

1. Գրավոր աղբյուրներ

Ա. Խեթական արձանագրություններ: Հայասային վերաբերող համեմատաբար մեծարանակ և արժեքավոր տեղեկությունների հիմնական աղբյուրը միջինխեթական ու նորխեթական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններն են:

Խարքիի արքա Առնուվանդաս I-ի օրոք (Ք.ա. XIV դարի I կես)⁵ կազմված խեթական տեքստերից է, այսպես կոչված, «Պախսուվացի Միտայի» տեքստը⁶: Այս վավերագրում տրվել է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ Խեթական պետության կնքած ժամանակագրորեն ամենավաղ պայմանագիրը, որտեղ Հայասան շի հիշատակվել, սակայն դրանում հիշատակվում են որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական աղբյուրներից հայտնի են՝ որպես այդ երկրի բնակավայրեր:

Գոյություն ունի խեթահայասական առայժմ չթվագրված պայմանագիր, որտեղ խեթական արքան (հավանաբար, Թուղթալիյաս III-ը (Ք.ա. 1360-1344թթ.)) դիմում է հայասացիներին (Հայասայի մարդկանց)⁷:

Մաշատ-Հյոյուրիից (խեթ. ^{ՈՐՈՒ}Tapigga) հայտնաբերված տեքստերում տեղեկություն կա նաև Հայասայի վերաբերյալ, որի դեմ արշավելու նպատակով խնճերը զորահավաք էին անցկացրել Վերին Երկրում: Արխիվը թվագրվել է Թուղթալիյաս III-ի և Սուպահիլումաս I-ի կառավարման շրջանով (Ք.ա. XIVդ. 60-20-ական թթ.):⁸

⁵ Խեթական արքաների քազավորման տարեթվերը տրված են՝ ըստ Թրեք Բրայսի գրքի՝ Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1998, p. XIII-XIV (օգտագործվել է այժմ ընդունված ստորին ժամանակագրությունը, որը հենվում է հիմնականում քարելոնյան աստղագիտական/գոյշակային բնույթի մի տեքստի վրա, ինչպես նաև աստղաբարելոնյան, եզիդական և խեթական որոշ սինխրոնիզմների վրա):

⁶ KUB XXIII 72.

⁷ KBO XVI 45 (CTH 832. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 128).

⁸ Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, TTKY, № VI/35, 1991, S. 298-301. Քոսյան Ա., Նոր Այութեր խեթական տեքստերան և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄԱՍԵԺ, 2001, XX, էջ 233-245:

Հայասան հիշատակված է խեթական թագավոր Սուպալիու-լիումաս Ի-ի (Ք.ա. 1344-1322թթ.) տարեգրության մեջ; որը խմբագրել է նրա որդիին Մուրսիլիս II-ը⁹: Այդ տարեգրությունից տեղեկանում ենք, որ Թուլխալիյաս III-ն իր որդու՝ Սուպալիու-լիումասի մասնակցությամբ երկու ուազմական արշավաճր է կա-տարել Հայասա-Ազգի դեմ: Ժամանակագրական տեսակետից Հայասայի մասին հետագա տեղեկություններ ստանում ենք Սուպալիումաս Ի-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված դաշնագրից¹⁰:

Խարքի և Հայասայի միջև հետագա փոխհարաբերություն-ների մասին մեզ կարևոր տեղեկություններ են հասել Մուրսիլիս II-ի (Ք.ա. 1321-1295թթ.) տարեգրություններից («Տասնամյա» և «Ընդարձակ»)¹¹: Առաջինը ներկայացնում է արքայի կառավար-ման առաջին տասը տարիների իրադարձությունները, երկրորդն ընդգրկում է նրա կառավարման գրեթե ողջ շրջանը: Հայասայի հետ փոխհարաբերությունները թվագրվում են նրա գահակա-լության յոթից տասնմեկերորդ տարիներով:

Հայկական լեռնաշխարհի «Երկրների» վերաբերյալ հավաս-տի սկզբնաղբյուր է խեթական արքա Խարքուսիլիս III-ի (Ք.ա. 1267-1237թթ.) մասնագիտական շրջանակներին լավ հայտնի «Ինքնակենսագրություն», որտեղ տեղեկություններ կան խեթա-կան արքայի կողմից գահի բռնազավթման արդարացման և նա-խորդ արքաների գործունեության վերաբերյալ¹²: Այստեղ հիշա-տակություն կա նաև Խարքի արևելյան հարևան Հայասայի մասին¹³:

⁹ Güterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2-4, pp. 41-68, 75-98, 107-130.

¹⁰ Friedrich J., Der Vertrag des Šuppiluliumaš mit Ḫukkanaš und den Leuten von Hayaša, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

¹¹ BoTU II, S. 48-63 (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38. CTH 61).

¹² CTH 81 (Otten H., Die Apologie Hattušiliš III: Das Bild der Überlieferung, Wiesbaden, 1981).

¹³ KBo VI 28.

Հայասան վերջին անգամ հիշատակվել է Թուդիսալիյաս IV-ի (Ք.ա. 1237-1209թթ.) օրոր, և նշվել է, որ այն թշնամական երկիր է Խաքքի համար¹⁴:

Պահպանվել է նաև խեթահայասական պայմանագրի կնքմանը «վկա» աստվածների ցուցակ, որտեղ տրվել է նաև Հայասայի քաղաքների և նրանցում պաշտվող աստվածների անվանացուցակը¹⁵:

Հայկական լեռնաշխարհի՝ Ք.ա. II հազարամյակի պետական կազմավորումների պատմության վերաբերյալ խեթական սեպագիր աղբյուրներն արտակարգ կարևոր են այն առումով, որ շատ դեպքերում դրանք միակ գրավոր վկայություններն են: 1920-ական թվականներից հրատարակվող այդ աղբյուրների շնորհիվ՝ ուսումնասիրվել են նաև Հայասա-Ազգի պատմության, երնիկական, սոցիալական իրավիճակի և հոգևոր մշակույթի բազմարիվ խնդիրներ: Սակայն Խաքքուսափ (այժմ՝ Բողոքյոյ) պալատական պահոցի ընձեռած հնարավորությունները սահմանափակ են: Արդի ժամանակաշրջանում Փոքր Ասիայի տարրեր շրջաններում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են տեղական սեպագրական արխիվներ, որոնց հրատարակությունը վերջերս է սկսվել: Մրանք գերազանցապես նամակներ են՝ առարգված խեթական արքունիքից: Զգալի թիվ են կազմում վարչական և ծիսապաշտամունքային տերաստերը: Այստեղ կան նաև հայագիտության համար զգալի հետաքրքրություն ներկայացնող նյութեր:

Վերջին տասնամյակներում հրատարակված խեթական սեպագիր տեքստերում վկայված են նաև մի քանի նոր տեղանուններ, որոնք, հավանաբար, գտնվել են Հայասայում կամ նրան հարող խեթական տարածքում¹⁶: Դրանք են Իյանինա

¹⁴ KUB XXVI 12 11 12-15.

¹⁵ KUB XXVI 39 (Forrer E., Այասա-Ազզ, S. 6).

¹⁶ Քոյսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, ՍՍԼԵԺ, 2003, XXII, էջ 252-259: Նոյնի, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 54, 58, 69, 79, 84, 93, 100, 101:

(^{URU}Iyaninna), Խարսալասա (^{URU}Haršalaša/i), Խոսղու (^{URU}Huddu), Լալատտա (^{URU}Lalatta), Լիտտա (^{URU}Litta), Պարտանտա (^{URU}Pártanta), Տախ(ա)նիսարա (^{URU}Taḥhanišara), Տավատենա (^{URU}Tawatena), Ուկսու (^{URU}Ukšu), Ուտկունիսա (^{URU}Utkuniša) քաղաքները, որոնք գտնվել են Հայասայի Ուրա քաղաքի շրջակայքում կամ դրան հարող տարածքում, և Սալիտի լեռնանունը (^{URU.SAG}Šaliti)¹⁷: Կան նաև մի շարք դժվարընթեռնելի քաղաքանուններ, որոնց հայասական պատկանելությունը հավանական է: Դրանք են ^{URU}Հս-ս-ս[...], ^{URU}[...]-mi-it-ta, ^{URU}[...-p]a-ku-ul-la, ^{URU}[...-t/š]a-ta, ^{URU}]x-x-ri-u, ^{URU}[...-ʃ]-ta¹⁸:

Հայասա երկրանունը նշյալ աղբյուրներում տրվել է Հայասա կամ Ազգի ձևով, և երկու դեպքում ել խեթերը հասկացել են միևնույն երկիրը:

Բ. Ասորեստանյան արձանագրություններ: Հայասա-Ազգի պատմության մասին տեղեկություններ են պարունակում նաև Ք.ա. XIII-XIIդդ. ասորեստանյան սեպագիր արձանագրությունները:

Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XIIIդ. կեսերից հայտնվել էր Խարքի և Ասորեստանի ուազմաքաղաքական մրցակցության ոլորտում: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան գրավոր աղբյուրներում որոշակի տեղեկություններ են հայտնվում Հայկական լեռնաշխարհի երկրների նաև: Այդ տեղեկությունները զայիս են Ասորեստանի արքաների՝ դեպի հյուսիս կատարած արշավանքների նկարագրություններից:

Թուկուլքի-Նինուրտա I-ի (Ք.ա. 1233-1197թթ.)¹⁹ տեքստերում հանդիպում է Հայկական լեռնաշխարհի՝ «Նախի երկիր» հավաքական անվանումը: Եթե խեթերը Հայկական լեռնաշխարհի

¹⁷ KBo IV 4 II 78 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 122-123).

¹⁸ Քոյսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 105-107:

¹⁹ Ասորեստանյան արքաների ժամանակագրությունը տրված է՝ ըստ Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Ninurta-apil-ekur und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1979, №71, S. 19-38.

հյուսիս-արևմտյան կողմերն անվանում էին Հայաստան կամ Ազգի, ապա ասորեստանցիները լեռնաշխարհի արևմտյան հատվածը հիշատակել են Նախրի Երկրներ (Տավրոսի լեռներից հյուսիս ընկած հատվածը՝ մինչև Սև ծով) անունով: Այսպիս, Աշուր քաղաքում, Թուկուրի-Նինուրտայի պալատում և տաճարում հայտնաբերված արձանագրություններում պատմվում է Ասորեստանի արքայի՝ դեպի Հայկական լեռնաշխարհ արշավանքի ժամանակ նրա դեմ դուրս եկած Նախրան 43 քաջավորների մասին²⁰:

Հայկական լեռնաշխարհի՝ Ք.ա. XIIդ. վերջին տասնամյակների քաղաքական վիճակի մասին տեղեկություններ հանդիպում են միայն Ասորեստանի արքա Թիգլարպալասար I-ի (Ք.ա. 1114-1076թթ.) սեպագիր արձանագրություններում: Դրանք վերաբերում են նշված տարածաշրջանում այդ տիրակալի Ք.ա. 1112թ. նվաճումներին, որոնց կապակցությամբ նույնական հիշատակվել են Նախրան Երկրները: Թիգլարպալասար I-ը հիշատակել է Նախրի 23 Երկրների քաջավորներին: Պարտության մատնելով նախրյան ուժերը՝ նա ավար էր վերցրել 120 մարտակառք և այնուհետև հետապնդել Նախրի 60 քաջավորներին ու նրանց օգնության եկածներին մինչև «Վերին ծովը»²¹:

Թիգլարպալասար I-ի տարեգրություններում տեղեկություններ կան նաև այն մասին, որ ուրումնացիների (ուրուացիների) և կասկերի (արեշլացիների) ուժերը շարժվել են դեպի հարավ և քախվել Ասորեստանի հետ: Այս շարժը, հավանաբար, տեղի է ունեցել Հայաստանի տարածքից²²:

²⁰ АВИИУ, 5, 6, 7, 8, 1951, № 2, 3, 4. ARI, I, §§ 691-694, 701, 707, 713, 773, 783etc. Арутюнян Н., Биайниլի (Урарту), Ереван, 1970, с. 21сл.

²¹ АВИИУ, 10 (IV, 43).

²² АВИИУ, 12,13. АКА, № 1. Col. II, 100-102, Col. III, 1-2, p. 47-48. ARI, II, № 18. АКА, p. 112, 117. ARI, II, № 67, 93. Երեմյան Ս., Հայերի ցեղային միություններ Արմեն-Շուարիա երկրում, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 59; Քոյսյան Ա., Երմիկական տեղաշարժները Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում Ք.ա. XII դարում, ՊԲՀ, 1991, թիվ 1, էջ 74-77; Նոյնի, «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը, ՊԲՀ, 1996, թիվ 1-2, էջ 214-218; Ավետիսյան Հ., Հնագույն երմիկական տեղաշարժները և Հայկական լեռնաշխարհը Ք.ա. III-ի հազարամյակներում, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 243-245:

2. Հնագիտական աղբյուրներ

Պատմաբանները Հայասայի տարածքը հիմնականում տեղորշում են Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում: Ի տարբերություն Հայկական լեռնաշխարհի առավել լավ ուսումնասիրված տարածքների (Վանա լճի ավազանը, Խարբերդի շրջանը, Հայաստանի Հանրապետության տարածքը, Ուրմիա լճի ավազանը, պատմական Գուգարքի տարածքը)՝ լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների հնագիտական ուսումնասիրության վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց:

Թեև Հայասայի պատմական տարածքում հնագիտական հետախուզական աշխատանքներ կատարվել են դեռևս XXդ. 40-ական թթ., սակայն կանոնավոր պեղումներ այստեղ իրականացվում են՝ սկսած 1980-ական թթ.-ից: Խնդրո առարկա տարածաշրջանում պեղումներն ի հայտ բերեցին Ք.ա. II հազարամյակի՝ մասնավորապես ուշբրոնզեդարյան մշակույթի առկայությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում:

Ներկայիս Էրզրումի (Կարին) մարզի տարածքում են գտնվում նաև Սոս, Գյուղելովա, Բլուր, Կարազ հնավայրերը:

Sos Höyük (Սոս) հնավայր-բլուրը գտնվում է պատմական Վերին Բասեն գավառում: Հնավայրում պեղումներ սկսվել են դեռևս 1987թ. Էրզրումի համալսարանի և Էրզրումի քանզարանի աշխատակիցների խմբի կողմից: Հետազայում ավստրալացի հնագետ Ա. Սագոնան մի քանի համահեղինակների հետ, սկսած 1995թ.-ից, հրատարակել է այդ հնավայրում իրենց կատարած աշխատանքների ամփոփումը²³:

Էրզրումից 16կմ դեպի հյուսիս-արևմտյառ է տեղորշվում

²³ Sagona A., Sagona C., Özkorucuklu H., Excavations at Sos Höyük 1994, AnSt, 1995, № 45, p. 193-218. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1995, AnSt, 1996, № 46, 1, p. 27-52. Sagona A., Erkmen M., Sagona C., Howells S., Excavations at Sos Höyük, 1996, Anatolica, 1997, № XXIII, p. 181-203. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1997, KST, 1998, № XX, 1, p. 205-206. Sagona A., Sagona C., Excavations at Sos Höyük, 1998 to 2000, ANES, 2000, № XXXVII, p. 56-77.

Karaz (Çavuşaç) hınawaqjutawkaan qawaṛṛ: Այստեղ հետազոտություններ կատարվել են դեռևս 20-րդ դ. 40-50-ական քք.²⁴:

Հայտնի հնավայրերից է նաև Pulur-ը (Բլուր): Այն գտնվում է Էրզրումից 20կմ դեպի արևմուտք: Այս հնավայրում ուսումնասիրություններ են կատարվել՝ սկսած անցած դարի 40-ական քք-ից: Բլուրի հնավայրում հետազոտություններ են կատարել և դրանց ամփոփումը տվել բուրք հնագետները²⁵:

Güzelova (Գյուզելովա) հուշարձանը գտնվում է Էրզրումից 15կմ դեպի հյուսիս-արևելք: Այստեղ պեղումներ կատարվել են 1961թ.-ին Հ. Քոչայի և Հ. Վարիի գլխավորությամբ²⁶:

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որտեղից պեղված Ք.ա. II հազարամյակի հնագիտական նյութերը կարևոր են Հայաստան-Ազգի պատմության ուսումնասիրության համար, ընդգրկում է Գայլ (Լյուկոս) և Շորոխ գետերի հովիտները: Այստեղ է Բüyüktepe Høyük հնավայրը՝ Բարերդից 30կմ դեպի հարավ-արևմուտք²⁷:

1980-ական քք. Վերջում Գյումուշխանների մարզի Բարերդի և Կելիխտի շրջաններում ուսումնասիրվել են 60-ից ավելի հնավայրեր, այդ թվում նաև՝ 1940թ.-ի հետազոտական արշավանքի ժամանակ հնագետ Ք. Քյորքենի կողմից Բարերդի շրջանում հիշատակված 5 հնավայրերը²⁸:

²⁴ Lamb W., The Culture of North-East Anatolia and its Neighbours, AnSt, 1954, № 4, p. 21-32. Koşay H., Turfan K., Erzurum-Karaz kazisi Raporu, TTKB, 1959, № XXIII, s. 349-413.

²⁵ Kökten K., Orta, doğu ve kuzey Anadol'da yapılan tarih öncesi araştırmaları, TTKB, 1944, № VIII/32, s. 659-680. Նույնի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Dergisi, 1944, № III/5, s. 464-505. Koşay H., Pulur ve Güzelova (Erzurum Araştırmaları), TTKY, 1964, № XVII, 1, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, AST, 1988, № 5/2, s. 45-76. Նույնի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, XXX, s. 153-158.

²⁶ Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967.

²⁷ Sagona A., Pemberton E., McPhee I., Excavations at Büyüktepe Höyük, 1992, AnSt, 1993, № 43, p. 69-83. Sagona A., Pemberton E., McPhee I., Sagona C., Büyüktepe Höyük 1993 Activities, KST, 1994, № XVI, 1, p. 161-164.

²⁸ Kökten K., Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 479-486, 498-505. Sagona A., An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: The Pre-classical period, AST, 1989, № 7, p. 425-433.

ՀԱՅԱՍՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԻ ՊԱՏՄԱՍԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների պատմության վերաբերյալ կարևոր են խեթական սեպագիր առյուղները, որոնց՝ 1920-ական թվականներից հրապարակման շնորհիվ՝ ուսումնասիրվել է Ք.ա. II հազարամյակում գոյություն ունեցած քաղաքական միավորների պատմությունը, ինչպես նաև երեխական, սոցիալական իրավիճակի և հոգևոր մշակույթի բազմաթիվ խնդիրներ:

Խեթական սկզբանդրյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ դեռևս Ք.ա. XIV դարում, գուցե և ավելի վաղ շրջանում, Հայկական լեռնաշխարհում կազմավորվել էր մի պետական միավոր՝ բազավորություն, որը խեթերն անվանում էին Հայասա (խեթ. KUR ^{URU}Hayasa - «Հայասա քաղաքի երկիր») կամ Ազգի (խեթ. KUR ^{URU}Az(z)i - «Ազգի քաղաքի երկիր»): Խեթահայասական ուազմաքաղաքական փոխհարաբերություններին վերաբերող սեպագիր տեքստերի տվյալների հիման վրա հետազոտողները քննել են Հայասա-Ազգիի ընդգրկած տարածքի և Հայկական լեռնաշխարհում նրա պատմաշխարհագրական դիրքով պայմանավորված նշանակության հետ կապված խնդիրները:

Հայասա-Ազգիի տեղադրության հարցը կարևոր է Հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրման առումով, քանզի շատ պատմաքանների կողմից այն ընդունվել է՝ որպես Հայր-Հայաստան երկրի գոյության փաստ Ք.ա. II հազարամյակում: Սույն նույնացումը (Հայասա-Հայր) հանդիպել է նաև ա-

ուարկությունների²⁹, երբեմն մերժվել է Հայասա-Ազգի երկրի առնչությունը Հայաստանի հետ³⁰:

Հայասային վերաբերող պատմագիտության բնագավառը վերելք ապրեց խեթագիտության զարգացմանը զուգահեռ: Դեռևս XXդ. սկզբին Գ. Վինքերի, Զ. Գարստանզի, Բ. Հրոզնու և այլ արևելագետների կողմից հիմք դրված խեթագիտությունն իր առաջին հրատարակություններում տեղեկություններ է պարունակում նաև Հայասա-Ազգի մասին: Եթե Բ. Հրոզնին բավարարվել է միայն բոռուցիկ ծանոթագրություններով Հայասա-Ազգի երկրի և նրան սահմանակից ցեղերի մասին³¹, ապա Է. Ֆոռերն անդրադարձել է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 15-13-րդ դարերում կազմավորված քաղաքական միավորների պատմությանը: 1927թ. նա գրել է գիտական մեծ արժեք ներկայացնող «Հայասա-Ազգի» աշխատությունը, որը լույս է տեսել չորս տարի անց՝ 1931թ.³²:

Հայասայի պատմության ուսումնասիրության գործում զգալի ներդրում է ականավոր արևելագետ Յ. Ֆրիդրիխի կողմից հրատարակված Խաթթիի արքա Սուպիլլուլիումաս I-ի և Հայասայի բազավոր Խուկկանայի միջև կնքված դաշնագիրը³³: Նա դեռևս 1925թ. իր աշխատություններից մեկում Հայասա երկրի տեղադրությունը կապել էր Թեգարամա երկրից (ներկայիս Մալարիայից հյուսիս-արևմուտք) հյուսիս-արևելք ընկած տարածքի, այսինքն՝ Բարձր Հայքի հետ: Փաստորեն, նա Հայասան տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Հետազոտությունները կատարվել են Արևելագունդական առաջարկեց Հայասան տեղադրել Կասկա (Արևելագունդական լեռների շրջանը) և Ալզի (Վերին Տիգրիսի ա-

²⁹ Դյեկոն Ի., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 209-214.

³⁰ Ünal A., Hititler Devrinde Anadolu, s. 158.

³¹ Hrozny F., Die ersten Zehn Regierungsjahre des Königs Muršilis II, Hethitische Keilschrifttexte aus Boghazköi, 1919, S. 156-223.

³² Forrer E., Hajasa-Azzi, S. 1-24.

³³ Friedrich J., Der Vertrag des Šuppiluliumaš mit Հukkanaš und den Leuten von Հayaša. Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

կունքների մոտ) երկրների միջև, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում³⁴:

Հայասայի պատմության լավագույն սկզբնադրյուրներն են նաև արևելագետ Ա. Գյորցեի գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունները³⁵. Նա 1927թ. իր հոդվածներից մեկում Հայասա-Ազգին տեղորոշել է Տրապիզոնից արևելք՝ Պոնտոսի մերձափնյա շրջանում³⁶: Այնուհետև, վերանայելով իր այդ տեսակետը, նա Հայասա-Ազգին տեղադրել է Արևմտյան Եփրատի և Դորոխի ավագաններում մինչև Սև ծովի ափերը³⁷:

Հայասան Սև ծովի ափերին տեղորոշող հետազոտությունները կարծում են, որ այն գտնվում էր դրա հարավ-արևելյան ափերին, և նրանց հիմնական կովանը Ազգի Արիասա քաղաքի տեղադրությունն է, որն ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության՝ «գտնվում էր ծովի մեջ» (խեթ. ^{URU}A-ri-ip-ša-aš Š[À A.A]B.BA³⁸):

1931թ. Է. Ֆոռերը կարծիք է հայտնել, որ Հայասա-Ազգին պետք է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում տեղադրել, ինչն ընդունվել է արևելագետների մեծ մասի կողմից³⁹: Պ. Կրեշմերը, նշելով, որ Հայասա անունը նշանակում է Հայաստան (նրանից առաջ այդ կարծիքն է արտահայտել Կ. Ռոբը⁴⁰), փաստորեն, համաձայնել է Հայասան Բարձր Հայքում տեղադրելու Է. Ֆոռերի առաջարկած տեսակետի հետ⁴¹:

³⁴ Friedrich J., Aus dem hethitischen Schriftum, Leipzig, 1925, H. I, S. 9, H. II, S. 21. Նույնի, Staatsverträge des Ḫatti-Reiches in hethitischer Sprache, S. 103-104.

³⁵ Götze A., Zur Geographie des Hethiterreiches, Kleinasiatische Forschungen, 1930. B. I, H. I, S. 108-114. Նույնի, Die Annalen des Muršiliš, 1933. Նույնի, Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven, 1940. Նույնի, Kleinasiens, München, 1957.

³⁶ Goetze A., Zur Geographie des Hethiterreichs, Kleinasiatische Forschungen, 1930, B. I, H. I, S. 108-114.

³⁷ Goetze A., Kleinasiens, München, 1957 (տես այդ գրքի վերջում զետեղված քարտեզը).

³⁸ KBo IV 4 IV 5(Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 132-133).

³⁹ Forrer E., Hajasa-Azzi, Caucasica, 1931, № 9, S. 1-2.

⁴⁰ Roth K., Die Bedeutung des Armenischen, ՀԱ, 1927, թիվ 11-12, էջ 742:

⁴¹ «Հայ» անունը ըստ Պ. Կրեշմերի, ՀԱ, 1933, թիվ 7-8, էջ 429:

Ե. Փոռերից և Ա. Գյորգեից հետո Հայասայի պատմության համար շատ կարևոր աղբյուրների հրատարակությամբ համես եկավ ֆրանչիացի արևելագիտ Ե. Կավենյակը: Վերահրատարակելով Սուպայիլովիումասի տարեգրություններն ու դաշնագրերը՝ Ե. Կավենյակը փորձել է ճշտել նաև Հայասայի տեղադրությունը՝ այն համարելով առաջին քագավորությունը Հայաստանում և Արևելյան հզոր միապետություններից մեկը Ք.ա. XIV դարում: Ե. Կավենյակը Հայասա-Ազգին տեղադրել է Վերին Եփրատի ավազանում⁴²:

A 94374

Իր ուսումնասիրություններում, որոնք հիմնականում վերաբերել են Խեթական պետության պատմական աշխարհագրությանը, Ֆ. Կոռնելյոսն անդրադարձել է նաև Հայասայի պատմությանը: Նա համամիտ է այն ուսումնասիրողների հետ, որոնք Հայասան տեղորոշել են Սև ծովի ափերին: Ֆ. Կոռնելյուսը նոյնպես Հայասան տեղադրել է Սև ծովի հարավ-արևելյան ափերին (Աերկայիս Սամսոն քաղաքի շրջակայրում): Իսկ Հայասայի գլխավոր քաղաքն (մայրաքաղաքը), ըստ նրա, տեղադրված է եղել Գայլ (Կելկիս) գետի ներքին ավազանում Horoztepe (Հորոզ թեփե) հնավայրի տեղում⁴³: Սակայն Կոռնելյուսի տեսակետը մերժվել է ուսումնասիրողների կողմից:


Նման տեղադրության պայմանում քացառվում է Հայասայի աշխարհագրական մերձավորությունը Խոտվայի հետ, որը փաստվել է Խեթական արձանագրությունում, երբ Խեթական արքան (Սուպայիլովիումա I-ը) Խոտվայից (Խետագայի Ծոփքը) շարժվել է դեպի Ծոխապա երկիրը (ասորեստ. աղբ. Տիհուս՝ Խոտվայի հարևանությամբ), այնուհետև մտել Հայասա⁴⁴:

⁴² Cavaignac E., L'extension de la zone des Gasgas a l'ouest, RHA, 1931, № 4, p. 101-110. Նոյնին, Le premier royaume d'Arménie, RHA, 1934, № 17, p. 11-14.

Նոյնին, La place du Palé et du Tumanna, RHA, 1936, № 22, p. 174-177.

⁴³ Cornelius F., Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, RHA, 1958, № 62, S. 1. Նոյնին, Neue Arbeiten zur Hethitischen Geographie, Anatolica, 1967, № 1, S. 68.

⁴⁴ KUB XXXIV 23 (Götterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 3, p. 83).



Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ Հայասա-Ազգին գտնվում էր Խերական տերության հյուսիս-արևելյան մասում: Ըստ նրա՝ Խարբին տարածքային առումով առավել մոտ է գտնվել Ազգին, այդ պատճառով խեթերը հաճախ Հայասա անվան փոխարեն օգտագործել են այդ տեղանունը: Այսպիսով, Գ. Մելիքիշվիլին Հայասան տեղորոշել է Արևմտյան Եփրատի վերին ավազանում, որին սահմանակից են եղել Կասկա, Խոտվա և Վերին Երկրները⁴⁵:

Հայասայի պատմությանն է անդրադարձել նաև Ի. Դյակոնովը՝ հիմնականում հայոց լեզվի, հայոց վաղնջական պատմության և հայ ազգի ցեղասերման հարցերի շրջանակներում⁴⁶: Ի. Դյակոնովը սկզբնապես Հայասա-Ազգին տեղորոշել է Վերին Եփրատի ավազանում⁴⁷, սակայն իր հետագա աշխատություններից մեկում, համաձայն չլինելով այն կարծիքին, թե Հայասան պետք է փնտրել ներկայիս Երզնկայի և Երզումի շրջակայքում, առաջարկեց տեղադրել այն Սև ծովի հարավ-արևելյան ափերին: Ազգին, ըստ նրա, գտնվում էր Պոնտոսում՝ Խարշիտ գետի ավազանում, և տարածվում էր մինչև Փառնակիա, իսկ Հայասան՝ Շորոխ գետի ավազանում՝ որպես կենտրոն ունենալով Բարերդ քաղաքի շրջակայքը, որտեղից Հայասայի իշխանությունը տարածվել է դեպի հարավ: Ազգին Արիպսա քաղաքն Ի. Դյակոնովը տեղորոշել է Սև ծովի ափերին՝ Փառնակիայի մոտ, իսկ Ազգին մյուս հայտնի կենտրոնը՝ Դուզգաման, նա տեղադրել է Լյուկոս (Գայլ) գետի ավազանում կամ Լյուկոս ու Խարշիտ գետերի ավազաների միջև ընկած լեռնանցքներում, Պախստուվան՝ ներկայիս Կենաչից (Կամախ) արևմուտք՝ Զինարայի մոտ: Ինգալավան, ըստ նրա, Հայասա-Ազգին սահմանային բերդերից մեկն էր, սակայն ի տարբերություն մի շարք հեղինակների՝ նա այն հյուն հայկական Անգեղ վայրում չի տեղորոշել: Ըստ Ի. Դյակոնո-

⁴⁵ Մելիքիշվիլի Գ., Հայր-Ուրարտ, Թիֆլիս, 1954, ս. 81-82.

⁴⁶ Դյակոնով Ի., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 81-101.

⁴⁷ Դյակոնով Ի., Խետты, фригийцы и армяне, ПАСБ, 1961, с. 333-368 (սես հոդվածում գետեղված քարտեզը).

վի՝ Կումմախսան գտնվել է Անդրկայիս Կենմախսի տեղում և Հայասայի կազմում է ընդգրկվել միայն Ժամանակավորապես՝ դրա առավել ընդարձակման տարիներին⁴⁸:

Հայասայի տարածվելը Արևելապոնտական լեռներից հյուսիս՝ Սև ծովի ափեր, քիչ հավանական է: Այսպիսի տեսակետի հիմքում ընկած է միայն Արիասայի՝ որևէ ջրային տարածքի ափին գտնվելու փաստը, սակայն այդ ջրային տարածքը կարող էր հանդիսանալ նաև Վանա լիճը (ծովը): Արևելապոնտական լեռները հանդիսացել են կասկական ցեղերով բնակեցված տարածք, ինչն ինքնին բացառում է Հայասայի գտնվելը այդ տարածքում:

Զ. Մելլաարտը Հայասան տեղադրել է Եփրատի մեծ ոլորանից մինչև Էրզրում ընկած տարածքում՝ հավանական համարելով նաև, որ այն տարածվել է Արաքսի հովտում՝ մինչև Արարատյան դաշտը, որտեղ գտնվող Մեծամոր հնավայրը նա համարել է Հայասայի մաս⁴⁹, ինչը հետքրքիր է Հայասայի արևելյան սահմանների աշխարհագրական ընդգրկումը բնակելիս:

Ֆ. Հաազը համաձայն էր այն տեսակետի հետ, որ Հայասան առավելապես պետք է գտնվեր Երզնկայի, Տրապիզոնի և Էրզրումի միջև ընկած տարածքում⁵⁰:

Նման տեղադրություն է առաջարկել նաև Զ. Յաքարը՝ նշելով, որ Հայասան գտնվել է խեթական Վերին երկրից (Անդրկայիս Թոքարի և Սերաստիայի մարզերի տարածքը) արևելք՝ ընդգրկելով Երզնկայի, Էրզրումի շրջանները, ինչպես նաև Վերին Գայլ և Ծորոխ գետերի ավազանները: Վերին Գայլի ավազանը նա համարում էր այն վայրը, որտեղ արևելյան կասկական ցեղերը սահմանակցել են Հայասա-Ազգին հետ: Զ. Յաքարը, Հայասայի տեղադրությունը ենթադրելով այդ տարածքները, Հայասայի տեղադրությունը ենթադրելով այդ տարածքները:

⁴⁸ Дьяконов И., Предыстория армянского народа, с. 81-84.

⁴⁹ Mellaart J., Anatolian Trade with Europe and Anatolian Geography and Culture Provinces in the Late Bronze Age, AnSt, 1968, № XVIII, p. 201-202.

⁵⁰ Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands. Xenia, Das Reich Urartu, B.I, 1986, S. 22.

րում, հյուսիսում այն հասցրել է մինչև Սև ծովի ափերը՝ Տրապիզոնի մոտ⁵¹:

Ի տարբերություն հայ պատմագիտության մեջ հայտնված տեսակետների՝ արևմտյան շատ գիտնականներ Հայասայի պատմության անդրադարձել են՝ որպես արևելագիտության մի մասի՝ այն շղիտելով հայոց պատմության տեսանկյունից: Այնինչ Հայասայի պատմության հարցերը կարևոր նշանակություն ունեն հատկապես հայագիտության համար:

Հայ պատմագիտության մեջ առաջինը Հայասայի պատմության հարցերով զբաղվել է հայտնի խեթագետ, Բ. Հրոգնու աշակերտ Ն. Մարտիրոսյանը: Դեռևս 1924թ. նա իր հոդվածներից մեկում հանդես եկավ այն տեսակետով, որի համաձայն՝ խեթական աղբյուրներում հիշատակվող Հայասան (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Խայասան) հայերի հնագույն հայրենիքն էր⁵²: Ավելի ուշ Ն. Մարտիրոսյանը զարգացրեց իր այս տեսակետը՝ հանդես գալով նոր հրապարակումներով⁵³: Նրա կարծիքով Հայասա ասելով՝ պետք է հասկանալ Հայատան, և այն գտնվել է ներկայիս Դերսիմի և Խարբերդի շրջաններում և հանդիսացել է հայերի նախնիների՝ հայաների հայրենիքը՝ հայերի բնօրրանը: Խսկ հայասական ցեղերի միավորումով այնուհետև ստեղծվել է մի պետություն, որն ընդգրկել է Փոքր Հայքը և Բարձր Հայքի հարավ-արևմտյան մասը: Ն. Մարտիրոսյանը հավանական է համարել, որ Հայասայի Արիպսա

⁵¹ Yakar J., Hittite Involvement in Western Anatolia, AnSt, 1976, № 26, p. 117-128 (սեպ. հոդվածում զիտեղված քարտեզը՝ էջ 118). Նույնի, Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an archaeological Assessment.-In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp. Ankara, 1992, p. 508-512. Նույնի, Ethnoarchaeology of Anatolia, Tel Aviv, 2000, p. 28 (սեպ աշխատությունում զետեղված № 4 քարտեզը).

⁵² Մարտիրոսիան Ն., Հայերենի յարաբերությունը հեթիտերենի հետ, ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453:

⁵³ Մարտիրոսյան Ն., «Գիլգամեշ» լուսագններգործությունը, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 75-83: Նույնի, Պրատումներ փորրասիական ամուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 82-107: Նույնի, Նպաստ մը հեր և հայ բառաքննության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 163-186:

քաղաքը գտնվել է Ծոփք լճի ափին կամ Վանա լճի արևմտյան ափիերին: Կումնախսան, ըստ նրա, գտնվել է ներկայիս Կեմախի տեղում և հանդիսացել է Հայասայի սահմանամերձ և զիսավոր քաղաքներից մեկը: Ն. Մարտիրոսյանը նշում է, որ Հայասայի դաշնակցային պետության մեջ են մտել Խոսովա (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ հետագայի Փոքր Ծոփքի տարածքում), Պալա (Ծոփքի Բալահովիտ գավառը), Խշմերիկա (սահմանակից է եղել Խոսովա-Ծոփքին և Ազգին և համապատասխանել է ներկայիս Դերսիմին), Գաշգաշ (Կասկա) (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս ժողովուրդն ապրել է Հայսի ակունքներից մինչև Վերին Եփրատ ընկած տարածքում, և նրա անվանումը մնացել է Ծորոխի ակունքների մոտ գտնվող ներկայիս Կիսկիմ ավանի անվան մեջ) և Ազգի երկրները: Խեթական աղբյուրներում հիշատակված Մալազզիյան (ներկայիս Մալաքիայի մոտ) մերքընդմերը գտնվել է խեթերի, ասորեստանցիների և հայասացիների ձեռքում⁵⁴:

Խարբերդի դաշտն այդ ժամանակաշրջանում մասն է կազմել Հայկական լեռնաշխարհի մեկ այլ պետական կազմավորման՝ Խոսովայի, որը չի մտել Հայասայի կազմի մեջ՝ չնայած չի կարելի բացառել խոսովահայասական դաշնակցային հարաբերությունների գոյուրյունը որոշակի ժամանակահատվածում: Խոսովան և Հայասա-Ազգին խեթերի կողմից տարբերակվել են՝ որպես տարբեր երկրներ: Առավել ևս դժվար է պատկերացնել Հայասայի ամրացված քաղաք Արիասայի տեղորոշումը Խոսովայի (Ծոփքի) տարածքում, կամ Կասկա երկրի և Մալազզիյայի (Մալիյա) գտնվելը Հայասայի կազմում:

Ա. Խաչատրյանն իր ուսումնասիրության մեջ շեշտել է, որ խեթերը Հայաստանի համար ունեին մի ընդհանուր անուն՝ Հայասա, որի աշխարհագրական դիրքը նա որոշել է Կարինից Վան ընկած տարածքում: Արիասա քաղաքը նա տեղադրել է Վանա լճի արևմտյան ափին: Հայասա և Հայաստան քառերի նմանութ-

⁵⁴ Մարտիրոսյան Ն., Պրայտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 93-105:

յունը հիմք ընդունելով՝ Ա. Խաչատրյանը նույնպես շեշտել է, որ այն Հայաստան անվան հնագույն ձևն է⁵⁵:

«Հայաստանի պատմություն» գիտական մեծարժեք մենագրության մեջ Ն. Աղոնցն անդրադարձել է նաև Հայասայի պատմությանը՝ խեթական քավերագրերի վերլուծության հիմքի վրա⁵⁶: Նա նշել է, որ խեթական թագավոր Թուղլսալիյան III-ը Հայասայի դեմ կատարած իր երկրորդ արշավանքի ժամանակ (նրա հետ եր նաև իր որդին՝ Սուպահլուշտումասը) ընդհարվել է նրա թագավորը Կարաննի հետ Կումմախա քաղաքի մոտ: Կարաննի քագավորի անունից Ն. Աղոնցը բխեցրել է հայկական Կարին քաղաքի անվանումը, իսկ Կումմախայից՝ Դարանայաց գավառի Կամախ անունը: Մրա հիմնա վրա էլ նա Հայասան տեղորոշել է Վերին Եփրատի հովտում: Ըստ Ն. Աղոնցի՝ Կամախի հյուսիսում Հայասան սահմանակցել է Կասկա երկրին, որը տարածվել է Արևելապոնտական լեռների շրջանում՝ մինչև Հալիսի գետաքերանը: Նա նաև նշել է, որ Հայասա և Ազգի անունները հոմանիշ են և գործածվել են Մուրսիլսի տարեգրության մեջ նոյն տարածքի իմաստով: Ընդ որում, Ն. Աղոնցը տարանջատել է Հայասա-Ազգի, Ալշի և Իսուվա երկրները՝ գտնելով, որ դրանք առանձին են եղել: Նա Ազգի երկիրը տեղակայել է Դերսիմի շրջանում՝ Կումմախա-Կամախ քաղաքի հարավում: Ազգիի երեք քաղաքները՝ Ինգալավան, Արիպսան, Դուզգաման, նա տեղադրել է Կումմախա տաճող ճանապարհների վրա: Խոտվայի թագավորությունը, ըստ նրա, գտնվել է Հայասայի հարավում՝ ստորին Արածանիի հովտում, և զբաղեցրել է Եփրատի և Խորպոտի միջև ընկած երկրամասը: Ալշի (կամ Ալզի) երկիրն, ըստ Ն. Աղոնցի, գտնվել է Խոտվայից արևելք:

Այսպիսով, ըստ Ն. Աղոնցի՝ Հայասայի թագավորությունը գտնվել է Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ափերին՝ Դերսի-

⁵⁵ Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քմնական պատմություն, Երևան, 1933, էջ 41-48:

⁵⁶ Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 33-47 (թարգմանված 1946թ. հրատարակված ֆրանսերեն թագրից):

մի զանգվածի շուրջը, և Խսովա, Ալշե թագավորությունների հետ միասին ներկայացել է՝ որպես Հայաստանում հայտնի առաջին քաղաքական կազմավորումներից մեկը⁵⁷:

Հայասայի պատմությանը հիմնարար ուսումնասիրություն է նվիրել Գ. Ղափանցյանը: Իր «Հայասան-հայերի բնօրբան» մենագրությունում հեղինակն անդրադարձել է Հայասայի պատմության, լեզվի, տեղադրության, մշակույթի և երնիկական հարցերին⁵⁸:

Իր աշխատության մեջ նա պատկերացում է տվել նաև Հայասայի ընդգրկած տարածքի մասին՝ համամիտ լինելով այն տեսակետին, որ Հայասա երկիրը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը՝ Շորոխ, Եփրատ և Արաք գետերի վերին հոսանքի շրջանները՝ Փոքր Հայքի արևելյան և Բարձր Հայքի տարածքները՝ կենտրոնում դնելով Կամախի, Երզնկայի, Դերջանի և Սպերի միջև ընկած տարածքը: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Ազգին ընդգրկել է Հայասա-Ազգի արևմտյան շրջանները, իսկ Հայասան, հավանաբար, զրավել է արևելյան շրջանները՝ Դարանաղին, Եկեղյացը, Դերջանը և Սպերը, միգուցե նաև՝ Կարինի շրջանը: Այսպիսով, նա, Կումմախան տեղադրել է ներկայիս Կամախի տեղում՝ այն համարելով Հայասա-Ազգին կենտրոնը, իսկ հիշատակված Ուրա բերդը՝ Կամախի մոտ գտնվող հին հայկական Անի ամրոցի տեղում: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Արխասան և Դուգգաման գտնվել են Հայասա-Ազգի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խերական հարձակումներից՝ Կարինի մոտ գտնվող ճահճոտ վայրերում, կամ ներկայիս Բերդակ բնակավայրի մոտ, կամ էլ երգրումից 15կմ հարավ-արևելք, որտեղ միջնադարում (VI-ր.) հիշատակվել է Արարիս գյուղը՝ հնարավոր համարելով, որ այդ բնակավայրի տեղում ճահճի է եղել: Դեռևս հոռմեական ժամանակներից հիշատակվող Ազա քաղաքը (հայոց Սատաղ բնակավայրից արևմուտք), ըստ հեղինակի, հանդիսացել է Ազգի երկ-

⁵⁷ Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 35, 39-40, 44-46:

⁵⁸ Կապանցян Ռ., Խանասա-կոլունել արման, Երևան, 1948.

յանվան վերափոխված ձևը՝ Հայասայի թիրառիզա (Պաքքեյա-
րիկա) քաղաքը գտնվել է հետագայի թթառիճի մոտ:

Հայասան Գ. Ղափանցյանը համարել է հայ-արմենների հնագույն օրրանը, որն արևմուտքում սահմանակցել է խեթական աշխարհի հետ, հավանաբար, հետագայի հոռոմեական Զիմարա-Կարահիսար գծով՝ հարեւան լինելով Վերին երկրին, իսկ արևել-քում նրա սահմանները հասել են մինչև Կարինի շրջանը՝ ընդգր-կելով Կամախի, Երզնկայի, Դերջանի և Սպերի շրջանները: Արևմուտքից արևելք Հայասան տարածվել է մոտ 150-170կմ: Սակայն, ըստ հեղինակի, այն հավակնություններ է ցուցաբերել նաև ավելի արևմուտք և հարավ ընկած տարածքների վրա⁵⁹:

Կունմախս քաղաքը խեթական սկզբնադրյուրներում նշվել է՝ որպես առանձին քաղաքական միավոր, և եթե գտնվել է Հա-
յասայի կազմում, ապա ժամանակավորապես, և հետագայում
անցել է խեթական գերիշխանության տակ: Քիչ հավանական է,
որ այն Հայասայի կենտրոնն է եղել՝ հաշվի առնելով այդ քաղա-
քի աշխարհագրական դիրքը (Խարթիին մոտ գտնվելը) և խեթա-
կան աղբյուրներում այդպիսի տվյալների բացակայությունը:

Ըստ Ե. Քասունու՝ Հայասան մի հզոր պետություն է եղել, որը
տարածվել է Արևմտյան Եփրատի ավազանից մինչև Վանա լիճ: Հայասայի արևմտյան մասում է գտնվել Ազգին, որը ենթակա է եղել Հայասային և ունեցել է իր քաղաքություն: Ազգին գտնվել է
Բարձր Հայքում և իր մեջ է ընդգրկել ներկայիս Երզնկա քաղաքը
և Արևմտյան Եփրատի վերին քաղաքները: Նա կարծիք է հայտնել, որ Ազգին մայրաքաղաքը գտնվել է հետագայի Արծն
քաղաքի տեղում: Ազգի-Հայասայի և Խոստի-Միտաննի պետութ-
յունների միջև են գտնվել Խոտիվա կամ Խոտա, Ալշե և Սեխիրի
երկրները: Ըստ Ե. Քասունու՝ Հայասայի հյուսիս-արևմուտքում
գտնվել է Կասկա երկիրը, որը Փոքր Հայքից տարածվել է մինչև
Պափլագոնիա: Իսկ Հայասային մոտ գտնվող խեթերի Վերին
երկիրն, ըստ հեղինակի, ընդգրկել է հետագա Փոքր Հայքի մեծ

⁵⁹ Կապանյան Ռ., Խայասա-կոլյաբել արման, Երևան, 1948, ս. 58-64.

մասը՝ Կապադովկիայի որոշ շրջաններով հանդերձ: Կումախսակամ Կամուխսա քաղաքը Ե. Քասունին համարել է Հայասայի քաղաքներից մեկը և նոյնպես տեղորոշել է Անի-Կամախսի տեղում: Սուրափիխսի տարեգրության մեջ հիշատակված Ինգալավա քաղաքը նա տեղորոշել է միջնադարյան Անգեղ բերդի տեղում, իսկ Արիպսա քաղաքը՝ Վանա լճի ափին՝ Դատվանի կամ Խոլաքի մոտ: Նա համակարծիք չէ այն հեղինակների հետ, որոնք Հայասայի Դուգգամա քաղաքը տեղադրել են Դատվանի մոտ: Նա այդ քաղաքը տեղորոշել է Մանազկերտի մոտ և հավանական է համարել, որ այն հանդիսացել է պետության մայրաքաղաքը: Ազգի Խալիմանա բնակավայրը նա տեղորոշել է Ծոփքում՝ Խալիմբանո բնակավայրի տեղում⁶⁰:

Այսպիսով, Ե. Քասունին նոյնպես Հայասան տեղադրել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում՝ միևնույն ժամանակ կարծիք հայտնելով, որ իր հզորացման ժամանակ այն, հավանաբար, տարածվել է մինչև «Մասիս սար և Ուրմիա լիճ»⁶¹: Մակարական Հայասա-Ազգի կենտրոնների տեղորոշումը հետազայի Արծնի և Մանազկերտի մոտ ոչ մի փաստով հիմնավորված չէ: Առավել հավանական է որպես մայրաքաղաք նշել Խեթական տերքստերից հայտնի Հայասա քաղաքը, որի տեղադրությունը, փաստերի սույն լինելու պատճառով, անհնար է որոշել:

Հայասային վերաբերող հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել նաև Հ. Մանանյանը, որի մոտեցումները Հայասայի պատմության առանցքային շատ հարցերին տարբերվել են իր ժամանակակից շատ պատմաբանների տեսակետներից⁶²: Անդրադառնալով Հայասա-Ազգի քագավորության պատմությանը՝ նա տվել է նաև դրա տեղադրությունը Վանա լճից

⁶⁰ Ն. Աղոնցը դեռևս 1946 թ. իր աշխատության մեջ Խալիմանա քաղաքի անունը համեմատել էր Ծոփքի Խալիմբանու տեղամասի հետ (Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 44):

⁶¹ Քասունի Ե., Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950, էջ 76-78, 80-81, 91, 94, 97, 99, 102-106:

⁶² Մանադյան Յ., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 68-155.

արևմուտք և հյուսիս ընկած շրջաններում: Նա գտնում էր, որ Հայասայի հյուսիս-արևմտյան սահմանները հասնում էին մինչև Մնձուրի լեռները, այսինքն՝ մինչև Երկայիս Դերսինի շրջանը, իսկ արևելքում՝ մինչև Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը: Հ. Մանանյանը խերական արձանագրություններում նշված Կումմախան կամ Կամուխան նույնացրել է հայկական Կամախի հետ (Դարանայաց գավառում), սակայն ի տարբերություն մյուս ուսումնասիրողների, որոնք նշել են, որ այդ քնակավայրը Հայասայի կազմում է գտնվել, նա այն չի մտցրել Հայսա-Ազգի կազմի մեջ: Կումմախան և նրանից հարավ գտնվող Տամկուվան, ըստ նրա, գտնվել են խերերին պատկանող սահմանամերձ շրջանում, որն ընդգրկվել էր խերական արձանագրությունների հիշատակած Վերին Երկրի կազմում: Խերերի Վերին Երկիրն, ըստ Հ. Մանանյանի, Հայսա-Ազգին սահմանակցել է ոչ թե արևմուտքից, այլ հյուսիսից և հյուսիս-արևմուտքից: Ուսումնասիրողների մեջ առաջինը Հ. Մանանյանն էր, որ տարբեր աղբյուրներում հիշատակված Ալշի, Ալզի և Ազզի անվանումները միևնույն երկրին է վերագրել, իսկ պետությունն, ըստ նրա, կոչվել է Հայսա իր մայրաքաղաքի անվամբ (Հայսա), որը Ասորեստանի արքա Սարգոն II-ի արձանագրության մեջ հիշատակվել է Ուայախ ձևով (ըստ Հ. Մանանյանի՝ այդ քաղաքը գտնվում էր Վանա լճի հյուսիսային ափին): Ազզի անունն, ըստ նրա, ունեցել է Երնիկական ծագում, որն սկզբնապես կրել է տեղի ժողովուրդը: Հ. Մանանյանը Հայսային հարևան կասկերի ցեղերի քնակության հիմնական տարածքը համարել է ոչ թե Սև ծովի հարավային ափերը, այլ Վերին Եփրատից արևմուտք՝ ներկայիս Դիլիջանի (միջնադարյան Տեֆրիկե) և Արարեկի քաղաքների շրջանները: Նա Հայսայի Ուրա ամրոցը տեղորոշել է հետագայի Խարբերդ քնակավայրի տեղում, որից արևմուտք գտնվել է Խոսկա Երկիրը (իին հայկական Անձիտ գավառը), որը նույնպես, ըստ նրա, մտել է Հայսայի կազմի մեջ և հանդիսացել է նրա հարավ-արևմտյան սահմանամերձ շրջանը՝ Եփրատ գետով բաժանվելով հարևան

Մելիտենեից: Ըստ Հ. Մանանյանի՝ խեթական արձանագրության մեջ հիշատակված Խնգալավան հին հայկական Անդր քնակավայրն է և Ուրա ամրոցի հետ մտել է Հայասայի կազմի մեջ: Հ. Մանանյանն Ազգի Արիպսա քաղաքը տեղորոշել է Վանա լճի ափին, սակայն չի ճեղ Մուրսիլիսի տարեգրությունում Արիպսայից հետո հիշատակված Դուզգանա քաղաքի գտնվելու վայրը⁶³:

Հ. Մանանյանի աշխատության մեջ նշված Ալգի և Ազգի երկրանունների նույնացումը պատմագրության մեջ չի ընդունվել, քանզի Ալգիի տեղադրությունը Խոսկայից (Ծոփքից) հարավ-արևելք հենակում է ինչպես խեթական, այնպես էլ ասորեստանյան տերստերի վկայությունների և հետագայի հայկական Աղճիքի հետ համադրման վրա:

Հայասայի պատմությանը, ինչպես նաև նրա պատմագրության, տեղադրության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների խնդիրներին անդրադարձել է Լ. Բարսեղյանը: Նա շեշտել է, որ Հայասան և Ազգին թե՛ տարածքային, թե՛ քաղաքական առումով իրենցից ներկայացրել են միևնույն երկիրը: Հայասայի կենտրոնը՝ համանուն Հայասա քաղաքը, նա որոնել է Երզնկայի շրջանում՝ Խայիք կամ Խայեր գյուղի տեղում, որը գտնվում է Բարերդից 40կմ հարավ-արևմուտք: Խսկ Ազգին տարածվել է Մնձուրի լեռների ստորոտներից մինչև Տուժիկի լեռները: Այն գտնվել է Հայասայից հարավ՝ մինչև Խոսկայի սահմանները, որը Լ. Բարսեղյանը համարել է Հայասա-Ազգի կազմի մեջ մտնող երկիրը: Նա Դուզգանա քաղաքը տեղադրել է Խոսկայում (ներկայիս Խարբերդի շրջանում): Դուզգանայից ոչ շատ հեռու գտնվող Արիպսան նույնպես գտնվել է Խոսկայում՝ Խարբերդից ոչ հեռու գտնվող Ծոփք լճի (ներկայիս Գյոլջուկ) ափին և հանդիսացել է Հայասա-Ազգի ամրացված բնակավայրերից մեկը՝ նրա հարավային սահմանի վրա: Խսկ Խնգալավա քաղաքը, որտեղից Արիպսա քաղաքի դեմ արշավել է խեթական Մուրսիլիս

⁶³ Մանանյան Յ., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 68-155.

Ա թագավորը, Լ. Բարսեղյանը տեղորշել է հայկական աղբյուրներից հայտնի Անգեղտուն գավառում, որը գտնվել է Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում: Ըստ նրա՝ այստեղ հայտնի է եղել Ակլ գյուղը, որի տեղում գտնվել է Ինգալավա քաղաքը: Այսպիսով, Լ. Բարսեղյանը Հայասա-Ազգին հիմնականում տեղորշել է Բարձր Հայրում և Փոքր Հայրում՝ նրա հարավային սահմաններն անցկացնելով պատմական Ծոփք նահանգով⁶⁴:

Խոսված գտնվել է խեթական պետության արտաքին քաղաքականության ոլորտում և նշվել՝ որպես Հայկական լեռնաշխարհի ազդեցիկ երկրներից մեկը: Եթե Արիասան գտնվեր Խոսովայի հարավում, ապա այդ դեպքում այն ամրողապես պետք է մտներ Հայասա-Ազգի կազմի մեջ, ինչի հետ դժվար է համաձայնել, սակայն չբացառելով նաև Խոսովայի և Հայասայի քաղաքական և մշակութային կապերը:

Հայասայի պատմությանն է անդրադարձել նաև Ս. Երեմյանը: Նա նշել է, որ հայ ժողովրդի ծևավորման ընթացքն անցել է չորս հիմնական փուլ, և դրանցից յուրաքանչյուրը կապված էր պատմական Հայաստանի տարածքի չորս կենտրոնների հետ՝ Բարձր Հայք, Ծոփք, Վանա լճի ավագան և Արարատյան դաշտ: Ամենահին և հիմնական օդակներից մեկն այս գործընթացում հանդիսացել է Հայասա-Ազգի ցեղային միությունը: Այն խեթական արձանագրություններում անվանվել է «Հայասա (կամ Խայասա) քաղաքի երկիր» կամ «Ազգի քաղաքի երկիր»՝ իր քաղաքային կենտրոնների անուններով: Ս. Երեմյանը Թիլ-Հայասա քաղաքը տեղադրել է հին հայկական Թիլ ավանի տեղում: Այս տեղորշումը տալով՝ նա հանգել է այն մտքին, որ Հայասա երկրի կորիգը և նրա սկզբնական

⁶⁴ Բարսեղյան Լ., Խայասա-Ազգի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջ. ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 307-313: Նոյնի, Իz истории древнейших племенных союзов Армянского нагорья в XV-XIII вв. до н.э. (Хайаса-Аззи), Ереван, 1964, Նոյնի, Հայասա-Ազգի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, ՏՀԳ, 1964, թիվ 6, էջ 101-106: Նոյնի, Հայասա-Ազգի ուազա-քաղաքական պատմությունից, ՏՀԳ, 1964, թիվ 7, էջ 73-79:

տարածքը եղել է հին հայկական Եկեղյաց գավառը՝ անտիկ դարաշրջանի Ակիլիսեննեն, որը և համապատասխանել է Երզնկայի դաշտին: Թիլ ավանը տեղադրված է եղել այդ դաշտի կենտրոն Երիգա (Երզնկա) քաղաքից ոչ հեռու, որի տեղում գտնվել է Հայասա երկրի մյուս կենտրոնը՝ Ազգի քաղաքը: Ս. Երեմյանը համաձայն չէր այն վարկածների հետ, որ Հայասա-Ազգի երկիրը գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք ընկած տարածքներում կամ Սև ծովի մերձադրնտոսյան ափերին: Նա համաձայն էր Ն. Աղբանցի այն եզրակացության հետ, որ Արիպսա քաղաքը պետք է տեղադրել ներկայիս Դենիզլի գյուղի տեղում՝ Դիվրիդի քաղաքից ոչ հեռու: Դենիզլի գյուղը գտնվել է ծահճոտ վայրում, որտեղ, հավանաբար, նախկինում լիճ էր եղել, որի մասին է վկայում նաև Գյոլդաղ լեռան անունը, որը նշանակում է «Լճի լեռ»: Ս. Երեմյանը Արիպսայի հետ հիշատակված Դուգգամա քաղաքը տեղադրել է ներկայիս Դոգան գյուղի տեղում, որն, ըստ նրա, անտիկ Դագոնան է: Այս բնակավայրերից քացի՝ խեթական աղբյուրները Հայասա երկրում հիշատակել են Ուրան՝ «Հայասա երկրի գլխավոր ամրոցը», որի տեղադրման հարցում Ս. Երեմյանը համակարծիք է Գ. Ղափանցյանի հետ, որն այն տեղադրել է Երզնկայի դաշտում: Ս. Երեմյանը գտնում է, որ այդ ժամանակաշրջանում պետք է գյություն ունեցած լիներ նաև հին հայկական Դարանադի գավառի ամրոց-քաղաքը Եփրատի ափին՝ Anniasca անվան տակ, որը կապ է ունեցել Հայասայի Աննիյա քագավորի անվան հետ: Հեղինակը նշում է, որ Երզնկայի դաշտի խոնջոր կենտրոններից է եղել Բիթարիգա քաղաքը, ներկայումս՝ Բրաոիծ, որն այլ կերպ կոչվել է Պարքեյարիկա, որի անունը երբեմն վերագրվել է ողջ Հայասա-Ազգի երկրին: Ըստ Ս. Երեմյանի՝ բուն Հայասա-Ազգին հյուսիսում սահմանակցել է Բալա (Պալա, Գալ) գետի վերին հոսանքի շրջանը) և Դումանա (անտիկ Դոմանայի, հետագայի թուման գյուղի շրջանը՝ Բաբերդից արևմուտք, ճորոխ գետի հովտում) ցեղերի երկրներին:

Այսպիսով, Ս. Երեմյանը եզրակացնում է, որ Հայաստան-Ազգին տարածվել է Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքներում⁶⁵:

Իր մի շաբթ աշխատանքներում Հայաստանի պատմությանն է անդրադարձել նաև Վ. Խաչատրյանը՝ իր ուսումնասիրություններն ամփոփելով «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում» աշխատության մեջ⁶⁶: Նա նոյնպես նշել է, որ Հայաստան հաճախ հանդես է գալիս Ազգի անվամբ: Հայաստան-Ազգի երկրի մեջ են գտնվել Խնգալավա, Արիպսա, Դուզգամա, Ուրա քաղաքները: Խնգալավա քաղաքը հեղինակը նոյնացրել է Շորոխ գետի ստորին հովտում գտնվող հայկական Նիգալ գավառի հետ՝ իր համանուն կենտրոնով: Արիպսան գտնվել է Շորոխ գետի միջին ավագանում՝ Սպերից թիջ դեպի հյուսիս-արևելք: Դուզգամա քաղաքը տեղադրվել է միջնադարի Ազորդ գավառում: Այս գավառի անվան մեջ, ըստ Վ. Խաչատրյանի, պահպանվել է Ազգի երկրի անունը: Հայաստան-Ազգին ընկած է եղել Շորոխ գետի ավագանում՝ ճգվելով մինչև Սև ծով: Այն հարավում սահմանակցել է Բարձր երկրին (ըստ հեղինակի՝ Երզնկայի և Երզրումի շրջաններ): Բարձր երկրի մեջ մտել են Խատենա, Խախանի և Խստինա գավառները: Խատենան իր Կումմախսա քաղաքով, որը հետագայի Կամախն է, գտնվել է Եփրատի հովտում՝ ոլորանից մինչև Երզնկայի շրջանը: Խսկ Երզնկայի շրջանը Խախանին է եղել՝ Խախա (հայկ. Խախ), Դանկուվա (միջնադարի Մթնի, ներկայիս՝ Միտինի) և Բիտեյարիզա (հայկ. Բրայառիճ) քաղաքներով: Խստինան, ըստ նրա, ընկած է եղել Երզնկայի շրջանից անմիջապես դեպի արևելք՝ մինչև Եփրատի ակունքները: Խստինա գավառի բնակավայրերից են եղել Զազիսան, որն Երզրումի շրջանի Զազան է: Խսկ Խստինայի Արծիյա քաղաքը միջնադարի հայկական Արծնն է: Այդ շրջանում է գտնվել նաև Խալմանա բնակավայրը, որը Վ. Խաչատրյանը հակված է նոյնացնելու միջնադարի Մանյա այրը տեղանվան հետ: Կանուվա-

⁶⁵ Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ըմբացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 29-33:

⁶⁶ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998:

բա բնակավայրը գտնվել է Խստիտինայի տարածքում: Վ. Խաչատրյանն առաջարկել է այն նույնացնել Կարինի շրջանի միջնադարի հայկական Կան բնակավայրի հետ: Նա համարում է, որ Հայասա երկրի մեջ է մտել նաև Բարձր կոչված նահանգը (Կումմախա քաղաքի շրջանը): Հաջորդ երկիրը, որը նոյնացնել է Հայասայի կազմի մեջ, Պախսուվան է իր Արխիտա քաղաքով. այն հեղինակը նոյնացրել է ժամանակակից Պախ բնակավայրի հետ: Այն գտնվել է Բյուրակնի լեռների արևմտյան մասում: Հայասայի կազմի մեջ, ըստ նրա, մտել է նաև Խոտիվան (Արածանի գետի ստորին ավազանը): Տարածաշրջանի հաջորդ վարչադարձական միավորը, որը Վ. Խաչատրյանի կարծիքով Հայասայի կազմի մեջ է մտել, Ծովսաման է: Նա այն նոյնացրել է ասորեստանյան արձանագրություններում վկայված Ծովսմու (Սուխսմու) երկրի հետ, որը գտնվել է Բյուրակնի լեռների արևելյան հատվածում:

Վ. Խաչատրյանը նշել է, որ Հայասա քագավորության սահմանները ոչ միշտ են ընդգրկել նշված բոլոր նահանգները, քանի որ նրանցից մի քանիսը մերընդմերը նվաճել են խերական քագավորների կողմից և մտել Խերական պետության կազմի մեջ: Հայասան հարավից սահմանակից է եղել Տիգրիսի վերին ավագանի Ալզիյա (հայկ. Աղձնիք), իսկ հյուսիս-արևելքում՝ Կասկա երկրին (Արևելապոնտական լեռների շրջան):

Այսպիսով, ըստ Վ. Խաչատրյանի, Հայասա երկիրն ընդգրկել է Ազգի, Կումմախա (Բարձր), Խոտիվա, Պախսուվա և Ծովսմա նահանգները և զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը՝ Հայկական Տավրոսի, Արևմտյան Եփրատ գետի և Սև ծովի միջև⁶⁷:

Հայասային և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի մյուս քաղաքական միավորներին վերաբերող սեպագիր աղբ-

⁶⁷ Խաչատրյան Բ., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 128-145. Նոյնի, Խայасцы, ВОН, 1972, № 8, с. 32-35. Նոյնի, Խայаса и Наури, ВОН, 1973, № 11, с. 32-41. Նոյնի, Հայасտанը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 34-38:

յուրների համակողմանի վերլուծությամբ կարևոր են Ա. Քոյսյանի հեղինակած աշխատությունները: Դրանք առանձնանում են նաև նորահայտ սկզբնադրյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խարքի հարաբերությունների նորովի մեկնարանություններով: Կարևոր է նաև ընդգծել նրա՝ 2004թ. հրատարակած «Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)» մենագրությունը⁶⁸:

Նա նույնպես Հայասա-Ազգին տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտատրում Վերին Եփրատի ավազանում: Արևմտատրից այն ասհմանակցել է Վերին երկրին, որն ընդգրկել է Հայսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած շրջանը: Ա. Քոյսյանը խեթական արձանագրություններից հայտնի Կումմախան նույնպես նույնացրել է ժամանակակից Կեմախի (հայկ. Անի-Կամախ) հետ: Սակայն ի տարբերություն ուսումնասիրողների մեծ մասի՝ նա Կումմախան համարել է առանձին քաղաքական միավոր, որը չի մտել Հայասայի կազմի մեջ և գտնվել է վերիննեփրատյան տարածաշրջանի երկու առաջատար քաղաքական միավորների՝ Հայասա-Ազգիի և Խսուփայի անմիջական մերձակցությամբ: Ըստ Ա. Քոյսյանի՝ մինչ այդ անհայտ Լիտտա, Տավատենա, Ուտկունիա, Խուդրու, Պարտանտա, Իյանինա, Լալատտա, Տախանիսարա, Ուկսու քաղաքները, հավանարար, գտնվել են Հայասայում⁶⁹:

Այսպիսով, ուսումնասիրողների հիմնավորումները Հայասա-Ազգիի պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ որոշակի առումով տարբեր են: Ընդհանրացնելով խմբը առարկա թեմային նվիրված մասնագետների աշխատությունները՝ մենք փորձեցինք ներկայացնել պատմագիտության մեջ եղած տարբեր կար-

⁶⁸ Քոյսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004:

⁶⁹ Քոյսյան Ա., Մ. թարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 71, 72, 84: Նույնի, Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 236-240: Նույնի, Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեսքստերում, ՍՍԱՀԾ, 2003, XXII, էջ 254-259: Նույնի. Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 54, 58, 69, 79, 84, 93, 100, 101, 157:

ծիրները, որոնք, ըստ պատմաաշխարհագրական բովանդակության, կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա) Հայասա-Ազգին գտնվել է Վերին Եփրատի, Վերին Գայլի և Շորոխի ավազաններում՝ ընդգրկելով Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքները (Ն. Մարտիրոսյան (Հայասա-Ազգին դաշնակցային պետության մեջ է ընդգրկել նաև Ծոփքի տարածքը), Ա. Գյորգեն, Է. Կավեճյակ, Ֆ. Հաազ, Զ. Յարար, Ն. Աղոնց, Գ. Ղափանցյան, Լ. Թարսեղյան (Հայասա-Ազգին հիմնականում տեղորոշել է Բարձր Հայքում, սակայն նրա մեջ ընդգրկել է նաև Ծոփքի տարածքը), Ս. Երեմյան, Ա. Քոսյան),

բ) Հայասա-Ազգին գտնվել է Սև ծովի ափերին և հիմնականում տեղորոշվել է Հայկական լեռնաշխարհից դուրս (այս սկզբնապես Սև ծովի հարավ-արևելյան ափերին էր տեղորոշել նաև Ա. Գյորգեն, այնուհետև նա վերանայել է իր այդ տեսակետը: Ֆ. Կոռնելիոսը տեղորոշել է Հայասա-Ազգին Սև ծովի ափին գտնվող ներկային Սամսոն քաղաքի մոտ: Ի. Դյակոնովը նույնապես առաջարկել է Հայասա-Ազգին տեղադրել Սև ծովի ափերին՝ Խարշիտ գետի ավազանում, սակայն նրա հարավային սահմանները հասցը է մինչև Շորոխի ավազանը),

գ) Հայասա-Ազգին գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք և ընդգրկել Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը (Է. Ֆոռեր, Յ. Ֆրիդրիխ (առաջարկել է Հայասան տեղադրել Արևելապնտական լեռների և Վերին Տիգրիսի ակունքների միջև), Ա. Խաչատրյան, Հ. Մամանյան, Ե. Քասունի (կարծիք է հայտնել, որ իր հզորացնան ժամանակ Հայասա-Ազգին տարածվել է մինչև Ուրմիա լիճը), Վ. Խաչատրյան (նշել է, որ Հայասա-Ազգին ընկած է եղել Հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Սև ծովի միջև), Զ. Մելլապուտ (Հայասա-Ազգին տեղորոշել է Բարձր Հայքից մինչև Արարատյան դաշտավայր ընկած տարածքում)):

Քննելով մասնագետների կարծիքները Հայասա-Ազգին պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ՝ կարելի է ասել, որ այն գտնվել է Հայկական լեռնաշխարհում և արևմուտքից

սահմանակից է եղել Խեթական տերությանը: Պատմաբանների մեծ մասը համարում է, որ Հայասա-Ազզին գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմում՝ Կենտրոն Աշելով հիմնականում Բարձր Հայքի տարածքը: Սակայն ակնհայտ է նաև, որ Հայասա-Ազզի տարածքի մասին խեթական սկզբնադրյուրներում տվյալներ կան այնքանով, որքանով խեթերը կարողացել են ներքափառներ Հայկական լեռնաշխարհի խորքերը: Մասնագետներն առավել հստակ ցույց են տվել Հայասայի հատկապես արևմտյան սահմանները, որոնք անցնում էին հիմնականում պատմական Փոքր Հայքի կամ Բարձր Հայքի տարածքով, որտեղ Հայասա-Ազզին սահմանակցել է Խաթթիի հետ, իսկ Արևելապնտական լեռներով՝ կասկական ցեղերի հետ: «Ծովի մեջ գտնվող» Արիպսա քաղաքը հարկավոր չէ Սև ծովի ափին վնատել, քանզի A.AB.BA⁷⁰ գաղափարագիրը նշանակել է նաև լիճ, որը մեծ հավանականությամբ կարող էր լինել Վանա լիճը:

Բնական է, որ ժամանակին Հայասան, քացի արևմտյան հարևանից (Խեթական պետություն), ունեցել է որոշակի կապեր նաև հարավային և արևելյան երկրների հետ: Սակայն դրանց մասին որևէ գրավոր աղբյուր առաջմն հայտնի չէ, ինչն անհնար է դարձնում որոշել Հայասա-Ազզի պետության ընդգրկած տարածքները Հայկական լեռնաշխարհի արևելյում ու հարավում:

⁷⁰ Friedrich J., Hethitisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 104.

ՀԱՅԱՍՏԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև ներկայացված ցանկում տրված են Հայասայի՝ խեթական աղբյուրներից հայտնի տեղանունները (KUR-երկիր, URU-քաղաք, ԽUR.SAG-լեռ): Ցանկում ներառված են Հայասայի կազմում գտնվող տեղանունները, ինչպես նաև անուններ, որոնց հայասական պատկանելությունը ենթադրվում է:

1. Ազզի (KUR^{URU}Az-zi, KUR Az-zi, ^{URU}Az-zi, KUR^{URU}A-a-z-i)⁷¹

Խեթական աղբյուրների հաղորդած վկայությունները ցույց են տալիս, որ թե՛ քաղաքական, թե՛ տարածքային առումով Հայասան և Ազզին իրենցից ներկայացնում էին միևնույն երկիրը: Այս համանմանությունն ակնհայտորեն երևում է խեթական թագավոր Մուրսիլս II-ի տարեգորության մեջ, եթե հիշատակվում է, թե ինչպես խեթական զորքերի հրամանատար Նուվանցան հաղթեց Ազզի երկրի մարդկանց Կաննուվարա քաղաքի մոտ: Նոյն տարեգորության մեկ այլ տեղում խեթական թագավորն արձանագրել է, որ Նուվանցան Կաննուվարայի մոտ հաղթել է Հայասա երկրի մարդկանց⁷²: Այս համանմանությունը առաջին անգամ նկատել է Ե. Ֆոռերը⁷³: Գոյություն ունի նաև Մուրսիլս II-ի մեկ այլ տեքստ (KUB XIV 4), որտեղ խեթական արքան նորից միևնույն երկրի մասին նշում է կամ Հայասա, կամ Ազզի⁷⁴:

Ամենայն հավանականությամբ, Ազզի անվամբ քաղաք գոյություն չի ունեցել՝ չնայած խեթական սկզբնադրյուրներում Ազ-

⁷¹ Ազզի անվանաձևը գրվում է նաև Ազի ձևով. հավանական է համարվում, որ երկու շտաբերի հաջորդականությունը այս անվան մեջ կարելի է գրել նաև մեկ տառով (RGTC, VI, S. 59; RGTC, VI/2, S. 19):

⁷² KBo IV 4 II. KBo III 4 IV (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 122-123).

⁷³ Forrer E., Hajasa-Azzi, Caucasica, 1931, № 9, S. 4.

⁷⁴ Քոյսան Ա., Մուրսիլս II-ի հայասական արշավանքները. ՊԲՀ, 2004, թիվ 2, էջ 199-200 (տես՝ հավելված 12):

զի երկրանունը բազմիցս նշվել է նաև «քաղաք, բնակավայր» շումերերն զաղափարագրով (URU)⁷⁵:

Ուսումնասիրողներից շատերն Ազգին տարածատել են Հայասայից՝ այն համարելով ինքնուրույն միավոր, ու տարբեր տեղադրություններ են առաջարկել (մերձպնտական շրջանում, ճորոխի ավագանում և այլուր)⁷⁶: Ըստ Գ. Ղափանցյանի՝ Ազգի անունը պահպանվել էր Փոքր Հայքում՝ Անտոնինոս կայսեր երթուղում հիշատակվող Aza (Ազա) քաղաքի անվան մեջ⁷⁷: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Ազգի անունը պահպանվել է ճորոխի ավագանի կենտրոնում գտնվող միջնադարի հայկական Ազորդ գավառի անվան մեջ⁷⁸: Ա. Քոսյանն Ազգին Հայասա-Ազգին՝ Խաքքին սահմանակից շրջանն է համարում և ենթադրել է, որ Հայասա և Ազգի տերմիններով բնորոշվող տարածքն իրենից ներկայացրել է էքսոլեզվական կապերով միմյանց հետ սերտորեն կապված երկու ցեղային միավորների միություն⁷⁹:

Հաշվի առնելով վերը նշված փաստը (Հայասայի համանանությունը Ազգին հետ)՝ կարելի է շեշտել, որ Ազգին ընդգրկել է նույն տարածքը, որը Հայասան:

2. Արիասա (^{URU}A-ri-ip-ša-a, ^{URU}A-ri-ip-ša-a-an, ^{URU}A-ri-ip-ša-aš)⁸⁰

Արիասա քաղաքը հիշատակվել է Մուրսիլիս II-ի տարեգրության մեջ՝ որպես Հայասա-Ազգի ամրացված քաղաքներից մեկը: Խեթական արքան Հայասայի դեմ կատարած արշավանքի

⁷⁵ Ն. Մարտիրոսյանը հավանական է համարել, որ Ազգի երկրանունը առաջացել է հայերենի ագ-, ազմ «ցեղ, սերունդ, տոհմ, գերդաստան» բառից (Մարտիրոսյան Ն., Նապաստ մը հեր և հայ քառարենության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 171):

⁷⁶ Cornelius F., Neue Arbeiten zur hethitischen Geographie, Anatolica, 1967, № 1, S. 68. Դյակոնով Ի., Պредыстория армянского народа, Ереван, 1968, с. 83.

⁷⁷ ИЛР, 1, с. 43-46.

⁷⁸ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 35:

⁷⁹ Քոսյան Ա. Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 45: Նոյնին, Հայասան և Ազգին, Ծնորի ի վերուստ, 2008, էջ 288:

⁸⁰ RGTC, VI, S. 37.

ընթացքում գրավել է Արիասան, որն, ըստ տարեգրության՝ «ծովի մեջ էր գտնվում»⁸¹:

Խեթական բնագրում Արիասայի տեղադրության այսպիսի նկարագրությունն առաջ է բերել տարբեր կարծիքներ: Ուստի նասիրողների մի մասը Հայասա-Ազգին տեղորոշել է Սև ծովի ափերին՝ ելնելով այն տեսակետից, որ Արիասան գտնվել է Վերոնշյալ ծովի ափերին: Սակայն է. Ֆոռերն Արիասան տեղադրել է Վաճա լճի արևմտյան ափին՝ Կըզգան-դաղ կոչվող վայրում⁸²: Իսկ Ն. Ալոնցն այն համարում է Եփրատի ջրերից գոյացած ճահիճների մեջ գտնվող մի բերդ, որը գտնվել է Եփրատի և նրա վտակ Արարկիր գետակի միացման կետում գոյություն ունեցող Դենիզլու բնակավայրի տեղում⁸³: Գ. Ղափանցյանը կարծում է, որ Արիասան և Դուզգաման գտնվել են Հայասա-Ազգի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խեթական հարձակումներից՝ Կարիճ-Երզրումի մոտ գտնվող ճահճոտ վայրերում՝ կա'ն Բերդակ բնակավայրի մոտ, կա'ն Երզրումից 15կմ հարավ-արևելք, որտեղ միջնադարում (VI-դ.) հիշատակվել է Արաբես(ոս) (Արարիս) գյուղը՝ հնարավոր համարելով, որ այդ բնակավայրի տեղում ճահիճ է եղել⁸⁴: Լ. Բարսեղյանն Արիասա քաղաքը տեղորոշել է Ծոփիք Ծոփ լճի ափին⁸⁵: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Արիասան հետագայի Արար-կալե բերդն է՝ Սաբերից հյուսիս-արևելք՝ ճորոխի ափին: Նա ստուգաբանել է Արիասա անունը հայերենի առ՝ «կողքին, առջև» նախդիրով և ափ արմատով⁸⁶: Ա. Քոսյանը նույնապես հավանական է համարել Արիասան տեղադրել Երզրումի շրջանում՝ ճահճացած լճի կամ Թորքումի լճի մոտ⁸⁷:

⁸¹ KBo IV 4 IV 5 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 132-133).

⁸² Forrer E., Hajasa-Azzi, S. 18.

⁸³ Ալոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 46:

⁸⁴ ИЛР, 1, с. 56, 59.

⁸⁵ Բարսեղյան Լ., Խայասա-Ազգին ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 311:

⁸⁶ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 35, 44:

⁸⁷ Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 39:

Արիպսայի տեղադրման հարցում զգալի պարզություն կարող է մտցնել Դուգամա քաղաքի տեղորոշումը, որը հիշատակվել է նշված տարեգրության մեջ: Այն խեթական արքան զրավել է Արիպսայի նվաճումից հետո: Դուգաման չեր կարող մեծ հեռավորության վրա գտնվել Արիպսայից: Այն հիշատակվել է նաև «Պախսուվացի Միտայի» տեքստում, որն ակտիվ մասնակցություն է հանդես բերել տարածաշրջանում (Հայկական լեռնաշխարհի արևմտյան մաս) ծավալված ուազմաքաղաքական գործընթացներին⁸⁸: Ըստ այդմ՝ կարելի է Արիպսան տեղորոշել այնտեղ գտնվող որևէ ջրային տարածքի (ամենայն հավանականությամբ, լճի) ափին: Հավանական է, որ Մուրսիլիս II-ն իր կառավարման 10-րդ տարվա արշավանքի ժամանակ հայտնվել էր Վանա լճի ավագանում, որտեղ և գտնվել էր Արիպսա քաղաքը⁸⁹:

3. Արխիտա (^{URU}Ar-hi-ta, ^{URU}A-ar-hi-i-ta, ^{URU}E-cr-hi-ta)⁹⁰

«Պախսուվացի Միտայի» տեքստում հիշատակված են Հայկական լեռնաշխարհի մի շարք երկրներ⁹¹: Հայասան անվանապես չի հիշատակվել, սակայն տեքստում հանդես են զայիս որոշ քաղաքներ, որոնք հետագայում խեթական սկզբնադրյուրներում նշվել են՝ որպես Հայասա-Ազգի բնակավայրեր: Համաձայն վերոնշյալ տեքստի՝ Պախսուվայի հակախեթական գործունեության շրջանում այդ երկրի դաշնակիցը Արխիտան է եղել:

Է. Ֆոռերն առաջինն էր, որ Արխիտա քաղաքանունը նույնացրեց Երխիտայի հետ⁹²: Գ. Ղափանցյանը շեշտել է, որ քաղաքի անունն առաջացել է խեթ. arha-«սահման» բառից, և հավանական է համարել, որ քաղաքի անունը նշանակել է «սահմա-

⁸⁸ KUB XXIII 72 (Քոսյան Ա., Նոր նյութեր Խեթական տեղության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխարարերությունների մասին, ՄՍԱՆԺ, 2001, XX, էջ 240-242).

⁸⁹ Ղազարյան Ռ., Հայասա-Ազգի տեղադրության հարցի շուրջ (ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության), Մերձավոր Արևելք, 2005, էջ 37-38:

⁹⁰ RGTC, VI, S. 31.

⁹¹ KUB XXIII 72.

⁹² Forrer E., Hajasa-Azzi, S. 8.

նային»⁹³: Վ. Խաչատրյանը նույնպես նշել է, որ Արխիտա քաղաքի անունը խերերեն արի «սահման» քառի գործիական հոլովածեն է, և քաղաքը տեղորոշել է պատմական Հաշտյանք գավառի Երիզա (հայ. Երեք «եզր») ավանի տեղում⁹⁴:

Այս քաղաքը հիշատակվել է նաև խերահայասկան պայմանագրի վերջում տրված աստվածների ցուցակում⁹⁵: Հայասայի աստվածների շարքում հիշատակվում է «Արխիտա քաղաքի Ամպրոյի աստվածը» (^DU tak-ša-an-na-aš ^{URU}Ar-hi-ta)⁹⁶: Այս վկայության հիման վրա կարելի է նշել, որ Արխիտան հանդիսացել է Հայասայի պաշտամունքային կենտրոններից մեկը: Այն հիշատակված է նաև Խերական տերության հյուսիս-արևելյան շրջանների և վերիննեփրատյան երկրների առանձին բնակավայրերի ցանկում, որտեղ նշված է տվյալ վայրերից հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների մասին: Տեղանկան սկզբում ա-ե/ի հերթագայությունը լորջ խոչընդոտ չէ, քանի որ ցուցակում Արխիտան տրված է Երիտա անվանածուվ (^{URU}Erhita = ^{URU}Arhita): Խերական տերության հյուսիս-արևելյան և արևելյան շրջաններին հայող երկրների շարքում Արխիտա քաղաքը (^{URU}Erhita ձևով) վկայված է Սալա քաղաքից հետո՝ Լիտտա և Տեմիյա քաղաքներից առաջ⁹⁷: Ա. Քոսյանն այս քաղաքը տեղորոշել է Կումմախայի և Պախսուվայի հարևանությամբ⁹⁸:

⁹³ ИЛР, 1, с. 60 (հեռում 1).

⁹⁴ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 44:

⁹⁵ Այս պայմանագրը կնքվել է կամ Խարքի արքա Թուղթավիյան III-ի և Հայասայի արքա Կարաննիի միջև (Թ.ա. XIVդ. I կես) (Forrer E., Hajasa-Azzi, S. 5), կամ Սուպալիլումաս I-ի և Խուկանայի միջև (Թ.ա. XIVդ. կեսեր) (Խաչատրյան Յ., Վօտօնինք պրովինիա Հետթեկոյ իմպերի, Երևան, 1971, ս. 148), (Хачатрян В., Восточныес провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 148), կամ Սուրսիյս II-ի և Աննիայի միջև (Թ.ա. XIVդ. II կես) (Carruba O., Die կամ Սուրսիյս II-ի և Աննիայի միջև (Թ.ա. XIVդ. II կես) (Carruba O., Die Hajasa-Verträge Hattis, Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 59-75), Hajasa-Verträge Hattis, Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 59-75), Hajasa-Verträge Hattis, Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 59-75), սակայն վերջնականապես հարցը չի պարզվել, և պայմանագրի այդ հատվածը մնացել է շրջապահված:

⁹⁶ KUB XXVI 39 I 32 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

⁹⁷ KUB XXVI 62 IV 34 (Քոսյան Ա., Նոր սեղանաններ Խերական սեպագիր տերստերում, ՄՊԱԾ, 2003, XXII, էջ 256).

⁹⁸ Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները. էջ 37:

Ինչպես Երևում է, Արխիտան գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, որտեղ էլ ծավալվել են «Պախսուփացի Միտայի» տեքստում հիշատակված իրադարձությունները:

4. Արնիյա (^{ՈՐՈ}Ar-ni-ya)

Հայասայի Արնիյա քաղաքը նույնպես հիշատակվել է խեթահայասական վերոհիշյալ պայմանագրի վերջում՝ Հայասայի աստվածների ցուցակում, որտեղ հիշատակվել է «Արնիյա քաղաքի Ամպրոպի աստվածը» (^{ՈՒ} ^{ՈՐՈ}Ar-ni-ya)⁹⁹: Արնիյա քաղաքը Հայասա-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկն էր: Է. Ֆոռերն այն համեմատել է Ք.ա. 714թ. Սարգոնյան տարեգրությունում հիշատակված Արմարիլ նահանգի Արնիյա քաղաքի հետ, կամ հին հայոց Առնի քաղաքի հետ՝ Վանա լճի հյուսիսային ափին¹⁰⁰: Ըստ Գ. Զահոռլյանի՝ այս տեղանկան հիմքում ընդիանուր փոքրասիական Ար-հիմքն է, իսկ ըստ Վ. Խաչատրյանի՝ Արնիյա բնակավայրը Սպերի Առնուն է, որի մեջ առկա է հայերենի հնդեվրոպական ծագմամբ առն «վայրի խոյ» արմատը¹⁰¹:

Ալյուրների՝ ներկայումս հայտնի տվյալները հնարավորություն չեն ընձեռում Արնիյայի համար որևէ հստակ տեղադրություն առաջարկել:

5. Գազու[...] (^{ՈՐՈ}Ga-zu-ú[?])

Այս քաղաքը նույնպես հիշատակվել է վերոհիշյալ խեթահայասական պայմանագրում: Այն Հայասա-Ազգիում Ունազատաւա աստծո պաշտամունքի կենտրոններից մեկն էր (^{ՈՒ}-na-ga-as-ta-aš ^{ՈՐՈ}Ga-zu-ú(-)[-])¹⁰²:

Ըստ Գ. Ղափանցյանի՝ Գազու քաղաքի անվանումը կարելի է համեմատել կասկական Գազզապա (Gazzapa) քաղաքի հետ

⁹⁹ KUB XXVI 39 I 29 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

¹⁰⁰ Forrer E., Hajasa-Azzi, S. 8.

¹⁰¹ Զահոռլյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1987, էջ 339: Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 44:

¹⁰² KUB XXVI 39 I 31 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

կամ Պոնտոսի Գաղղիուրա ամրոցի հետ (հոռմեական ժամանակաշրջանում)¹⁰³: Հ. Մանանյանի կարծիքով Գագու քաղաքն իր անվամբ և տեղադրությամբ համապատասխանել է Անդրկայիս Հազոր բնակավայրին (Բիթլիսից 60կմ հարավ-արևմուտք)¹⁰⁴: Վ. Խաչատրյանը հավանական է համարել, որ այս քաղաքը հայերեն կոչվել է Գագ և իր հիմքում ունեցել է հայերեն գագ՝ «արցան» արմատը և այդպես է կոչվել տեղի բնական պաշտպանվածության հետևանքով¹⁰⁵:

Սակայն բնակավայրի անունը տրված է թերի, քանզի բարի Վերջում տրված սեպանշանը (Կամ սեպանշանները) չի ընթերցվում, և դժվար է կարծիք կազմել, թե ինչպես է այն հնչել և արդյոք ունեցել է հայերեն բառարմատ: Առավել ևս դժվար է պնդել, որ քաղաքն այդպես է կոչվել բնական պաշտպանվածության պատճառով:

Նյութի սղությունն ու քաղաքանվան այս եզակի հիշատակությունը բույլ չեն տալիս առաջարկել որևէ հստակ տեղադրություն:

6. Գասմիյախա (^{ՈՐՈ}Ga-aš-mi-ya-ḥa)

Հայաստ-Ազգիի պաշտամունքային կենտրոններից Գասմիյախան նշված է միայն Հայաստանի աստվածների ցուցակում: Այն համենք է գալիս՝ որպես [...] իս-իս-ս աստծո պաշտամունքի վայր¹⁰⁶: Գասմիյախայի հայաստան այս աստծո անունից պահպանվել են միայն վերջին երեք սեպանշանները (-իս-իս-ս)¹⁰⁷:

¹⁰³ ИЛР, 1, с. 46, (հղում 2).

¹⁰⁴ Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 103.

¹⁰⁵ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 43:

¹⁰⁶ KUB XXVI 39 I 34 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6). Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս քաղաքը համապատասխանում է Կասմա բնակավայրին՝ Տիվոլիի և Շինկյանի միջև՝ Զինարայի մոտ (Մարտիրոսյան Ն., Պրպտումներ Վորքարայիական ամուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 98):

¹⁰⁷ Ըստ Գ. Ղափանցյանի՝ այս աստծո անունը պետք է հնչեր՝ որպես Կարխստու (կամ Կարխստոն) կա կա-ար քացակայող մասի ավելացման դեպքում (ИЛР, 1, с. 95):

Աղբյուրների սակավ տվյալները հնարավորություն չեն ընձեռում Գասմիյախա քաղաքի համար առաջարկել որևէ տեղադրություն:

7. Դուզգամա (^{URU}Du-ug-ga-am-ma-na, ^{URU}Du-ug-ga-ma, ^{URU}Du-ug-ga-a-ma, ^{URU}Du-uq-qa-am-ma, ^{URU}Du-uk-kam-ma-an, ^{URU}Du-uk-ka-ma-an, ^{URU}Du-uk-ka-am-ma-an)¹⁰⁸

Հայասա-Ազգի այս նշանակալի քաղաքը հիշատակվել է «Պախսուվացի Միտայի» տեքստում, Մուրսիլիս II-ի տարեգրություններում, Խաքքուսիլիս III-ի «Ինքնակենսագրությունում», ինչպես նաև խեթահայասական պայմանագրի տեքստում, որտեղ տրվել են Հայասայի պաշտամունքային կենտրոնները:

«Պախսուվացի Միտայի» տեքստում Դուզգամայից Ախսին հանդես է զայիս՝ որպես Պախսուվացի հետագա հավատարմության երաշխավոր: Այսպիսով, Դուզգաման՝ որպես քաղաք, գոյություն է ունեցել դեռևս Առնուվանդաս I-ի օրոր (Ք.ա. XIV դարի I կես) և խեթերի կողմից դիտվել է՝ որպես դաշնակից քաղաք¹⁰⁹:

Մուրսիլիս II-ն իր տարեգրություններում նշել է, որ արշավելով դեպի Հայասա՝ գրավել է Արիսսա և Դուզգամա քաղաքները: Խեթական գործը գրավել է Դուզգաման Արիսսան նվաճելոց հետո, ուստի, ինչպես վերը նշվեց, այս քաղաքները մոտ են գտնվել իրար¹¹⁰:

Հայասայի աստվածների շարքում հիշատակվում է «Դուզգամայի Բալթախկ աստվածը» (^DBa-al-ta-ik ^{URU}Du-ug-ga-am-ma-na)¹¹¹: Այս վկայության հիմնան վրա դժվար չէ ենթադրել, որ Դուզգաման հանդիսացել է Հայասայի ոչ միայն քաղաքական, այլ նաև պաշտամունքային կենտրոններից մեկը:

¹⁰⁸ RGTC, VI, S. 435-436.

¹⁰⁹ Թույան Ա., Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, էջ 240-242:

¹¹⁰ Götze A., Die Annalen des Muršiliš, S. 132-137.

¹¹¹ KUB XXVI 39 I 32-33 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

Մասմագիտական գրականության մեջ փորձ է արվել տեղողական գրադարձը. այն համեմատվել է Փոքր Հայքի անտիկ Դագոնայի հետ¹¹², Վանա լճի ափին գտնվող Դատվանի հետ¹¹³, Մանազկերտի հետ (Ե. Քասունին կարծիք է հայտնել, որ այն Հայասայի մայրաքաղաքն է եղել)¹¹⁴ և այլն: Վ. Խաչատրյանը գտնում է, որ այդ տեղանվան մեջ առկա է -ama(r) (-awar) բայիհմբերից գոյական կազմող խեթական ածանցը, որը բառերի տրական հոլովածնում դառնում է -amana: Դուգաման, ըստ Վ. Խաչատրյանի, Թորքումի շրջանի պատմական Հայ գյուղի անվան խեթերեն թարգմանությունն է (հայել «ոռեսնել»)¹¹⁵: Ա. Քոսյանն առավել հավանական է համարել քաղաքի մոտավոր տեղադրությունը Երզնկայից հյուսիս կամ հյուսիս-արևելք¹¹⁶:

Հաշվի առնելով այն, որ Դուգաման խեթական տեքստերում հիշատակվել է ավելի վաղ, քան Հայասան, կարելի է ենթադրել, որ այն սկզբնապես առանձին քաղաքական միավոր է համայնշացել, որը կապեր է ունեցել Լեռնաշխարհի մյուս երկրների և Խաթթիի հետ: Հետազայում այն կամ միավորվել, կամ ընդգրկվել է հզորացած Հայասա-Ազգի կազմում:

Նշենք, որ Դուգամայի տեղադրությունը պետք է պայմանավորված լինի Արիպսայի տեղադրությամբ:

8. Իյանինա (^{ՈՐՈՒ}I-ya-ni-in-na)

Այս քաղաքը նշվել է Հայասայի Ուրա սահմանային քաղաքի մոտ գտնվող բնակավայրերի ցուցակում¹¹⁷: Սակայն մասնագետների մի մասը հակված է տեքստում հիշատակված Ուրա քաղաքը նույնացնել Դաշտային Կիլիկիայի համանուն քաղաքի

¹¹² Այսոց Ն., Հայաստանի պատմություն, էջ 45: Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 31:

¹¹³ Forrer E., Hajasa-Azzi, S. 19-20.

¹¹⁴ Քասունի Ե., Խախահայկական Հայաստան, Պէյրուր, 1950, էջ 104:

¹¹⁵ Խաչատրյան, Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 35, 44:

¹¹⁶ Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 99:

¹¹⁷ KUB XXVI 29+KUB XXXI 55 (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 58).

հետ (տե՛ս Ուրա քաղաքի մասին հատվածը): Ցուցակում բացի Իյանինայից հիշատակվել են նաև ^{URU}Ukšu, [...] -u, [?] -x-x-ri -u, [...] -t/š]ata, [...] -mitta, ^{URU}Huddu, [...] -i]sta, ^{URU}Lalatta բնակավայրերը¹¹⁸:

Ուրային մոտ գտնվելը հնարյավորություն է ընձեռում այս բնակավայրը տեղորոշել Կումմախայից արևելք՝ հետագայի Եկեղյաց գավառում:

9. Ինգալավա (^{URU}In-ga-la-wa)

Ինգալավա քաղաքը հիշատակվում է միայն Մուրսիլիս II-ի «Տասնամյա տարեգրությունում»: Տասներորդ տարվա տարեգրության մեջ նկարագրվել է արշավանքը դեպի Հայաստ-Ազգի: Ծարժվելով դեպի Ազգի Մուրսիլիս II-ն իր բանակի զորատեսն անցկացրել է Ինգալավա քաղաքում.

57. ma-aḥ-ḥa-an-ma ḥa-me-eš-ḥa-an-za ki-ša-at nu *I-NA* KUR
^{URU}Az-zi

58. da-a-an KAS-ši nam-ma pa-a-un nu-za *I-NA* ^{URU}In-ga-la-wa

59. *A-NA* ÉRIN ^{MEŠ} ANŠU.KUR.RA ^{BIA} ú-w-a-tar i-ya-nu-un...¹¹⁹

«Հենց որ զարունը բացվեց, դեպի Ազգի երկիր երկրորդ անգամ ճանապարհ ընկա և Ինգալավա քաղաքում հետևազորի և մարտակառերի զորատես անցկացրի...»:

Այնուհետև խեթական արքան գրավել է Հայաստ-Ազգի Արիստա և Դուզզամա քաղաքները:

Պատմագրության մեջ կարծիք է հայտնվել, որ Ինգալավան Հայաստ-Ազգի քաղաքներից մեկն է եղել և գտնվել է հին հայկական Անգեղ տուն գավառում: Առաջարկվել են նաև այլ տե-

¹¹⁸ Kammenhuber A., Keilschrifttexte aus Boğazköy (KBo XVI), Orientalia, 1970, № 39, 4, S. 557. Քոյսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տնդանունները, էջ 116-117:

¹¹⁹ KBo IV 4 III 57-59=2Bo TU 58 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 130-131).

ղաղորություններ: Է. Ֆոռերն Ինգալավան փնտրել է Անգեղ տուն գավառի Անգդ ամրոցի տեղում, սակայն նշել է, որ այն չի գտնվել Հայասայի կազմում՝ շրացառելով նաև, որ Ինգալավան կարող էր գտնվել նաև Վերին Եփրատի հովտում¹²⁰: Գ. Ղափանցյանը հմարավոր է համարում, որ Ինգալավան մինչև արշավանքի սկիզբն արդեն Հայասա-Ազգից գրավվել էր¹²¹: Զ. Գարստանցի և Օ. Գրնիի աշխատության մեջ Ինգալավան տեղորոշվել է Գայլ (Լյուկոս) գետի հովտում գտնվող անտիկ Մեծալուսա քաղաքի տեղում¹²²: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Ինգալավան Ծոփի Անգեղ տեղանունն է (հետագայի Ալլ)¹²³: Ըստ Ս. Երեմյանի՝ Հայասայի Ինգալավա-Թարիխզամա քաղաքը գտնվել է հետագայի Թորդանի տեղում¹²⁴: Ն. Աղոնցն Ինգալավա քաղաքը փնտրել է Կումմախա տաճող ուղիների վրա՝ Եփրատի արևմտյան ափին¹²⁵: Հ. Մանանդյանը համաձայնել է Է. Ֆոռերի այն տեսակետի հետ, որ Ինգալավան հետագայի Ինգիլենն է՝ իին հայկական Անգեղ տունը, ներկայիս Եգիլը: Այդ քաղաքն, ըստ Հ. Մանանդյանի, Հայասա-Ազգի բնակավայրերից է եղել և նվաճվել է խերերի կողմից¹²⁶: Վ. Խաչատրյանն Ինգալավան համեմատել է Շորոխի ստորին հովտի հայկական Նիգալ գավառի համանուն Կենտրոնի հետ՝ գտնելով, որ հայասական այդ քաղաքի անունը կազմված է հայերենի հնդեվրոպական նիգ՝ «դրան ետևի սողնակ», և ալ-ը՝ «փորք, խորոնկ տեղ», արմատներից: Խերերն, ըստ նրա, այդ անվան «ի» հնչյունը դրափոխել են՝ ավելացնելով իրենց լեզվի -awa(r) ածանըը¹²⁷: Ըստ Ա. Քու-

¹²⁰ Forrer E., Hajasa-Azzi, S. 13-14.

¹²¹ ИЛР, I, с. 54.

¹²² Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 39.

¹²³ Մարտիրոսյան Ն., Պրատումներ փոքրասիական անուններու մասին, էջ 90-91:

¹²⁴ Երեմյան Ս., Հայ ժողովողի կազմավորման ընթացքը, էջ 31:

¹²⁵ Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 45:

¹²⁶ Մանանդյան Յ., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 99:

¹²⁷ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 34, 42-43:

յանի՝ Ինգալավան կարող էր գտնվել կամ Հայասային սահմանակից տարածքում, կամ հենց Հայասայի սահմանամերձ որևէ շրջանում¹²⁸:

Հարկ է նշել, որ Մուրսիլիսի տարեգրությունում չի հիշատակվել, որ նա անցել է Եփրատ գետը և առաջացել Խուլվայի տարածքով, եթե ընդունենք, որ Ինգալավան գտնվել է Անգեղ տուն զավառում: Տերսուից կարելի է եղրահանգել, որ քաղաքն, ամենայն հավանականությամբ, գտնվել է հայասա-խեթական սահմանային գոտում:

Ըստ այդմ՝ քաղաքի տեղադրությունը կարելի է առաջարկել Վերին Եփրատի ավազանում, որտեղից ճանապարհ էր քացվում դեպի Հայասա-Ազգի պետության խորքերը:

10. Լալատոտա (^{URU}La-la-at-ta)

Այս տեղանունը հիշատակվել է Հայասայի սահմանամերձ Ուրա քաղաքի մոտ գտնվող բնակավայրերից ցուցակում¹²⁹: Ուրան Հայասայի տարածքում գտնվող կարևոր վարչաքաղաքական միավորներից մեկն էր: Անմիջապես սահմանակից լինելով խեթական տարածքներին՝ այն տեղորոշվել է հետագայի Եկեղյաց զավառի տարածքում, որտեղ և գտնվել է Լալատոտա բնակավայրը:

11. Լախսա (^{HUR.SAG}La-ḥa-a)¹³⁰

Լախսա լեռնանունը հենադես է գալիս խեթական արքա Սուպիլլուլիումաս I-ի արձանագրությունում.

22. ... ar-ḥa wa-ar-nu]-ut ^{URU}Zu-uḥ-ḥa-pa-an-ma-kán URU-an
23. [ḥu-u-ma-an-da-an ar-ḥ]a wa-ar-nu-ut NAM.RA^{MES}-ma-kán
24. *I-N]A* ^{URU}Ha-ya-ša i-ya-at-ta-at
25.]x-at na-an *IŠ-[T]U* ^{HUR.SAG}La-ḥa-a

¹²⁸ Թոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 110:

¹²⁹ KUB XXVI 29,6 (Թոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 69, 117).

¹³⁰ Gonnet H., Les montagnes d'Asie Mineure d'après les textes Hittites, 1968, p.110.

«...այրեց Ծովսապա քաղաքը, ամբողջովին քաղաքն այրեց, փախստականները... դեպի Հայաստան գնացին... և նրան Լախան լեռներից...»¹³¹:

Խեթական քանակն արշավաճրի ժամանակ ներխուժել էր հ-սուվա, այնուհետև ու ուզմերքը շարունակելով՝ հասել էր Ծովսապա երկիրը: Այն նվաճելուց հետո խեթական արքան շարժվել էր դեպի Հայաստան:

Ծովսապան Խոսովայի հարեւանությամբ էր և սահմանակից եր նաև Հայաստանին, որտեղ և գտնվել են Լախան լեռները (կամ լեռը): Հավանաբար, այս լեռները Խոսովայից հյուսիս-արևելք են գտնվել: Վ. Խաչատրյանը կարծիք է հայտնել, որ Լախան լեռները են ներկայիս Բյուրակնյա կամ Հայկական Պար լեռներն են¹³², որի հետ դժվար է շիամաձայնել, քանզի արշավաճրի երքուսին բույլ է տալիս այդպիսի եզրահանգման գալ: Այդ տեղորոշմամբ որոշակիորեն հստակեցվում է նաև Հայաստան-Ազգի տարածվելը մինչև Հայկական լեռնաշխարհի այդ հատվածը:

12. Լախիրխիլա (^{ՈՐՈ} La-hi-ir-hi-la)

Այս քաղաքի մասին հիշատակություն է պահպանվել է KUB XXVI 39 I տեքստում, որտեղ Լախիրխիլան ներկայացվել է՝ որպես [...]ս/թ]անուս աստծո պաշտամունքի վայր ([^թ...-š/t]a-an-ուս-ս ^{ՈՐՈ} La-hi-ir-hi-la)¹³³: Հայաստան բնակավայրերի շարքում այն նշվել է երրորդը և հանդիսացել է Հայաստան-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկը:

¹³¹ KUB XXXIV 23 I 25 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, 3, p. 83).

¹³² Խաչատրյան Բ., Восточные провинции Хеттской империи, с. 141. Նույնի, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 58:

¹³³ KUB XXVI 39 I 28 (Forster E., Խայսա-Ազզի, S. 6). Վ. Խաչատրյանն այս աստծո անունը վերականգնել է՝ որպես [Iz-zi-iš-t]a-an-ուս-ս (Խաչատրյան Բ., Восточные провинции Хеттской империи, с. 148): Գ. Ղափանցյանն առաջարկել է Լախիրխիլա քաղաքի անունը բարզմանել՝ որպես «Լախիրի հյուպ» (ИЛР, 1, с. 60 (հյում 1)):

Դժվար է Լախիրխիլա քաղաքի համար որևէ հատուկ տեղադրություն առաջարկել, քանի որ նյութը շատ սուր է, և որևէ այլ տեքստում այս քաղաքանունը չի հիշատակվել: Որևէ կովան չկա տեղադրության համար:

13. Լիտտա (^{URU}Li-it-ta)¹³⁴

Հիշատակվել է Խերական տերության հյուսիս-արևելյան շրջան-ներից և վերիմեծփրատյան երկրների առանձին բնակավայրերից հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների ցուցակի տեքստում: Պայմանագրի տեքստում ներկայացվել են հինգ տեղանուններ հետևյալ հաջորդականությամբ՝ ^{URU}Ha-x-[....], ^{URU}Sa-a-la, ^{URU}E-er-ji-ta, ^{URU}Li-it-ta, ^{URU}Te-mi-ya: Լիտտա քաղաքը ցուցակում տրվել է Հայասայի Արխիտուա (տեքստում տրվել է Երիխուտա ձևով) և Տեմիյա (որը, թերևս, նույն է, ինչ այլ տեքստերից հայտնի Տիմիյան, ժամանակակից Զիմինը՝ Երգմկայից քիչ հարավարևելք) քաղաքների միջև¹³⁵: Ա. Քոսյանն այս քաղաքը հնարավոր է համարում տեղորոշել հոռոմեական աղբյուրներում վկայված Olotoedariza (տարօնքերցումներից մեկը՝ Lytararizon, գտնվել է Նիկոպոլիսից Սատող ճանապարհի վրա) բնակավայրի տեղում¹³⁶:

Լիտտա քաղաքն, ըստ երևույթին, գտնվել է Վերին Եփրատի ավազանում, ներկայիս Զիմին քաղաքից արևելք՝ Հայասա-Ազգի սահմանային արևմտյան նաստում:

14. Խալիմանա (^{URU}Ha-li-ma-na-a)

Հայասական այս քաղաքը հիշատակվում է Մուրսիլիսի տարբերությունում: Իր արշավանքի ընթացքում գրավելով Հայասա-Ազգի Արիասա և Դուզգանա քաղաքները՝ Մուրսիլս II-ը վերադառնում է Խաթթի, սակայն հաջորդ տարի՝ իր քաջավորության

¹³⁴ Ertem H., Coğrafya Adları Dizini, Ankara, 1973, s. 87. RGTC, VI, S. 249.

¹³⁵ KUB XXVI 62 IV 35 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ խերական սեպագիր տեքստերում, էջ 256).

¹³⁶ Քոսյան Ա., Խերական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատճական աշխարհագրության խննիլները, ՍՄԱԾԺ, 2004, XXIII, էջ 276:

տասնմեկերորդ տարում, նա կրկին արշավում է Հայասա այնտեղ խեթական գերիշխանությունն ամրապնդելու համար: Հայասայի բնակիչները խեթական արքային ընդառաջ են ուղարկում Խալիմանա քաղաքից Մուտտիին: Նրան հաջողվում է բանակցությունների միջոցով բոյլ շտալ, որպեսզի խեթական արքան կրկին ներխուժի Հայասա-Ազգի¹³⁷:

Ն. Աղոնցն այս քաղաքանունը համեմատել է Ծոփի Խալիմբանայ բնակավայրի հետ¹³⁸: Նման տեղադրությունը Ծոփի բնակում է արտաքին որոշ նմանության վրա, ինչը դժվարեցնում է այդ տեսակետի հիմնավորումը: Գ. Ղափանցյանը կարծիք է հայտնել, որ Մուտտին կարող էր հաճդես զալ նաև՝ որպես Հայասա-Ազգի քագավոր, որը փոխարինել էր խեթերից պարտություն կրած Աննիյային¹³⁹: Եթե այդ կարծիքը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ Խալիմանան այդ ժամանակ հանդիսացել է Հայասա-Ազգի քաղաքական կենտրոնը:

Սակայն նյութի սղությունը բոյլ չի տալիս առաջարկել որևէ կոնկրետ տեղադրություն Խալիմանա քաղաքի համար:

15. Խարսալասա ([^{URU}ՀԱ]R-ša-la-aš-ša-an, ^{URU}ՀԱR-ša-la-aš-ši)

Խարսալասա քաղաքանունը հիշատակվել է երկու անգամ՝ ինվենտարային և գուշակային խեթական տեքստերում: Ինվենտարային տեքստում հիշատակվել է իսաք կոչվող սրբավարում պահվող ^{URU}Հարշալաշի քաղաքի Ամպրոպի աստծո արձանը, իսկ գուշակային տեքստի նպատակն է եղել պարզել Հայասա-Ազգի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվող) արշավանքի ընթացքը¹⁴⁰: Հնարավոր է նաև, որ ^{URU}ՀԱR-ša-la-aš-ši-ն նույնական չէ [^{URU}ՀԱ]R-ša-la-aš-ša-an բնակավայրի հետ¹⁴¹:

¹³⁷ KBo IV 4 IV (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 138-141).

¹³⁸ Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 44:

¹³⁹ ИЛР, 1, с. 74.

¹⁴⁰ RGTC, VI, S. 90. RGTC, VII/2, S. 32 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 254-255).

¹⁴¹ Քոսյան Ա., Հայկական լունաշխարի տեղանունները, էջ 54:

Այս քաղաքը գտնվել է Հայասայի սահմանային Ուրա քաղաքի մոտ, այսինքն՝ Ազգի Խաթրիին սահմանակից շրջանում:

16. Խուդրու (^{ՈՐՈ}Խս-սծ-սւ)

Խեթական տեքստում հիշատակվել է՝ որպես Ուրա քաղաքի մոտ գտնվող բնակավայրերից մեկը: Տեքստն իրենից ներկացնում է «միջին խեթական փուլի» (Ք.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) պայմանագիր՝ կնքված Ուրա քաղաքի հետ¹⁴²: Ամենայն հավանականությամբ, գտնվել է Հայասա-Ազգի արևմտյան՝ սահմանամերձ շրջանում:

17. Կամ... (^{ՈՐՈ}Կամ [...])

Այս քաղաքանունը հանդիպում է հայասական աստվածների ցուցակում: Այն հանդիսացել է Տարումոս աստծո պաշտամունքի վայրը (^ՊՏա-ա-րս-ս-տու-ս ^{ՈՐՈ}Կամ-[...])¹⁴³: Քաղաքի անվան մեջ պակասում են մի քանի սեպանշաններ, ինչը դժվարություն է ստեղծում տեղանունն ամբողջովին վերականգնելու համար:

Այս քաղաքը նույնացվել է խեթական սկզբնադրյութներից հայտնի Կումմախայի (KUR ^{ՈՐՈ}Կումմահա)՝ հետագայի Կամախի հետ: Ն. Ալյոնցն այս թերի տեղանունը վերականգնել է Կամ(սիհ)¹⁴⁴: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ խեթական արձանագրություններում պահպանված Կումմախան Եերկայիս Քենախն է՝ պատմական Դարանայաց գավառի Կամախը: Նա համարել է, որ այդ քաղաքը հանդիսացել է Հայասա-Ազգի սահմանամերձ և զիսավոր քաղաքներից մեկը¹⁴⁵: Հ. Մանանդյանն այս տեղանունը համեմատել է Եփրատյան Կամախի հետ, սակայն նշել է նաև Քիրլիսից 8կմ հեռու գտնվող Ժամանակակից Կամախ գյուղը՝ որպես այդ բնակավայրի հավանական տեղադրություններից մեկը¹⁴⁶:

¹⁴² KUB XXVI 29+KUB XXXI 55 (Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 58, 117).

¹⁴³ KUB XXVI 39 I 29 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

¹⁴⁴ Ալյոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 46:

¹⁴⁵ Մարտիրոսյան Ն., Պրապումներ փորբախական անուններու մասին, էջ 94-95:

¹⁴⁶ Մանանդյան Յ., Օ ոեկոտորիք սպորական պրօբլեման իշտության և գեոգրաֆիան

Եթե ^{URU}Կամ [...] քաղաքանունը հնարավոր է վերականգնել՝ որպես ^{URU}Կոմմահա, ապա կարելի է ենթադրել, որ Կումմախա քաղաքը պայմանագրի կնքման պահին գտնվել է Հայասայի կազմում:

Դեռևս Թուղխալիյաս III-ի հայասական արշավանքի ընթացքում Կումմախայի մոտ հանդիպել էին խեթական և հայասական զորքերը:

42. nu ma-ah-ḥa-an *A-BI A-BI-YA I-NA KUR* ^{URU}Ha[-ya-ša a]-ar[-aš(?)]

43. nu-uš-ši ^mKar(?) -an-ni-iš *LUGAL KUR* ^{URU}Ha-ya-ša[...]

44. /*ŠA-PAJL*(?) ^{URU}Kum-ma-ḥa za-ah-ḥi-y[a...]

«Եթե պապս Հայասա երկիր եկավ, նրան Կարաննիմ՝ Հայասայի արքան ... Կումմախայի տակ ճակատամարտ...»¹⁴⁷:

Արձանագրությունը կազմել է տվել Մուրսիլիս II-ը՝ նշելով, որ իր պապը՝ Թուղխալիյաս III-ը, շարժվել է Հայասա և այնուն Կումմախա քաղաքի մոտ հանդիպել է Հայասայի Կարաննի արքայի զորքերի հետ և ճակատամարտ տվել: Հետագայում քաղաքի զորից անցել է խեթական գերիշխանության ներքո և նշվել է՝ որպես առանձին քաղաքական միավոր¹⁴⁸:

Սակայն այս տեղանվան ընթերցումը և առաջարկված տեղորոշումները խիստ պայմանական են:

18. Հայասա (*KUR* ^{URU}Ha-ya-ša, *KUR* ^{URU}Ha-a-ya-ša, *KUR* ^{URU}Ha-ya-ša-za, ^{URU}Ha-a-ya-ša, ^{URU}Ha-ya-ša-aš, ^{URU}Ha-a-ya-ša-an, ^{URU}Ha-ya-ša-an, ^{URU}Ha-ya-ša, ^{URU}Ha-ya-ša-az, ^{URU}Ha-i-ya-ša)¹⁴⁹

древней Армении, с. 76.

¹⁴⁷ Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2, p. 66.

¹⁴⁸ Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B. C.), p. 75. Քոսյան Ա., Անի-Կամմախը խեթական դարաշրջանում, Պահ, 2002, թիվ 3, էջ 225-241:

¹⁴⁹ RGTC, VI, S. 63-64. RGTC, VI/2, S. 22.

Ք.ա. XIV-XIII դդ. խեթական սկզբնադրյուրներում հիշատակվել է Հայասա երկիրը, որը երբեմն հանդես է գալիս Ազգի անվանք: Արձանագրություններում Հայասան գրվել է և' որպես երկրանուն, և' որպես քաղաքանուն: Խեթական սեպագիր աղբյուրներում URU «քաղաք, քնակավայր» շումերերն գաղափարագիրը դրվել է նաև որոշ երկրների անունների առջևից. մինչդեռ այդ երկրներում համանուն քաղաքներ չեն եղել: Սակայն, ամենայն հավանականությամբ, Հայասա-Ազգիում Հայասա անվամբ քաղաք գոյություն է ունեցել և հանդիսացել է քաջավորության քաղաքական և պաշտամունքային կենտրոնը:

Խեթական սեպագիր տեքստերում տվյալներ չկան այն մասին, որ խեթական արքաներից որևէ մեկի օրոք Հայասա քաղաքը նվաճվել է, չնայած նրանք քազմից ներխուժել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքը հեռու է մնացել խեթական գորքերի արշավանքների երթուղիներից: Ամենայն հավանականությամբ, երկրի մայրաքաղաքը գտնվել է առավել անվտանգ և անհասանելի արևելյան շրջաններում: Խեթահայասական պայմանագրի Վերջում տրված աստվածների ցուցակում հայասական քաղաքների շարքում առաջինը հիշատակվել է Հայասա քաղաքը՝ որպես երկրի գլխավոր աստվածության պաշտամունքի կենտրոն¹⁵⁰:

Հայասա տեղանունը նաևնազետների մեծ մասի կարծիքով հայ ցեղանվան վկայությունն է Ք.ա. II հազարամյակում: Առաջին անգամ Ն. Մարտիրոսյանը հայտնեց այն կարծիքը, որ Հայասան հայ ազգի հնագույն հայրենիքն է Եղել, իսկ Հայասայի քնակիչները հայերի նախնիներն են հանդիսացել: Նա նշել է նաև, որ Հայասա երկրանունը (իր մոտ տրված է Խայաշա ձևով) կազմված է Հայա դիցանունից և «սա» խեթական մասնիկից: Այսինքն՝ Հայասա անունն, ըստ նրա, նշանակում է Հայայի երկիր¹⁵¹: Կ. Ռոբն,

¹⁵⁰ KUB XXVI 39 I 26 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

¹⁵¹ Մարտիրոսյան Ն., Հայերենի յարաքերությունը հեթիղերենի հետ, ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453: Նույնի, «Գլուզամնշ» ոյուցազներգությունը, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 79 (տես հոդված 1):

այնուինուն Պ. Կրեշմերը նույնպես ցույց են տվել, որ Հայասա երկիրը նույնն է, ինչ որ Հայքը կամ Հայաստանը¹⁵²: Գ. Ղափանցյանը Խայեր (Քարերդից հարավ-արևմուտք) բնակավայրի անունը բխեցնում է Հայասա տեղանունից¹⁵³: Ս. Երեմյանը Թիլ-Հայասա քաղաքը տեղադրել է իին հայկական թիլ ավանի տեղում (Երզնկայից ոչ հեռու):¹⁵⁴ Հ. Մանանյանը նշել է, որ երկիրը Հայասա է կոչվել իր մայրաքաղաքի անվանք (Հայասա), որը Սարգսն Ա-ի արձանագրությունում հիշատակված է եղել Ուայիս ճևով և գտնվել է Վանա լճի հյուսիսային ափին¹⁵⁵: Վ. Խաչատրյանն ավելի հիմնավոր կերպով ապացուցել է, որ Հայասա տեղանվան հիմքում հայ էքնոնիմն է ընկած: Ըստ նրա՝ խեթերը օտար արձատին, որը հարևան ժողովրդի իմքնանունն է, ավելացրել են իրենց ածանցը (-աշա):¹⁵⁶

Մենք համամիտ ենք այս կարծիքի հետ և գտնում ենք, որ խեթական Հա-ya-ša տեղանունը ծագում է տեղական հայ ցեղանունից:

19. Պախխուտեյա (^{ՈՐՈՒ}Pa-aհ-իս-ս-տե-յա)

Այս բնակավայրը նույնպես հիշատակվել է KUB XXVI 39 I տեքստում, որտեղ տրվել է հայասական աստվածների ցուցակն իրենց պաշտամունքի կենտրոններով: Ըստ այդ ցուցակի՝ Պախխուտեյան հանդիսացել է Հայասա-Ազզի պաշտամունքային կենտրոններից մեկը, որտեղ պաշտել են Ամարոսի աստծուն (^{ՈՐՈՒ}Pa-aհ-իս-ս-տե-յա):¹⁵⁷

Ըստ Վ. Խաչատրյանի՝ Պախխուտեյան ժամանակակից Պախս բնակավայրն է և գտնվել է Բյուրակնի լեռների արևմտյան

¹⁵² Roth K., Die Bedeutung des Armenischen, ՀԱ, 1927, թիվ 11-12, էջ 741-750:
«Հայ» անունը լստ Պ.Կրեշմերի, ՀԱ, 1933, թիվ 7-8, էջ 429-432:

¹⁵³ ԱԼՌ, 1, ս. 41.

¹⁵⁴ Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 30:

¹⁵⁵ Մանադյան Յ., Օ нескоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 103.

¹⁵⁶ Խաչատրյան Բ., Խայասցы, ВОН, 1972, № 8, с. 38.

¹⁵⁷ KUB XXVI 39 I 30 (Forster E., Խայաս-Ազզ, S. 6).

հատվածում: Նա Պախսուտեյան նմանեցնում է Պախսուվաքաղաքի հետ¹⁵⁸, որն, ինչպես վերը նշվեց, հիշատակվել է «Պախսուվագի Սրտայի» տեքստում (KUB XXIII 72): Ըստ այդ տեքստի՝ Պախսուվան գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, սահմանակից է Եղել Խուվայի և Հայասայի տարածքներին:

Ըստ Զ. Գարստանգի և Օ. Գրնիի՝ Պախսուվան գտնվել է ներկայիս Դիվրիդի քնակավայրի տեղում¹⁵⁹: Գ. Զահուկյանը հավանական է համարել, որ Բախտեա անվան -teja մասնիկը խուռիերենի թեյա «մեծ» բառից է առաջացել, և այս բաղաքը հանդիսացել է Պախսուվա երկրի կենտրոնը: Պախսուտեյա անվան առաջացնումը նա կապել է հայերեն «փախ, փախուստ» բառի հետ¹⁶⁰:

Ինչ վերաբերում է Պախսուվա և Պախսուտեյա անունների նմանությանը, ապա, ամենայն հավանականությամբ, այս բաղաքները տարբեր են Եղել, սակայն գտնվել են նույն տարածաշրջանում (Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում):

20. Պատտեռ[...] (^{URU}Pa-a-at-te-u-[....])

Հայասական աստվածների ցուցակում Հայասա բաղաքից հետո հիշատակվել է Պատտեռ[...] բաղաքի աստվածուին (^{DISTAR} ^{URU}Pa-a-at-te-u-[...])¹⁶¹: Ընդ որում, այս աստվածուին հանդես է զայխ՝ որպես Հայասայի պանքենի զլյասվոր աստվածություններից մեկը: Բաղաքանվան Վերջում բացակայում է մի բանի սեպանշան: Մասնագետների մի մասն ընդունել է, որ այս բաղաքի անվանումը կարելի է վերականգնել՝ որպես Պարքեյարիգա (նույնանուն բաղաք գոյություն է ունեցել նաև Խար-

¹⁵⁸ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 36:

¹⁵⁹ Garstang J. and O. Gurney, The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 35.

¹⁶⁰ Ջայակյան Ղ., О соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 1, с. 76-77.

¹⁶¹ KUB XXVI 39 I 26.

Քիում)¹⁶²: Իր աշխատության մեջ է. Ֆոռերը կարծիք է հայտնել, որ այս քաղաքանունը չէր կարող նույնացվել խեթական տեքստում հիշատակված Պարթեյարիզայի հետ. նա այն համեմատել է ներկայիս Բրաունի հետ (Կամախից 164մ հյուսիսարևմուտք)¹⁶³: Ըստ Գ. Ղափանցյանի՝ -ri-ga (կամ -rig) վանկերով լրացվելու դեպքում Pattieus- քաղաքանունը նույնանուն կդառնա Pittiariga-ի հետ, որը ներկայիս Բրաունի է Երգնկայից ոչ հեռու¹⁶⁴: Իսկ ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս քաղաքի անունը համապատասխանում է Երիզայից (Երգնկայից) արևելք գտնվող Բիտարիք կամ Փիտտերիճ տեղանվանը¹⁶⁵: Ըստ Ա. Քոսյանի՝ Pattieus- քաղաքանունը վճառված մասի վերականգնումը և համադրումը խեթական տեքստերի Պիտտիյարիզայի հետ արդարացված չէ, և Պիտտիյարիզա քաղաքը չէր կարող գտնվել Հայաստի տարածքում¹⁶⁶:

Առաջարկվող բոլոր սոուզաքանությունները որպես ելակետ ունեն կամ համադրությունը Pittiyarig/k/q(a)-ի հետ, կամ չեն կարող հավաստի համարվել անվանաձևի թերի վիճակի պատճենով:

21. Պարտանտա (^{ՈՐՈՒ}Pár-ta-an-ta)

Խեթական պայմանագրային տեքստում նշվել է՝ որպես Ուրա քաղաքի մերձակայքում գտնվող բնակավայր¹⁶⁷: Ըստ այդմ՝ այն կարելի է տեղորոշել հայաստանական սահմանամերձ շրջանում:

22. Պարբայա (^{ՈՐՈՒ}Pár-ra-y[ə]?)

Հայաստական այս քաղաքը Գազու[...] քաղաքի հետ միասին սեպագիր աղբյուրում հիշատակվել է՝ որպես Ունագաստաս (^{ՈՒ}-սեպագիր աղբյուրում հիշատակվել է՝ որպես Ունագաստաս)

¹⁶² RGTC, VI, S. 319-320. RGTC, VI/2, S. 127.

¹⁶³ Forrer E., Hajasa-Azzi, S. 7.

¹⁶⁴ ИЛР, 1, с. 59, 91-92.

¹⁶⁵ Մարտիրոսյան Ն., Պրատումներ փոքրասիական անուններու մասին, էջ 96-97:

¹⁶⁶ Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 79:

¹⁶⁷ KUB XXVI 29. KUB XXXI 55,3 (Քոսյան Ա., նույն տեղում, էջ 79).

na-ag-ga-aš-ta-aš ^{URU}Pár-ra-ya) աստծո պաշտամունքի վայր¹⁶⁸, ինչը խոսում է այն մասին, որ այս աստվածության պաշտամունքը տարածված է եղել Հայաստանում:

Ըստ Հ. Մանանյանի՝ Պարրայա քաղաքի անունը նման է ասորեստանյան աղբյուրներից հայտնի Բառի տեղանվանը, որն, ըստ նրա, հետագայի հայկական թերկրի բնակավայրն է՝ Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում¹⁶⁹:

Աղբյուրների՝ ներկայումս հայտնի տվյալների համաձայն՝ առայժմ այսքանը կարելի է ասել Պարրայայի տեղադրության մասին, քանզի որևէ կովան չկա այն հստակ տեղորոշելու համար:

23. Պիտիյարիզա (^{URU}Bit-ti-ya-ri-ga, ^{URU}Pí-it-ti-ya-ri-ik, ^{URU}Pít-te-ya-ri-ga)¹⁷⁰

Պիտիյարիզա (Պարթեյարիկա) քաղաքը հիշատակվում է Վերին Եփրատի ավազանի մի խումբ երկրների հետ խերական մայրաքաղաք Խարթումասում Առնուվանդաս I-ի կնքած պայմանագրում (Ք.ա. XIVդ. I կես)՝ «Պախստուվածի Սլոտայի» տեքստում: Պիտիյարիզայից Արիխսայիցին Դուզգամայից Ախսի և մեկ այլ քաղաքի (անվանումը չի պահպանվել) ներկայացուցչի հետ միասին հանդիս է գալիս՝ որպես Պախստուվայի հետագա հավատարմության երաշխավոր: Պիտիյարիզան խերական կողմից դիտվել է՝ որպես վստահելի քաղաքական միավոր Դուզգամայի հետ միասին¹⁷¹:

Ըստ Ս. Երեմյանի՝ Երզնկայի դաշտի խոշոր կենտրոններից է եղել Թիթառիզա քաղաքը (ներկայիս Բթառիճ՝ Ալբոն-Թեփեի ավերակներից ոչ հեռու), որ այլ կերպ կոչվել է Պարթեյարիկա, և

¹⁶⁸ KUB XXVI 39 I 33 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

¹⁶⁹ Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 104.

¹⁷⁰ Ertem H., Coğrafya Adları Dizini, s. 112.

¹⁷¹ KUB XXIII 72 (Քոյսյան Ա., Նոր նյութեր Խերական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխարքելությունների մասին, էջ 240-242).

այս անունը երբեմն վերագրվել է ողջ Հայաստան-Ազգի երկրին¹⁷²: Հ. Մանանյանը ենթադրել է, որ Պաքքեյարիկա քաղաքի անունը կարելի է համեմատել ներկայիս Բբառիծ գյուղի անվան հետ (Երզնկայի դաշտում), և այդ տարածքը մտել է Խեթական տերության կազմի մեջ: Իսկ հայաստական Պիքքեյարիկան, ըստ նրա, կարող էր գունվել Բերդակ ամրոցի տեղում՝ Խարբերդից 10կմ հյուսիսից¹⁷³: Վ. Խաչատրյանը և Պիքքեյարիկան տեղորոշել է Բբառիծ գյուղի տեղում՝ Երզնկայից հարավ-արևելք, և տեղանվան հիմքում դրել է հայերենի հնդեվրոպական բուր՝ «հաստ, գուլ, քափ», և առիծ՝ «գյուղ, շեն» արմատները¹⁷⁴:

Սակայն խեթական ադրյուներում առկա նյութի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Պիտտիյարիկան հանդիսացել է Խարբիի քաղաքներից մեկը:

24. Տախ(ա)նիսարա (^{ՈՐՈՒ}Ta-b-ի-նի-ša-ra, ^{ՈՐՈՒ}Ta-b-ni-ša-ra)

Այս քաղաքանունը տրվել է մի գուշակային տերսուում, որի նպատակն է եղել պարզել Ազգի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվող) արշավանքի ընթացքը: Տերսուում հիշատակվել են մի շարք տեղանուններ ինչպես Հայաստան-Ազգի, այնպիսի որպան սահմանակից խեթական տարածքում: Գտնվել է Հայաստանի Ուրա սահմանային քաղաքի մոտ¹⁷⁵:

25. Տամատտա (^{ՈՐՈՒ}Ta-ma-at-ta)

Տամատտա քաղաքը հանդիսացել է Տերյատիտունիս աստծո պաշտամունքի կենտրոնը Հայաստան-Ազգիում (^{ՈՐՈՒ}Te-ri-it-ti-tu-un-i-^Տ? ^{ՈՐՈՒ}Ta-ma-at-ta)¹⁷⁶:

Նյութի սղությունն ու քաղաքանվան այս եզակի հիշատա-

¹⁷² Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացք, էջ 31:

¹⁷³ Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 105.

¹⁷⁴ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 43, 78:

¹⁷⁵ KUB XLIX 11 III 7, KUB XLIX 11 II 20 (Գույան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 93):

¹⁷⁶ KUB XXVI 39 I 30-31 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

կուրյունը թույլ չեն տալիս առաջարկել որևէ հստակ տեղադրություն:

26. Տավատենա (^{ՈՐՈՇ}Ta-wa-te-na)

Հայասայի Տավատենա քաղաքի մասին տեղեկություն կա խեթական մի գուշակային տեքստում, որի նպատակն էր պարզել Հայասայի-Ազգիի դեմ կազմակերպած (կամ նախապատրաստվող) արշավանքի հնարիավոր ընթացքը¹⁷⁷.

Տավատենա քաղաքը գտնվել է Հայասայի Ուրա սահմանային քաղաքի շրջակայրում և, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է հայասական այդ ամրացված սահմանային գոտու ամրոցներից մեկը՝ հետագայի Եկեղյաց գավառի տարածքում:

27. Ուկսու (^{ՈՐՈՇ}Uk-šu-u)

Ուկսուն «Միջին խեթական» փուլի (Ք.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) մի պայմանագրում տրված Ուրա սահմանային քաղաքի մերձակայրում գտնվող բնակավայրերից մեկն է¹⁷⁸, գտնվել է հայաս-խեթական սահմանային շրջանում:

28. Ուտկունիսա (^{ՈՐՈՇ}Ut-ku-ni-ša [])

Հիշատակվել է միայն խեթական վերոհիշյալ գուշակային տեքստում¹⁷⁹: Ուտկունիսան տրվել է Տավատենա, Խարսալասա քաղաքանունների հետ և նույնպես գտնվել է Ուրա քաղաքի մոտ:

29. Ուրա (^{ՈՐՈՇ}U-ra-aš, ^{ՈՐՈՇ}U-ra-a, ^{ՈՐՈՇ}U-ra-an)

Խեթական Մուրսիլիս II քագավորի «Տասնամյա տարեգրության» յորերորդ տարվան վերաբերող մասում կարդում ենք.

¹⁷⁷ RGTC VI/2, S. 167 (Թույան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 259).

¹⁷⁸ KUB XXVI 29,2 (Թույան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 100).

¹⁷⁹ RGTC VI/2, S. 182 (Թույան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 259).

“nu URU U-ra-aš ku-iš URU-aš [ŠA KUR ^{URU}] (A-az-zi һа-an-te-
ez-zi-iš) a-ú-ri-iš e-eš-ta na-aš-kán na-ak-ki-i pe-c-di [a-ša](-an-
za...)”¹⁸⁰.

«և Ուրա քաղաքը, որն Ազգի երկրի առաջին սահմանային
ամրոցն է, այն մի զաղիվայր (դժվարամատչելի) տեղում էր»:

Հայասա-Ազգի քագավոր Անհիյան ավերել էր խեթական
Դամկուլա քաղաքը, ինչին ի պատասխան՝ Մուրսիլիս Ա-ն ար-
շավեց դեպի Հայասա-Ազգի՝ գրավելով նրա սահմանային Ուրա
քաղաքը¹⁸¹:

Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ Ուրան, հավանաբար, հե-
տագայի Կամախի մոտ գտնվող Անի ամրոցն է, որի անունը
տվել է Անհիյա քագավորը¹⁸²: Խսկ Գ. Զահուկյանը Ուրա քաղա-
քանունը քացատրել է հինանատոյիհական լեզուների հիմքի վրա,
ըստ որի՝ սրա-ն նշանակել է «մեծ»¹⁸³: Հ. Սանանդյանը տեղորոշել
է Ուրա քաղաքը Ծոփքի Անձիստ գավառի Հռուն-քերդի (Խարքերդ)
տեղում¹⁸⁴: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Ուրա տեղանունն իր մեջ ունի
հայերեն ուր՝ «Ճյուղ, ընճյուղ» արմատը և գտնվել է Քարերդի
մոտ (Ուրեն քնակավայրը)¹⁸⁵: Խսկ Ըստ Ա. Քոսյանի՝ Ուրա քա-
ղաքը գտնվել է Խաթթին և Հայասան միմյանց կապող ճանա-
պարհներից մեկի վրա՝ Գայլ գետի հոսանքի մոտ¹⁸⁶:

Խեթական տերատերում տվյալներ կան նաև Ուրա քաղաքի
մոտ գտնվող Խարսալասա, Տափատենա և Ուտկունիսա քաղաք-

¹⁸⁰ Götze A., Die Annalen des Muršiliš, S. 98-99.

¹⁸¹ Նույնանուն խեթական քաղաք է գոյուրյուն ունեցել նաև Խաթթիում (Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B.C.), p. 68. RGTC, VI, S. 458):

¹⁸² ИЛР, I, с. 52.

¹⁸³ Джакуян Г., Хайаский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, с. 81.

¹⁸⁴ Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 91.

¹⁸⁵ Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 43:

¹⁸⁶ Քոսյան Ա., Հայկական լեզուաշխարհի տեղանունները, էջ 101:

ների մասին¹⁸⁷: Հավանաբար, Ուրա քաղաքն իր շրջակա բնակավայրերով կազմել է Հայաստ-Ազգի արևմտյան սահմանային ամրացված շրջանը:

Ըստ այդմ՝ կարելի է առաջարկել քաղաքի տեղադրությունը Կումնախայից արևելք՝ հավանաբար, հետագայի Եկեղեց զավառում, որտեղից ճանապարհ էր քացվում դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական գավառները:

30. Քաղկուսա/Քաղմասա (Qa?-ad-ku/ma-ša/ta?)

Այս քաղաքանվան ընթերցումը կասկածելի է, քանի որ քավականին դժվարընթեռնելի է¹⁸⁸: Ա. Քոսյանը, մի շարք նկատառումներից ելենով, այս դժվարընթեռնելի քաղաքանունը առաջարկել է վերականգնել հետևյալ կերպ՝ [^{ՄՐՄ}-ա]ռ-չ-ո-ն-ա¹⁸⁹:

Քաղկուսան հանդիսացել է Հայաստ-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկը. այստեղ պաշտել են Զազգա(-)[...] աստծուն (^ՊZa-ag-ga-(-)[...]^{ՄՐՄ}Qa?-ad-ku/ma-ša/ta?):

Քաղաքանվան եզակի հիշատակությունը և նյութի անքավարք լինելը հնարավորություն չի տալիս որևէ տեղադրություն առաջարկել Քաղկուսա քաղաքի համար:

Փորձելով ամփոփել այս գլուխը՝ կարելի է նշել, որ շատ տեղանունների կապակցությամբ տարբեր հեղինակների տված քացարություններին և մեկնարանություններին կարելի է վերապահումով մոտենալ, քանզի մենք չգիտենք, թե իսեթերն այդ տեղանունները տվել են իրենց լեզվին համապատասխան, թե դրանք նույնությամբ վերցրել են տեղաբնիկներից: Քացի այդ, բոլոր տեղադրությունները կարելի է առաջարկել մոտավորապես՝ հաշվի առնելով այն, որ մեզ հազարամյակներ են բաժա-

¹⁸⁷ Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 254-259:

¹⁸⁸ KUB XXVI 39 I 28 (Forrer E., Hajasa-Azzi, S. 6).

¹⁸⁹ Քոսյան Ա., Հայաստայի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ, 2005, XXIV, էջ 450-451:

նում այդ ժամանակաշրջանից, և շատ տեղանուններ չեն պահպանել իրենց նախնական անունները, կամ տեղանվան եզակի հիշատակությունը թույլ չի տալիս առաջարկել որևէ հստակ տեղադրություն։ Որոշ դեպքերում էլ ակնհայտորեն խեթական տեղանունները մասնագիտական գրականության մեջ ներկայացվել են՝ որպես հայասական, ինչը հանգեցրել է սխալ մեկնաբանությունների։ Հին տեղանունների հետ համադրվող ժամանակակից տեղանունները ներկայացվել են այնպես, ինչպես դրանք առկա են ուսումնասիրություններում։

Ներկայացնելով յուրաքանչյուր տեղանվան աղբյուրագիտական հենքը և դրա մեկնաբանությունը մասնագիտական գրականության մեջ՝ մենք ենք նաև մեր կարծիքն այս կամ այն տեղադրության վերաբերյալ, որքանով հնարավորություն է տալիս քննարկվող գրավոր ճյուղը։

Կարծում ենք՝ Հայասայի և խնդրո առարկա մյուս քաղաքան միավորների պարագայում հնարավոր է միայն դրանց ընդհանուր տեղադրությունը Հայկական լեռնաշխարհի որոշակի տարածքում։

**ՀԱՅԱՍՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
(Ք.Ա. XIV-XIIIդդ.)**

**ՈԱԶՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԻ ԵՎ
ԽԱԹԹԻՒ ՄԻՋԵՎ (Ք.Ա. XIV դար)**

Ք.ա. XIVդ. I կեսին Հայկական լեռնաշխարհի քաղաքական քարտեզի վրա ի հայտ է զալիս խեթական սկզբնադրյուրներից հայտնի Հայասա-Ազգին: Այդ ժամանակաշրջանի պատմությունը լուսաբանող խեթական տեքստերից է, այսպես կոչված, «Պախսուվացի Միտայի» տեքստը¹⁹⁰: Այս վավերագրում տրվել է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական պետության կնքած ժամանակագրորեն ամենավաղ պայմանագիրը:

«Պախսուվացի Միտայի» տեքստը պատկանում է խեթական այն արձանագրությունների թվին, որոնք վերջին տասնամյակներին են ստացել իրենց ճշգրիտ թվագրումը: Այս տեքստը կազմվել է խեթական արքա Թուղխալիյասի և նրա որդի Առնուվանդասի կողմից, որոնք սովորաբար նույնացվել են Ք.ա. XIIIդ. Երկրորդ կեսին իշխած Թուղխալիյաս IV-ի և նրա որդի Առնուվանդաս III-ի հետ: Մի շաբթ համոզիչ ապացույցների հիման վրա՝ այժմ այս տեքստը վերարվագրվել է

¹⁹⁰ KUB XXIII 72 (Sayce A., Hittite and Moscho-Hittite, RHA, 1930, № 1, f.1, p. 1-8. Gurney O., Mita of Pahluwa, AIA, 1948, № 28, p. 32-47. Hoffner H., A Join to the Hittite Mita-text, JCS, 1976, № 28, p. 60-62. Kosyan A., Armuwandas I in the East, AJNES, 2006, I, p.72-97).

Ք.ա. XIVդ. I կեսով՝ Առնուվանդաս I-ի կառավարման առաջին տարիներով¹⁹¹:

Ըստ «Պախսուվացի Միտայի» տեքստի՝ Հայկական լեռնաշխարհի Պախսուվա երկիրը երկար ժամանակ անհնազանդություն էր դժևորել, և նրա դեկավարները (Ուապա, Միտա, Պիգգանա և այլն) ոչ միայն խախտել էին խեթական արքային տված հավատարմության երդումը, այլև գրավել էին խեթական քաղաքներ: Խեթական արքան Պախսուվայից պահանջել էր իրեն հանձնել Միտային: Պախսուվան հնազանդեցնելու փորձերից հետո խեթական արքան մայրաքաղաք Խաթթուսաս էր կանչել Հայկական լեռնաշխարհի երկրների ներկայացուցիչներին: Տեքստն իրենից ներկայացնում է խեթական արքայի վերջնագիրը Պախսուվայի ավագներին, ինչպես նաև պարունակում է Հայկական լեռնաշխարհի երկրների հետ կնքված պայմանագիր¹⁹²:

«Պախսուվացի Միտայի» տեքստում Հայասա-Ազգին չի հիշատակվել, սակայն այստեղ հանդես են զայս որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական աղբյուրներից հայտնի են՝ որպես այդ երկոր բնակավայրեր՝ Դուզգաման և Արխիտան: Դուզգամացի Ախասին պիտտիարիգացի Արիխսպիցցիի հետ միասին հանդես է զայս՝ որպես Պախսուվայի հետագա հավատարմության երաշխավոր: Իսկ Արխիտան հանդիսացել է Պախսուվայի դաշնակիցն ընդդեմ Խաթթիի: Պախսուվայի հետ միացած՝ Արխիտան հարձակվել էր Կումմախայի բնակավայրերի վրա, իսկ խեթական զորքի հարձակման ընթացքում արխիտացիներն ապաստանել էին Պախսուվայում:

Առնուվանդաս I-ի հաջորդ Թուլիսալիյաս III-ի (Ք.ա. 1360-1344թթ.) կառավարման շրջանի վերաբերյալ սկզբնաղբյուրներում (որոնք գրի է առել նրա թոռը՝ Սուրսիլս II-ը) հանդիպում են

¹⁹¹ Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B.C.), p. 63. Քոյսան Ա., Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ. ԽV դարում, ԹԲՀ, 2000, թիվ 3, էջ 161:

¹⁹² Houwink ten Cate Ph. H. J., նշվ. աշխ., էջ 65-66: Քոյսան Ա., Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՍՊՄԵԺ, 2001, XX, էջ 241:

առաջին տեղեկությունները Խարքիից արևելք՝ Հայկական լեռնաշխարհում կազմավորված Հայասա-Ազգի պետության մասին: Այս պետության կազմավորումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Ք.ա. XIXդ. I կեսին՝ «Պահստուվացի Սրտայի» տերստում նկարագրված իրադարձություններից հետո ընկած ժամանակահատվածում՝ Առնուվանդաս I-ի և Թուղիսալիյաս III-ի կառավարման շրջանում:

Խարքիի հզորությունը և պետության միասնականությունը պահպաննելու համար խեթական միապետներն անընդհատ պատերազմներ են վարել իրենց հարակից երկրների դեմ, որոնց շարքում էր նաև Հայասա-Ազգին: Այդ պատճառով էլ Հայասայի վերաբերյալ առաջին տեղեկություններն ունեն ուազմական հաղորդագրությունների բնույթ: Այսպես, Թուղիսալիյաս III-ի օրոր խեթերն արշավել են դեպի Հայասա-Ազգի, որի համար, ամենայն հավանականությամբ, պատճառ էր հանդիսացել այն, որ Հայասան ուազմական համագործակցության մեջ է եղել Խարքիի վտանգավոր հյուսիսային թշնամիների՝ կասկերի հետ:

Խեթական արձանագրություններից մեկում նշվել է, որ հայասական գործը հանդես է եկել իր երկրի տարածքից դուրս՝ փաստորեն նախահարձակ լինելով: Կասկա և Հայասա երկրների դեմ արշավանքը դեկավարել է Թուղիսալիյաս III-ի որդին՝ Սուպպիլուսիմասը, որը չհանդիպելով այդ երկրում (երկրի անունը բաց է թողնված) Հայասայի գորքին՝ այնտեղ հանդիսել է Կասկա երկրի գործերին և հաղթել նրանց¹⁹³:

Խեթերը դեպի Կասկա և Հայասա երկրներ արշավելու համար որպես հենակետ օգտագործել են Վերին երկիրը¹⁹⁴ (թշնամական հարձակումների և, մասնաւոր, մայրաքաղաքի ավերման հետևանքով Թուղիսալիյաս III-ը ստիպված էր ժամանակա-

¹⁹³ BoTU 34=KUB XIX 11(Gütterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2, p. 62-63) (տես՝ համեմության 1).

¹⁹⁴ Վերին երկիրը (խեթ. KUR ԱԿՈ UGU⁷¹) գտնվել է Խեթական տերության հյուսիս-արևելքում՝ Հայիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորան ընկած տարածքում՝ հյուսիսում հասնելով մինչև Գալլ գետի ավազանը: Արևելքում այն սահմանակցել է Հայասա-Ազգին (տես՝ RGTC, VI, S. 293-294):

Վորապես մայրաքաղաքը տեղափոխել կրոնական խոշոր կենտրոն Սամուխա քաղաք, որը հանդիսացել է Վերին Երկրի կենտրոնը՝ Վերին Հայիսի ավագանում¹⁹⁵), որտեղ նրանք նաև զորահավաք են անցկացրել և զորք են պահել այդ Երկրների դեմ:

Ըստ Փոքր Ասիայի Մաշատ-հյոյուք բնակավայրից (Խեթ. ՄՐՒ՝ Tarigga) հայտնաբերված մի տեքստի՝ Խեթական արքան Տապիզզայում գտնվող մի քարձրաստիճան պաշտոնյայի հանձնարարում է զնալ Վերին Երկրի և զորք հավաքագրել դեպի Հայասա արշավանք կազմակերպելու համար, որպեսզի այդ Երկրը «կարգի բերվի»¹⁹⁶:

Խեթական այդ տեքստը թվագրվել է KUB XXIII 72-ից հետո ընկած ժամանակաշրջանով, այսինքն՝ դեպքերը տեղի են ունեցել Թուլիսալիյաս III-ի օրոք:

Այս արձանագրություններում չի նշվել Հայասայի թագավորի անունը, սակայն այս դեպքերից հետո խեթական աղբյուրներում հիշատակվել է Հայասայի արքա Կարաննին, որից առաջ «Խուկ-կանայի պայմանագրում» հիշատակվել է հայասացի Մարիյան:

Ըստ Է. Ֆոռերի՝ Հայասայում Մարիյա անունով երկու անձնավորություն է գոյություն ունեցել: Առաջինը դեռևս Թուլիսալիյաս III-ի օրոք հրավիրվել էր Խարթի մայրաքաղաք ու սպանվել, իսկ երկրորդը Խուկկանայի փեսան ու զորավարն է եղել¹⁹⁷: Ի. Դյակոնովը գտնում է, որ Մարիյա անունը կրել են երկու անձնավորություններ՝ մեկը Հայասայի թագավորն եր դարձել Թուլիսալիյասի ժամանակ, իսկ մյուսին նա համարել է Խուկկանայի հետ զուգահեռ իշխող Ազգի տիրակալ: Այնուհետև Մարիյան եր դարձել Հայասայի թագավոր, որին հաջորդել էր Աննիյան¹⁹⁸: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Marija անունը հանդիսացել է Հայասայի թագավորների տիտղոսը, և այդ անունը կրել է Հայասա-Ազգի հայությունը:

¹⁹⁵ Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 36.

¹⁹⁶ Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, TTKY, № VI/35, 1991, S. 298-301. Քոյսյան Ա., Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի բնույթի վիճակի մասին, էջ 234 -239(տնին հավելված 2):

¹⁹⁷ Forger E., Hajasa-Azzi, S. 3.

¹⁹⁸ Дьяконов И., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 91-92.

առաջին հզոր քագավորը¹⁹⁹: Ընդ որում, Մարիյան, ըստ Վ. Խաչատրյանի, Թուղթսալիյաս III-ի ժամանակակիցն է եղել, իսկ նրանից հետո գահին հաստատվել է Կարանճին, այնուհետև՝ Խուկկանան²⁰⁰: Մարիյա անունը համեյապում է նաև Մուրսիլիս II-ի օրոք՝ Աննիյա անվան հետ զուգահեռ²⁰¹: Հավանաբար, այս հատվածը մասն է կազմել Մուրսիլիս II-ի՝ Աննիյայի հետ կնքած պայմանագրի, որում նա կամ նորից հիշատակել է Թուղթսալիյաս III-ի պալատում տեղի ունեցած ստորև նշված դեպքը, կամ Աննիյայից բացի՝ Հայասայում իշխել է Մարիյա անվամբ մեկը, որին Մուրսիլիս II-ը հարկ է համարել հիշատակել:

Պայմանագիրը կնքվել է Սուլավիլուփիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև։ Պայմանագրի մի հատվածում տվյալներ կան այն մասին, որ դեռևս Թուղթսալիյաս III-ի օրոք Խաթթիի մայրաքաղաք Իրավիրպած Մարիյան սպանվել էր արքայի պալատում։ Դրա համար պատճառ էր հանդիսացել Վերջինիս կողմից խեթական արքունիքում ընդունված բարոյական չափանիշների խախտումը²⁰²։ Այս դեպքը Սուլավիլուփիումաս I-ը, հավանաբար, հիշատակել է պայմանագրում՝ որպես զգուշացում՝ ցանկանալով Խուկկանային անխոհեմ բայլերից ետ պահել։

Խաթթին Թուղթսալիյաս III-ի կառավարման ընթացքում հայտնվել էր ծանր կացության մեջ։ Բոլոր կողմերից նրա կենտրոնական շրջանների վրա էին հարձակվել քշնամի ուժերը, ավերվել էր նույնիսկ մայրաքաղաք Խաթթուսասը²⁰³։ Թուղթսալիյաս III-ից մեծ ջանքեր պահանջվեցին կորցրած տարածքները ետ զրավելու համար։ Այդ պայքարում նրան օգնում էր որդին՝

¹⁹⁹ Մարիյա անձնանունը նշվել է նաև Մաշատ-հյոյուրից զտնված նամակներից մնակում՝ որպես խեթական մի պաշտոնյայի անուն (Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, TTKY, 1991, № VI/35, S. 206-209):

²⁰⁰ Խաչատրյան Բ., Մարիա-տիտղ հայաստան մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 48-49:

²⁰¹ Carruba O., Die Hajasa-Verträge Hattis, Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 71-72.

²⁰² KBo V 3 (Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S.126-129) (տես՝ հավելված 3).

²⁰³ KBo VI 28 (CTH 88).

արքայազն Սուպպիլուլիումասը: Խաքքի հյուսիս-արևելյում թշնամի երկիր էր մնում Հայաստան-Աղջին, որի գործերն, ավերելով Վերին երկրները, Սամուխա քաղաքը սահման էին դարձրել Հայաստանի և Խաքքի միջն²⁰⁴: Ցանկանալով կասեցնել հայաստան առաջխաղացումը՝ Թուղթավյաս III-ն արքայազն Սուպպիլուլիումասի հետ նախ պարտության մատնեց կասկական ցեղերին, այնուհետև շարժվեց դեպի Հայաստան: Հայաստանի Կարանքի արքան իր գործով դեմ ելավ խեթական ուժերին և Կումմախա քաղաքի տակ ճակատամարտ տվեց նրանց²⁰⁵: Հավանաբար, Վերին երկրներից ետ քաշված հայաստան գորքը դեռևս իր ծեռքում էր պահում Կումմախա երկիրը, որը հետագայում նորից անցավ խեթական տիրապետության ներքո՝ գտնվելով մի կողմից Խոսկայի (հարավից), մյուս կողմից՝ Հայաստանի հարեանությանը²⁰⁶: Ըստ ամենայնի՝ Կումմախայի ճակատամարտն ավարտվել է հայաստան գորքի պարտությամբ և Կումմախայի նկատմամբ խեթական վերահսկողության հաստատմամբ:

Թուղթավյաս III-ին հաջորդած Սուպպիլուլիումաս I-ի օրոք (Զ.ա. 1344-1322թթ.) սկսվեց Խաքքի նոր Վերելքը: Կարանքից հետո խեթական աղբյուրները որպես Հայաստանի քագավոր հիշատակել են Խոսկանային, որի հետ էլ խեթական արքան դաշնագիր էր կնքել²⁰⁷:

²⁰⁴ KBo VI 28 I 11-12 (Bryce T., *The Boundaries of Hatti and Hittite Border Policy*, Tel Aviv, 1986, № 13, p. 89).

²⁰⁵ KUB XIX 11 IV 38-44 (Güterbock H.. *The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II*, p. 66).

²⁰⁶ Ջույան Ա., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 237:

²⁰⁷ Ըստ մեկ այլ վարկածի՝ Սուպպիլուլիումասը Խոտկանայի հետ դաշինք է կնքել, երբ դեռ արքայազն էր և պետությունը կառավարում էր իոր՝ Թուղթավյասի հետ միասին: Նման եղանակնման համար առիթ է ծառայել այն, որ Սուպպիլուլիումասը պայմանագրում հիշատակվել է քագավոր, այլ ոչ սովորաբար տրվող «Խաքքի մեծ քագավոր» տիտղոսով: Դաշինքի նպատակն էր պահպանել խեթական քանակի թիվունքը հնարավոր հայաստան հարձակության մեջ և կորցրել էր իր արևմտյան, հյուսիսային և կենտրոնական տարածքները (Kempinski A., *Suppiluliuma I: The Early Years of His Career*, Tel Aviv, 1993, № 1, p. 85):

Ըստ Սուպպիլուլիումասի տարեգրության²⁰⁸, խեթական արքան Խոտվայից շարժվել է դեպի Ծուխապա երկիր, ավերել այն և մտել Հայաստան՝ Լախա լեռների շրջանը, այնուհետև վերադարձել Խոտվա²⁰⁹:

Փաստորեն, Սուպպիլուլիումաս I-ին հաջողվել էր և հարավից, և արևմուտքից ընդհուպ մոտենալ Հայաստանի տարածքներին և վտանգ ստեղծել նրա համար: Այսպիսի ժանր կացության մեջ, երբ երկիրը կանգնած էր խեթական ներխուժման վտանգի առաջ, հավանական է, որ Հայաստան տեղի է ունեցել զահակալի փոփոխություն, և իշխանության է եկել Խոտվանան, հավանաբար, ոչ առանց խեթական միջամտության²¹⁰: Այս ամենից հետո խեթական արքան շտապել է օգտվել ստեղծված հնարավորությունից և դաշինք է կնքել նոր զահակալի հետ, որպեսզի անվտանգ դարձնի Խարքի-Հայաստան սահմանը՝ նյուուղղություններով իր հաջողությունները զարգացնելու համար:

Ըստ պայմանագրի, Խոտվանան պարտավորվում էր, քացի Սուպպիլուլիումաս I-ից, նրա ժառանգորդ որդուց կամ մյուս որդիներից և եղբայրներից, շճանաչել որեւէ այլ մեկի իշխանության օրինականությունը Խարքիում: Սուպպիլուլիումասը դրա փոխարեն խոստանում էր նույն ձևով վարվել Խոտվանայի, նրա որդու և ժառանցի հետ: Նրանց որդիները միմյանց հետ կապվելու էին միևնույն փոխադարձ պարտավորությամբ: Երկու կողմերն էլ հանձն էին առնում միմյանց ուազմական աջակցություն ցույց տալ թշնամիների դեմ: Նրանք պարտավոր էին նաև մեկը մյուսին նախազգուշացնել իրենց դեմ հայտնաբերված դավադրությունների մասին: Սակայն պայմանագրում Սուպպիլուլիու-

²⁰⁸ Տեքստերի գիտական ուսումնասիրությունը տվել է Հ. Գյուտերբուկը (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2-4):

²⁰⁹ KUB XXXIV 23(Güterbock H., նշվ. աշխ., 3, էջ 83) (տես՝ համեմատ 4).

²¹⁰ Ն. Աղոնցը կարծում է, որ Մարիյայի մահը Հայաստան առաջ էր քերել խոռվություններ, և դրա հետևանքով խեթական արքան միջամտել էր, որպեսզի հետագի օրինավոր ժառանցը՝ հօգուտ Խոտվանայի, որը խոռվությունների ժամանակ Խարքի կողմնակիցն էր (Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 37):

մասը շի շրջանցում այն փաստը, որ Հայաստան դեռ պահում է Խաթթից գրաված հողերը, և որ Խոլկանայի Երկրում կային նաև տարագիր խեթահպատակներ, ուստի դաշնագրի մի կետը Խոլկանային պարտավորեցնում էր տարագիրներին վերադարձնել և դուրս գալ գրավված խեթական մարզերից:

Պայմանագրի համաձայն՝ Խաթթից արքան իր քրոջը կնության է տալիս Խոլկանային: Միննոյն ժամանակ Սուպալուլիումասը պահանջում է, որպեսզի Խոլկանան կին շառնի Հայաստ-Ազգի իր ազգակիցներից: Նպատակը, թերևս, մեկն էր՝ խեթուիին լիներ նրա միակ կինը՝ ապահովելով խեթական ներկայությունը հայաստական արքունիքում: Սուպալուլիումասը դրանով փորձում էր գահի ժառանգման հարցը լուծել հօգուտ իր քրոջ ապագա որդու²¹¹:

«Խոլկանայի պայմանագիրը» խեթահայաստական հարաբերությունների ամենավառ դրսևորումներից մեկն է հանդիսացել: Պայմանագրում որպես գերակայող միտում հաճդես է եկել միմյանց միջև հաստատված խաղաղությունը և օրինականությունը պահպանելու պայմանը, ինչն այդ պահին շատ կարևոր էր երկու երկրների համար: Դաշնագրին արտացոլել է տվյալ ժամանակահատվածում միջազգային հարաբերություններում առկա մի շարք կարևոր դրույթներ՝ կապված տարածաշրջանում ուժերի դասավորվածության հետ:

Սուպալուլիումաս I-ը ցանկանում էր Հայկական լեռնաշխարհի երկրները դիվանագիտական ճանապարհով կտրել Խաթթի զիվավոր հակառակորդից՝ Միտաննից, և ուզմական աջակցություն ստանալ այդ երկրներից: Դրան էր միտված խեթական արքայի պահանջը՝ ճանաչել միայն իր իշխանությունը և գործեր տրամադրել իրեն, եթե որևէ երկիր քշնամական գործողություններ ձեռնարկեր ընդդեմ Խաթթիի²¹²:

Գոյություն ունի մի գուշակային տեքստ, որում խեթական

²¹¹ Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., S.124-

129. Carruba O., Die Hajasa-Verträge Hattis, S. 59-75. CTH 42.

²¹² Friedrich J., նշվ. աշխ., էջ 106-109, 116-117:

արքան (ամենայն հավանականությամբ, Սուլապիլուլիումաս I-ը) գուշակային հարցում է արել, որի միջոցով փորձել է տեղեկանալ Ազգի արքա Խուկկանայի ապագա հավատարմության մասին իր և իր սերունդների հանդեպ²¹³:

Դրանից հետո խեթական արքան հարավում անցել է նվաճողական նոր գործողությունների՝ ընդդեմ Սլոտաննիի և Եգիպտոսի: Սուլապիլուլիումաս I-ը նամակ է հղել Եգիպտական փարավոնին, որտեղ հիշատակել է իր կատարած նվաճումները նամակի առաքմանը նախորդող շրջանում: Տեքստի վճառված ենթատեքստում պահպանվել է Հայասա երկրանունը²¹⁴: Սակայն խեթահայասական դաշինքը կարծ է տևել: Ավելի ուշ՝ Սուլապիլուլիումասի տարեգրության մեջ, Հայասան դարձյալ հիշատակվել է՝ որպես թշնամի երկիր²¹⁵:

Հարևան երկրները սկսում են թշնամանալ խեթական տերության հետ դեռևս Սուլապիլուլիումաս I-ի կենդանության վերջին տարիներին, երբ Խաթթիում համաճարակ էր տարածվել: Այնուհետև թշնամիների թիվը գնալով աճում է՝ պայմանավորված այդ արքայի և նրա հաջորդ զահակալի՝ Առնուվանդա II-ի (Ք.ա. 1322-1321թթ.) մահով: Իսկ երբ խեթական զահը փոխանցվում է դեռօհաս Մուլսիլիսին, քաղաքական իրավիճակը երկուում չի կարգավորվում²¹⁶.

Խաթթին թշնամացած երկրներն էին Կասկան, Սլոտաննին, Հայասան, Արծավան և այլն: Մուլսիլիս II-ը (Ք.ա. 1321-1295թթ.) տարեգրություններում հաղորդել է այն մասին, որ թշնամի երկրները, այդ թվում նաև՝ Հայասա-Ազգին, հարձակվել էին խեթական տարածքների վրա և ավերել դրանք: Հավանաբար, Հայասայի և Կասկայի միջև գոյություն է ունեցել դաշինք, քանզի այդ

²¹³ KUB XVIII 2 (CTH 579. Թույան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 136-137).

²¹⁴ KUB XIX 20 (CTH 154. Թույան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 137).

²¹⁵ Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, 4, p. 113-114.

²¹⁶ Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 14-21.

երկու երկրների ուազմական ընդհարումները Խաքրիի հետ հաճախ ժամանակագրորեն համընկել են: Սուրսիլս II-ին հաջող-վում է պարտության մատնել Արծավա (Փոքր Ասիայի արևմտա-քում) և Կասկա երկրներին: Կասկերի Տիբիյա երկրի արքա Պիլխսունիյային պարտության մատնելուց հետո միայն Սուրսի-լս II-ն իր իշխանության յոթերորդ տարում ուշադրությունը կենտրոնացրել է Հայասա-Ազգի վրա²¹⁷:

Սուրպավիլուխումասի կառավարման վերջին տարիներին խե-րահայասական պայմանագիրը խախտվել էր ինեց Աննիյայի կողմից, որը հրաժարվել էր իր նախորդի՝ Խուկկանայի հաճճ առած պարտավորություններից, և հայասացիները գենք էին բարձրացրել Խաքրիի դեմ ու իրենց մոտ ընդունել խերահայա-տակ փախստականներին:

Սկզբնապես փորձելով հարցը խաղաղությամբ լուծել՝ Սուր-սիլս II-ը նամակներ է ուղարկում Հայասա-Ազգի՝ Աննիյայից պահանջելով վերադարձնել դեռևս Սուրպավիլուխումասի ժամա-նակ Հայասայում ապաստանած խերահայատակներին և Խատի-տինա ու Դամկուլա (Վերին երկրներ) խերական երկրներից վերցրած գերիներին: Աննիյայից մերժում ստանալով՝ Սուրսիլս II-ը Հայասա-Ազգիի սահմանային Ուրա քաղաքի վրա կատա-րում է հարձակում²¹⁸, որի ելքի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, սակայն հետագայում խերական արքան ստիպված էր կրկին արշավել դեպի Հայասա-Ազգի:

Ըստ «Սուրսիլսի տարեգրության» ութերորդ տարվա իրա-դարձությունների՝ հայասացիները, լսելով Սուրսիլսի կողմից նա-դարձած ապահովությունը արշավանքի մասին, նրա մոտ դեսպան են ու-խապատրաստվող արշավանքի մասին, նրա մոտ դեսպան են ու-ղարկում՝ համաձայնելով կատարել Խաքրիի արքայի պահանջ-ները²¹⁹: Սուրսիլս II-ն առժամանակ հետաձգում է իր նախատե-սած արշավանքը և գրադկում Կումմանիի Խելպատ աստվածու-սած արշավանքը և գրադկում Կումմանիի Խելպատ աստվածու-

²¹⁷ KBo III 4=2Bo TU 48 (Götze A., նշվ. աշխ., S. 96-97) (տես՝ հավելված 5).

²¹⁸ KUB XIV 17=2BoTU 56 (Götze A., նշվ. աշխ., S. 94-98) (տես՝ հավելված 6).

²¹⁹ 2BoTU 56 (Götze A., նշվ. աշխ., S. 102-103) (տես՝ հավելված 7).

Մուրսիլիսը հայասացիներից կրկին պահանջում է վերադարձնել ուազմավարը, բայց մերժում է ստանում Աննիյայից: Հայասայի արքան ցանկանում էր գերիների փոխանակում կատարել. հրաժարվում էր վերադարձնել խեթական գերիներին, քանի դեռ չէր ստացել իր հպատակ տարագիրներին²²⁰: Դեռ ավելին, օգտվելով հարմար առիթից, որ Մուրսիլիս II-ը գտնվում էր Խաթթիի հարավում, Աննիյան Վերստին հարձակվում է Խստիտինա երկրի վրա և պաշարում Կաննուվարա խեթական քաղաքը: Խեթական մի քանակ մեծ մատովակապետ Նուվանցայի զիսավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում Կաննուվարա քաղաքին: Հայասացիները, որոնք ուազմի դաշտ էին հանել 700 մարտակառը և 10.000-անոց հետևազոր, Կաննուվարա քաղաքի տակ տեղի ունեցած ճակատամարտում, ըստ խեթական սկզբանադրյութների, պարտություն են կրում: Սակայն հավանական է, որ խեթական զորավարը անհաջողության է մատնվել, որի պատճառով Խաթթիի արքան ստիպված էր Կարգամիտից իր զորքերը շարժել դեպի Թեգարամա (գտնվում էր Կումմանիի (անտիկ Կոմմագենե) և Վերին երկրի միջև և տեղորոշվել է ներկայիս Գյուրյուն քնակավայրի տեղում²²¹), որպեսզի ավելի մոտ գտնվի ուազմական զործողությունների անմիջական վայրին: Այստեղ ձմռան պատճառով և իր զորահրամանատարների խորհրդով նա առժամանակ դադարեցրեց Հայասայի դեմ ուազմական զործողությունները և զորքերը շարժեց այլ ուղղությամբ²²²:

Իր քագավորության հաջորդ՝ 10-րդ տարում, Մուրսիլիս II-ը սկսում է իր ուազմերը դեպի Հայասա-Ազգի: Ինգալավա քաղաքում զորատես անցկացնելուց հետո խեթական արքան արշավում է դեպի Հայասա: Հայասայի զորքը որոշել էր ցերեկը ճակատամարտ շտալ և պատրաստվում էր գիշերը լնոններում հանկարծակիի բերել խեթերին: Իրազեկ լինելով դրան՝ Մուրսիլիս II-ը հրամայում է իր քանակին կազմ ու պատրաստ լինել գիշերային հար-

²²⁰ Götze A., Աշխ., էջ 102-107:

²²¹ Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, p. 47.

²²² Götze A., Աշխ., էջ 122-127:

ձակումներին: Խեթերը, ներխուժելով Հայասայի տարածք, պաշարում և գրավում են «ծովի մեջ զտնվող» Արիասա քաղաքը, որի բնակիչները հեռացել էին մոտակա լեռները: Արիասան ավարի մատնելուց հետո Մուրսիլիս II-ը հպատակեցնում է նաև Դուզանա հայասական քաղաքը, որի բնակիչները դիմադրություն ցույց չեն տալիս: Խեթական արքան քաղաքը չի ավերում, միայն 3000 դուզանացիների՝ որպես զինվորների, տանում է Խաթթի²²³:

Այսպիսով, Խաթթի արքան իր գահակալման 10-րդ տարին անցկացրել է՝ արշավելով դեպի Հայասա՝ արշավանքը սկսելով գարնանը (խեթ. համեշիան-«գարուն») և ավարտելով ձմեռնամուտին (խեթ. ginnmant-«ձմեռ»): Ժամանակային առումով արշավանքը բավականին ճգճգվել էր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ խեթական բանակը գրավել էր ընդամենը երկու հայասական քաղաք, որից մեկն անձնատուր էր եղել: Առավել ևս, որ մինչև Արիասա հասնելը որևէ ռազմական բախում տեղի չեր ունեցել խեթերի և հայասացիների միջև: Ամենայն հավանականությամբ, Մուրսիլիսը, Բարձր Հայքի տարածք ներխուժելով, այդ ժամանակահատվածում Տուրուբերանի տարածքով հասել էր մինչև Վանա լճի ափերը, որտեղ և գտնվել էր Արիասան²²⁴:

Այնուհետև՝ գահակալության 11-րդ տարում, Մուրսիլիս II-ը, նպատակ ունենալով վերջնականապես հպատակեցնել Հայասա-Ազգին, կրկին արշավանքի է ելում: Հայասայի իշխանակորները, տեղի տալով գերազանցող ռազմական ուժին, ստիպված բանակցություններ են սկսում Խաթթի արքայի հետ: Հայասական կողմն պարտավորվում է զորք տրամադրել խեթական բանակին, ինչպես նաև վերադարձնել դեռևս իր մոտ գտնվող խեթական գերիներին: Այսպիսով, հայասացիները վերականգնում են դեռևս Խոռվականայի օրոր պայմանագրով ստանձնած պարտավորությունների մի մասը²²⁵:

²²³ KBG IV 4=2BoTU 58 (Götze A., Աշխ., էջ 130-139) (տես՝ հավելված 8).

²²⁴ Դազարյան Ռ., Հայաս-Ազգին տեղադրության հարցի շուրջ (ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության), Մերձավոր Արևելք, 2005, էջ 37-38:

²²⁵ KBG IV 4=2BoTU 58 (Götze A., Աշխ., էջ 138-139) (տես՝ հավելված 9).

Մուրսիլս II-ը վերադառնում է Խաթթի այն բանից հետո, երբ հայասական իշխանավորները նրան հավատարմության երդում են տալիս և վերադարձնում են 1000 խեթական տարագիրների²²⁶:

Մուրսիլսի ժամանակաշրջանից պահպանվել է մեկ այլ տեքստ (KUB XIV 4), որտեղ ներկայացվում է արքայի և նրա խորք մոր՝ Մուպալիլուի մաս 1-ի վերջին կնոջ՝ տավանանա (քազուի) Ամմիննայայի միջև հակամարտության պատմությունը: Այդտեղ հիշատակվել է արքայի՝ դեպի Հայասա-Ազգի կազմակերպած արշավանքի ընթացքում քազուիու՝ Խաթթուսասում պալատական հեղաշրջում իրականացնելու փորձը: Խոսքը վերաբերում է Մուրսիլս II-ի տասներորդ և տասնմեկերորդ տարիների արշավանքներին²²⁷: Այստեղ ևս Հայասան և Ազգին հիշատակվել են՝ որպես մեկ երկրի երկու տարրեր անվանումներ:

Մուրսիլս II-ին հաջողվել է որոշ ժամանակով Խաթթիի հյուսիս-արևելյում չեզոքացնել հայասական վտանգը: Սակայն խեթերն այդպես էլ չեն կարողացել ճվաճել Հայասա-Ազգին: Նրանք բավարարվել են՝ միայն իրենց գերիներին վերադարձնելով և ուազմական օգնություն ստանալով, սակայն որևէ խոսք չկա այն մասին, որ Հայասան հարկ է վճարել Խաթթիին՝ որպես պարտված երկիր:

Մուրսիլսի կառավարման հաջորդ տարիներին խեթական վավերագրերում տեղեկություններ չկան Հայասա-Ազգի վերաբերյալ: Հավանաբար, Խաթթին և Հայասան այդ ընթացքում խաղաղ գոյակցության շրջան են ապրել, և երկու երկրների միջև որևէ ուազմական ընդհարում տեղի չի ունեցել:

²²⁶ KBo IV 4=2BoTU 58 (Götze A., նշվ. աշխ., էջ 139-141) (տես՝ հավելված 9).

²²⁷ Քոսյան Ա., Հայասան և Ազգին, Ծնորի ի վերուստ, 2008, էջ 283-285:

ԽԵԹԱՀԱՅԱՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ք.Ա. XIII ԴԱՐՈՒՄ

Ք.ա. XIIIդ. Հայաստ-Ազգի պատմության լուսաբանումը սերտորեն առնչվում է այդ ժամանակաշրջանի Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ:

Դեռ Ք.ա. XIVդ. կեսերից երկու գերտերությունների՝ Խարթիի և Եգիպտոսի միջև հաստատվել էր անկայուն հավասարակշռություն այն քանից հետո, երբ Սուլավիլությունս I-ը գրավեց Միտաննին, և Հյուսիսային Ասորիի տարածքում ստեղծվեց խեթերից կախյալ Կարգամիափ քաղաքությունը: Ք.ա. XIIIդ. առաջին քառորդում խեթաեզիպտական հակամարտությունը հասավ իր բարձրակետին (Ք.ա. 1274թ. Քաղեցի ճակատամարտը), որից հետո սկսեց աստիճանաբար տեղի տալ և ավարտվեց Ք.ա. 1258թ. Խաթրուսիլիս III-ի և Ռամզես II-ի միջև կնքված խաղաղության պայմանագրով: Դաշնագիրը վավերացնում էր Քաղեցից հետո ստեղծված իրավիճակը Ասորիքում: Այն ժամանակ, երբ խեթերն ու Եգիպտացիները պայքարում էին ասորիթյան քաղաքների (Քաղեց, Համատ, Ուգարիթ, Երլա, Խալպա, Ալալիս) վրա իրենց վերահսկողության հաստատման համար, Միտաննիի գերիշխանությունից ազատագրված Ասորեստանը, արևմտափոքրասիական երկրները (Միլլավանդա, Լուկկա, Սենա) և Ալիմիլյավան քացահայտորեն ձգտում էին ընդարձակել իրենց քաղաքական ազդեցության շրջանակները Խեթական տեսական հաշվին: Ոչ պակաս քարդ խնդիրներ էին առաջացել ուության հաշվին: Ոչ պակաս քարդ խնդիրներ էին առաջացել Խաթրուսիլիս III-ի միջև ընթացած ոիշությունների ներքուածական կյանքում՝ կապված Ուրիխի-մեծենական Խաթրաղաքական կյանքում: Փոքր Ասիայի հարավում ստեղծվությունների կողմնակիցներին՝ Փոքր Ասիայի հարավում ստեղծվությունների կողմնակիցներին՝ կախյալ պետությունը Ուրիխի-մեծենական կրտսեր որդու՝ Կուրունտայի գլխավորությամբ:

Մուրսիլս II-ին հաջորդած Մուվատալիս II-ի (Ք.ա. 1295-1272թթ.), Ուրիսի-Թեշուրի (Մուրսիլս III) (Ք.ա. 1272-1267թթ.) և Խաթուսիլս III-ի (Ք.ա. 1267-1237թթ.) կառավարման տարիներից պահպանվել են գուշակային և խնվենտարային բնույթի գրավոր աղբյուրներ, որտեղ հիշատակվել է Հայասա-Ազզիմ²²⁸: Հնարավոր է, որ դա մի խաղաղ ժամանակաշրջան է եղել խեթահայական հարաբերություններում: Որևէ տեղեկություն չկա այդ քաղակորների օրոք Հայասայի գրավման կամ կախյալ վիճակի մասին, ինչը վկայում է այն մասին, որ Հայասա-Ազզիմ թագավորությունն ինքնուրույն և անկախ է եղել և չի ներգրավվել խեթերի արտաքին քաղաքականության մեջ: Սակայն գոյություն ունի Ազզիի դեմ նախապատրաստվող պատերազմի վերաբերյալ մի խեթական գուշակային տեքստ, որը թվագրվել է Ք.ա. XIII դարի կեսերով²²⁹, և որի մասին հետագա տեղեկությունները բացակայում են:

Այնուամենայնիվ, եթե Մուրսիլս II-ի օրոք Հայասան ստիպված էր զորք տրամադրել Խաթրիին և, հավանաբար, մասնակցել խեթական արքայի արշավանքներին, ապա այս ժամանակաշրջանում խեթական քանակի կազմում Հայասայից որևէ զինվորական միավոր հիշատակված չէ:

Մուվատալիս II-ն իր եղբօրք՝ Խաթրիի ապագա մեծ արքա Խաթրուսիլսին, նշանակել էր Հայասայից արևոտք գտնվող Վերին Երկրի կառավարիչ, միաժամանակ նաև խեթական քանակի հրամանատար: Իր «Ինքնակենսազրությունում» Խաթրուսիլսը նկարագրել է նաև իր ուազմական գործողությունները՝ ուղղված Խաթրիի թշնամիների և անհնազանդ երկրների դեմ²³⁰: Այս տեքստում որևէ տեղեկություն չկա Հայասա-Ազզիի մասին՝ չնայած ուազմական գործողություններն ընթացել են Հայասայի սահմաններից ոչ հեռու՝ Վերին ու Կասկա երկրներում:

²²⁸ KUB XXII 62. KUB XLII 69. KUB XLVIII 105+KBo XII 53. KUB XLIX 1 (CTH 225, 245, 530, 572, 575).

²²⁹ KUB XLIX 70 (CTH 572. Քոյսան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղաբնաները, Երևան, 2004, էջ 148).

²³⁰ CTH 81. Friedrich J., Hethitisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 10-14.

Քաղեցի նշանավոր ճակատամարտում հիշատակվել են Խաթթի Երկրի դաշնակից և հպատակ մի շարք Երկրներ՝ Միտաննի, Արծավա, Լուկկա, Կիցցուվատնա, Կասկա և այլ²³¹: Այս ցուցակում չի հիշատակվել Հայասա-Ազգի Երկիրը՝ որպես Խաթթի դաշնակից կամ հպատակ, ինչը վկայում է այն մասին, որ Հայասան Մուրսիլս II-ից հետո՝ արդեն Մուվատալիս II-ի օրոք, Վերականգնել էր իր անկախությունը և զորք չեր տրամադրել Խաթթին:

Հայասա-Ազգիի վերաբերյալ ժամանակագրորեն վերջին հիշատակությունները հանդիպում են Խաթթի արքա Թուղիսալիյան IV-ի (Ք.ա. 1237-1209թ.) կառավարման շրջանից:

II.

12. [n]am?-ma-aš-ma-aš šu-me-e-eš ku-i-e-eš BE-LU^{H.LA}

13. [h]a-an-te-zi a-u-ri-uš ma-ni-ia-aḥ-ḥe-eš-kat-te-ni

14. IŠ-TU KUR URU Az-zi KUR URU Ga-aš-ga

15. IŠ-TU KUR URU Lu-uq-qa-a nu ZAG še-ik?-kan-te-et

«Տերերդ, ովքեր առաջին հերթին (") կառավարում եք Ազգին, Կասկային, (և) Լուկկային նայող սահմանային կետերը... »²³²:

Այս հաղորդումը պարունակում է տեղեկություն Թուղիսալիյաս IV-ի կողմից Խաթթի սահմանային նահանգների կառավարիչներին տրված իրահանգների մասին: Խաթթի արքան, հավանաբար, ցանկացել է նախազգուշական միջոցներ ձեռք առնել ընդդեմ Ազգի, Կասկա և Լուկկա Երկրների:

Փաստորեն, նշված ժամանակաշրջանում Խաթթին բարիության հարաբերությունների մեջ չի եղել ոչ միայն Կասկա (Արևելապոնտական լեռների շրջանում) և Լուկկա Երկրների (հե-

²³¹ Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1998, p. 257.

²³² KUB XXVI 12 (Forrer E., Hajasa-Azzi, Caucasica, 1931, № 9, S. 22. Քոսյան Ա., Ս.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական Ա., Երևան, 1971, էջ 71; Խաչատրյան Բ., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 161, § 21 [Վ. Խաչատրյանն այս տեղեկությունը վերագրել է Խաթթուսիլս III-ին]).

տագայի Լիկիան՝ հարավ-արևմտյան Փոքր Ասիայում), այլ նաև Ազգի հետ: Դեռ ավելին, Թուղթսալիյաս IV-ը ցանկացել է նաև պատերազմել Հայասա-Ազգի դեմ: Գոյություն ունի մի գուշակային տերատ, որտեղ խեթական արքան փորձում է տեղեկանալ, թե ում է նպատակահարմար հանճնարարել դեպի Ազգի կազմակերպվելիք արշավանքի դեկավարությունը²³³: Սակայն որևէ տվյալ չկա դրան հաջորդած իրադարձությունների մասին:

Ք.ա. XIII դ. կեսերից Հայկական լեռնաշխարհը հայտնվում է Խեթական տերության և Ասորեստանի ռազմաքաղաքական մրցակցության ոլորտում: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան գրավոր աղբյուրներն առաջին որոշակի տեղեկություններն են տալիս Հայկական լեռնաշխարհի երկրների մասին: Այդ տեղեկությունները գալիս են ասորեստանյան արքաների՝ դեպի հյուսիս կատարած արշավանքների նկարագրություններից:

Թուկուլիթի-Նինուրտա I-ի (Ք.ա. 1233-1197թթ.) տեքստերում հանդիպում է Հայկական լեռնաշխարհի՝ Նախրի երկիր հավաքական անունը: Ակնհայտ է, որ Թուղթսալիյաս IV-ը և Թուկուլիթի-Նինուրտա I-ը ժամանակակիցներ են եղել: Եվ եթե խեթները Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմերն անվանել են Հայասա կամ Ազգի, ապա ասորեստանցիները Լեռնաշխարհի արևմտյան հատվածը հիշատակել են Նախրի երկրները անունով: Ըստ ասորեստանյան սկզբնաղբյուրների՝ Նախրի երկրները տարածվել են Տավրոսի լեռներից մինչև Սև ծով ընկած տարածքում և, բնականաբար, իրենց մեջ ընդգրկել են նաև խեթական սկզբնաղբյուրներում հիշատակված Հայասա-Ազգին: Այդ սկզբնաղբյուրներում Հայասա-Ազգի և Նախրի երկրներ անվանումների համաժամանակյա հիշատակությունը վկայում է Հայկական լեռնաշխարհի խնդրո առարկա տարածքում պետական կազմավորումների ներքաղաքական զարգացումների մասին: Միևնույն ժամանակ, թերևս, ցույց տալով Հայասա-Ազգի տրոհման միտումը, որի բաղկացու-

²³³ IBot I 32 (CTH 572. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 152).

ցիշ մասերը հանդես են եկել իրենց իշխանավորների գլխավորությամբ: Այսպես, Թուկովքի-Նինուրտայի թողած արձանագրություններում պատմվում է Ասորեստանի արքայի՝ դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավաճրների և նրա դեմ դուրս եկած Նախրիի 43 քազավորների մասին²³⁴:

Ասորեստանի առաջիսաղացումը կյուսիսում լայն աշխարհագրական ընդգրկում է ունեցել (Բաբիսի, Կաղմուխի, Պուրուլումզի, Ալզի, Սուրբարտու, Նախրի և այլն): Դրությունն ավելի է սրվել խեթերի՝ Նիխրիյայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանցիներից պարտություն կրելուց հետո, որը թույլ տվեց ասորեստանյան զորքին «Եփրատի այն կողմից» 28.800 խեթահպատակ բնակչություն գերեվարել²³⁵: Տարածաշրջանում Ասորեստանի ազդեցության ուժեղացումը շեր կարող շանհանգտացնել Հայկական լեռնաշխարհի երկրներին: Հավանաբար, Հայասայի ուշադրությունն այդ ժամանակաշրջանում թևեռված է եղել հարավից եկող Վտանգի վրա, սակայն արևմուտքից՝ Խարքի կողմից նույնական շեր կարող բացառվել հարձակումը: Այդ փուլում Խոտվայի խեթամետ դիրքորոշման ավարտ է արձանագրվել²³⁶, մյուս կողմից Հայկական լեռնաշխարհի հարավի սուրբարյան երկրները՝ Ալզին, Կաղմուխին, հակաասորեստանյան դիրքորոշում են ունեցել: Հայկական լեռնաշխարհի այս երկրները, հավանաբար, սերտ կապեր են ունեցել լեռնաշխարհում ազդեցիկ ուժ ներկայացնող Հայասա-Ազգի հետ՝ ուղղված ընդդեմ Ասորեստանի և Խարքի:

Տարածաշրջանում Խեթական տերության հավասարակշռող դերի նվազումը պետք է ստիպեր Հայկական լեռնաշխարհի երկրներին գտնել իրենց ինքնուրույն կենսագործունեության ապահովման ուղիներ ինչպես խեթերի, այնպես էլ Ասորեստանի

²³⁴ АВИИУ, 3, 5, 6.

²³⁵ АРИ, 1, §§ 773, 778. АВИИУ, 6, 7.

²³⁶ Քոյսյան Ա., Խոտվան (Ծոփքը) մ.ք.ա. XIII-XII դարերում. ՊԲՀ, 1997, թիվ 1, էջ 184-186:

նկրտումների դեմ²³⁷: Առավել նպատակահարմարը տվյալ պարագայում Հայկական լեռնաշխարհի այդ երկրների միջև դաշնակցային հարաբերությունների հաստատումն էր: Հավանական է, որ դաշնակցային հարաբերություններ են գոյություն ունեցել Ազգի, Խոսկայի և սուրարյան երկրների միջև և ուղղված են եղել Հայկական լեռնաշխարհի երկրներին արևմուտքից և հարավից սպառնացող վտանգների դեմ:

Թուղարժույթական Կոմիտաս Առնուլիսաս III-ը (Ք.ա. 1209-1207թթ.) և Սուպահլուղումաս II-ը (Ք.ա. 1207-XIIդ. սկզբ): Նախկինում Առնուլիսաս III-ի կառավարման շրջանով թվագրվող խեթահայասկան փոխհարաբերությունների վերջին փուլի հիմնական սկզբնապերյուր համարվող, պայմանականորեն «Պախսուվացի Միտա» անվանումը կրող տեքստն, ինչպես վերը նշվեց, այժմ վերաբարվել է Ք.ա. XIVդ. սկզբով:

Սուպահլուղումաս II-ը հանդիսացել է Խաթթի վերջին մեծ տիրակալը, որի օրոք, կամ նրանից հետո Խեթական տերությունը տրոհվել է, և արդեն Ք.ա. XIIդ. սկզբին Խաթթին իր նախկին սահմաններով Փոքր Ասիայում չի հիշատակվել:

Ք.ա. XIIդ. սկզբներին Խեթական տերության տրոհումից հետո Փոքր Ասիայում և հարակից շրջաններում տեղի ունեցան արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով հիմնավորապես վերափոխվեց քննարկվող տարածաշրջանի քաղաքական, երիկական և մշակութային պատկերը:

Վերջին շրջանում, շնորհիվ զգալի թվով նորահայտ գրավոր և հնագիտական նյութերի, Խեթական տերության անկման ընթացքն անվերապահորեն արտաքին գործոնին վերագրելու միտումը զգալի փոփոխություններ է կրել: Ուսումնասիրողներն այժմ ավելի շատ տեղ են հատկացնում ներքին քայլայիշ գործնքացներին՝ խնդիրը դիտելով ոչ այնքան որպես հետևանքը քշնամական հարձակման («ծովի ժողովուրդներ»), այլ Խեթական տերության քաղաքական կառույցի աստիճանական

²³⁷ Головлева Л., Царство Алзин второй половине II тыс. до н.э., Древний Восток, 1978, № 3, с. 72.

տրոհման՝ նրա բաղկացուցիչ մասերը հանդիսացող մի շարք կախյալ երկրների անկախացման ու տնտեսական ճգնաժամի արդյունքում²³⁸: Խարթիի անկման «տրոհման» տեսության համաձայն՝ այն հետևանք էր առաջին հերթին Ք.ա. XIIIդ. կեսերից երկրի ներսում տարեցտարի խորացող ներքաղաքական անկայունության, որը զլսավորապես բացատրվում է Մուրսիլս II-ի արքայատոհմի երկու ճյուղավորումների միջև ընթացող հակամարտությամբ՝ սկսած Խաթթուսիլս III-ից: Ք.ա. XIIդ. սկզբներին ներքաղաքական վայրիվերումների, տնտեսական լուրջ բարդությունների և կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության զգալի մասի զանգվածային արտազադրի հետևանքով Խեթական տերությունը տրոհվեց երեք քաղաքական միավորների՝ Թարխունտասսա (Փոքր Ասիայի հարավում), Կարգամիս (Հյուսիսային Ասորիքում) և Մելիդ (Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում):

Հենվելով կենտրոնական Փոքր Ասիայի՝ մոտավորապես Ք.ա. 1200թ. ավերված խեթական քաղաքների տեղաբաշխման քարտեզի վրա՝ Հ. Գյուտերովը կարծիք է հայտնել, որ խեթերի մայրաքաղաքը և հարակից քաղաքները հարձակման են ենթարկվել ոչ թե արևմուտքից կամ հարավից, այլ, հավանաբար, հյուսիս-արևելքից կամ արևելքից²³⁹, այսինքն՝ այն տարածքներից, որտեղ գտնվել են Կասկա և Հայասա երկրները: Խարթիի նախորդ ողջ պատմության ընթացքում կասկական ցեղերի մշտական հարձակումները խեթական բնօրբանի վրա բույլ են տալիս ենթադրել նրանց ակտիվությունը նաև Ք.ա. XIIIդ. վերջին և XIIդ. սկզբին: Դժվար է պնդել՝ արդյոք Հայասան մասնակցություն ունեցել է Խարթիի բնօրբանի վրա հարձակումներին, թե ոչ, սակայն զիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, որ Խարթիի կործանումից հետո անկում է ապրել նաև Հայասա-

²³⁸ Քոյսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 113-114:

²³⁹ Güterbock H., Survival of the Hittite Dynasty, Crisis, 1992, p. 53-55.

Ազգին²⁴⁰, տրոհման տեսության ի հայտ գալով՝ կարելի է բացառել:

Ք.ա. XIIԻ. Երկրորդ կեսին Հայասա-Ազգին հանդես է եկել՝ որպես անկախ երկիր և չի մտել ո՛չ Խաքքիի և ո՛չ էլ Ասորեստանի տիրապետության տակ: Ք.ա. XIIԻ. սկզբին Խաքքիի տրոհվելը մի շարք պետությունների նոր, ավելի մպաստավոր իրադրություն պետք է ստեղծեր Հայասա-Ազգին համար: Ասորեստանը նոյնական անկում է ապրել այդ ժամանակաշրջանում²⁴¹: Այսպիսով, տարածաշրջանում որևէ արտաքին լուրջ գործոն չկար, որը կարող էր բերել Հայասա-Ազգին կործանմանը:

Խեթական տերության տրոհման հետևանքով Ք.ա. XII-Հյդ. Մերձավոր Արևելքի պատմության Վերաբերյալ գրավոր աղյուրները կտրուկ նվազում են, իսկ եղած սահմանափակ նյութը լուսաբանում է զիսավորապես ներմիջազետքյան և ներեգիտական խնդիրները՝ բացառությամբ Ք.ա. XIIԻ. վերջերի և XII. առաջին կեսի ասորեստանյան տերստերի²⁴²: Հավանաբար, Հայասան իր գոյությունը պահպանել է նաև Ք.ա. XIIԻ. ընթացքում, սակայն ոչ որպես միասնական պետություն, այլ մի շարք բաղաքական միավորներից բաղկացած երկիր: Այդ միավորներն, ամենայն հավանականությամբ, մտել են ասորեստանյան սկզբնադրյուրներում հիշատակված Նախիք Երկրների կազմի մեջ²⁴³:

Ըստ մի շարք հեղինակների՝ Հայասա-Ազգին հանդիսացել է այն տարածքը, որտեղից սկիզբ է առել հայ ժողովուրդը: Այսպես, ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Հայասան հայ ժողովորդի նախահայրենիքը է եղել, և հայասական ցեղերը հիմքն են հանդիսացել հայ

²⁴⁰ Թարսեոյան Լ., Հայասա-Ազգին ուզմա-բաղաքական պատմությունից, ՏՀԳ, 1964, թիվ 7, էջ 78: Երեմյան Ս., Հայ ժողովորդի կազմավորման ընթացքը, ՊՈՀ, 1970, թիվ 2, էջ 36: Ալոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 52: Մանաճյան Յ., Օ некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 120. Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 94:

²⁴¹ Քոյսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական ինոնաշխարհը, էջ 139:

²⁴² АВИИУ, 10 - 18.

²⁴³ Хачатрян В., Наури и Армения, ВОН. 1976, № 8, с. 62.

ժողովրդի²⁴⁴: Նման եզրակացության էր եկել նաև Պ. Կրեչմերը: Ըստ նրա՝ Հայասա անունը նշանակում է Հայաստան, որի բնակիչներն իրենց հայ անունն այնուհետև ժառանգել են հնդկոպացի արմեններին²⁴⁵: Ըստ Գ. Ղափանցյանի՝ հայ-(sa) էր նիկական տերմինը նոյնական է «հայ» ինքնանվանը, և Հայասա-Ազգին նա համարել է հայերի նախնական բնօրրանը: Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ Խաքրիի տրոհումից հետո Հայասան առավել հզորացել է, և հայերի նախնիները՝ հայասացիները, ներքափանցել են հարավ՝ Մելիտենեի ողջությամբ, և Լեռնաշխարհի արևելյան կողմը²⁴⁶:

Սակայն Հայասա անունից չէ, որ առաջ է եկել հայ ցեղանունը, այլ՝ հայ անունից՝ Հայասա: Խեթերը, ծանոթ լինելով իրենցից արևելք ընկած երկրի բնակիչների հայ ինքնանվանը, նրանց երկիրը կոչել են իրենց լեզվական օրինաչափությունների համաձայն՝ Հայասա, այսինքն՝ հայերի հայ ինքնանվանն ավելացրել են իրենց լեզվին հատուկ տեղ, բնակավայր, երկիր ցույց տվող «ասա» վերջածանցը, որով և՝ Հայ+ասա երկրանունը:

²⁴⁴ Մարտիրոսեան Ն., Հայերնի յարաքերությունը հեթիղերնի հետ. ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453: Նոյմի, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 99: Նոյմի, Նպաստ մը հեր և հայ բառաքննության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 164-165:

²⁴⁵ «Հայ» անունը ըստ Պ. Կրեչմերի. ՀԱ, 1933, թիվ 7-8, էջ 431-432:

²⁴⁶ Իլր, 1, է. 125. Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 36-61:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհի ուշբրոնզեդարյան քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի և հոգևոր մշակույթի զարգացմանն անմասն չեր կարող մնալ Հայաստ-Ազգին: Պատմագրության մեջ հաճախ Հայաստան դիտարկվել է՝ որպես ցեղային միություն՝ ներկայացվելով որպես համեմատարար ավելի ցածր պետական համակարգ ունեցող միավոր²⁴⁷, որը մենք համարում ենք վիճարկելի: Քննարկենք պատմագրությունից մեզ հայտնի փաստերը:

Ինչպես վերը նշվեց, Հայաստայի նասին բոլոր տեղեկությունները մենք քաղում ենք խեթական սկզբնադրյուրներից: Խեթերն իրենց աղբյուրներում տարրերակել են թագավորական իշխանություն ունեցող միավորներն ու պարզապես ցեղային առաջնորդներով դեկավարվող քաղաքական կազմավորումները: Դրա լավագույն օրինակն է հանդիսանում կասկերի առաջնորդ Պիխսունիյայի դեպքը: Արևելակասկական Տիրիյա երկրի առաջնորդ Պիխսունիյան իրեն հոչակել էր թագավոր: Ինչպես արձանագրված է խեթական սկզբնադրյուրում, Կասկա երկրում մինչ այդ ընդունված չեր, որ մեկ մարդ իշխան երկրում, իսկ Պիխսունիյան սկսել էր Կասկայում կառավարել թագավորակերպ²⁴⁸: Այսինքն՝ խեթերը հստակ տարրերակում էին թագավորական իշխանությամբ օժտված անձին ցեղային առաջնորդից:

Խեթական արձանագրություններում Հայաստայում իշխող Կարաննին, Խուկկանան, Աննիյան իշխատակվել են՝ որպես թագավորներ²⁴⁹: Խիարկե, Հայաստ-Ազգի թագավորները Մերձա-

²⁴⁷ Меликишвили Г., Наури-Урарту, Тбилиси, 1954, с. 81, 86-87. Дьяконов И., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 82, 93. Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands, Xenia. Das Reich Urartu, 1986, B. I, S. 23.

²⁴⁸ Götz A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 88.

²⁴⁹ KUB XIX 11 IV 43 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, p. 66). KUB XVIII 2 (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի

Վոր Արևելքի հզորագույն տերությունների (Եգիպտոս, Ասորեստան, Բաբելոնիա) միապետների նման չեն կրել «մեծ թագավոր» տիտղոսը և Խարթիի արքաների կողմից չեն անվանվել «եղբայր», քանզի այդպես նրանք անվանում էին միայն նրանց, ում համարում էին մեծությամբ իրենց համազոր արքաներ: Սակայն, դրանով հանդերձ, Խարթիի թագավորները պայմանագրեր են կնքել խնամիական կապեր հաստատել և իրենց արքունիք հրավիրել Հայասայի թագավորներին. փաստեր, որոնք վկայում են, որ նրանք, այսուամենայնիվ, Խարթիի արքաների կողմից մեծ համարում են ունեցել:

Բուն հայասական տարածքից (Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատված) մեզ որևէ գրավոր վկայություն չի հասել Հայասա-Ազգիի վերաբերյալ, սակայն դատելով խեթական սկզբնադրյուրներում խեթահայասական նամակագրության հիշատակությունից²⁵⁰, հարկ է ճկատել, որ Հայասայի արքունիքում պետք է լիներ նաև դիվան իր դպիրներով, որոնք վարել են պետական գրագրությունը:

Յուրաքանչյուր պետության անվտանգության և հետագա գոյության կարևորագույն նախապայմանը և երաշխիքը բանակն է: Հայասա-Ազգին ի վիճակի եր ուզմադաշտ դուրս բերել 700 մարտակառքից և 10.000-անոց հետևազորից բաղկացած քանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից ուժ եր²⁵¹: Հայասայի զինվորները ներգրավվել են խեթական քանակ՝ որպես առավել մարտունակ զորական ուժ: Ազգիի զինվորները խեթական քանակում ծառայել են նաև՝ որպես մարտակառը վարողներ: Այսպես, խեթական արքա Սուպալիլութիւնաւ Ի-ը, Հայասայի արքա Խուկկանայի հետ կնքելով պայմանագիր, պահանջում էր նաև, որ Խուկկանան իրեն հարկ եղած դեպքում

տեղանունները, Երևան, 2004, էջ 136). KBo III 4 III 93 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 96).

²⁵⁰ Götze A., Die Annalen des Muršiliš, S. 94-99.

²⁵¹ Նոյն տեղում, էջ 122:

գորք տրամադրի²⁵²: Մուրսիլիս II-ը (Ք.ա. 1321-1295թթ.) իր տարեգրության 10-րդ տարվա իրաղարձությունների մեջ նշում է, որ Արիասա հայասական քաղաքն ավարի մատնելուց հետո հայտակեցրել է նաև Դուզզամա քաղաքը, որի բնակչությունը դիմադրություն ցույց չեն տվել: Խեթական արքան քաղաքը չի ավերում, փոխարեն՝ նա 3000 դուզզամացինների՝ որպես զինվորներ և կառամարտիկներ, տանում է Խաթթի²⁵³: Խնքնին խոսուն փաստ է, որից կարելի է եզրահանգել, որ քաղաքը և նրա շրջակա տարածքը, որտեղից հնարավոր էր գերեվարել 3000 զինվոր, ունեցել է մեծաքանակ բնակչություն:

Հետաքրքիր փաստ է նաև, այսպես կոչված, «Խուկկանայի պայմանագիրը»՝ խեթահայասական միջավետական հարաբերությունների ամենավաղ դրսևորումներից մեկը²⁵⁴: Պայմանագրում հիշատակված Հայասայի մարդկանց (ավագներ կամ աշխարհաժողով) որպես դաշինքի մասնակից կողմ հիշատակելը վկայում է այն մասին, որ Հայասա-Ազգիի քաջավորի իշխանությունը բացարձակ չի եղել: Հավանաբար, այն մոտ է եղել «Կյուրոպեղիայում» Քսենոփոնի հիշատակած հայոց քաջավորի իշխանությանը, որը, ինչպես և հոմերոսյան Հունաստանում, սահմանափակվել է ավագների խորհրդով՝ բուկով (Յօնլի), և ժողովրդական ժողովով՝ Էկլեսիայով (Էկկլησίա)²⁵⁵: Տեղին է հիշատակել նաև հայոց աշխարհաժողովը, որը դարեր շարունակ պետականակիր կարելոր համակարգ է հանդիսացել Հայաստանում և որի հիմքերն, ամենայն հավանականությամբ, կարող ենք գտնել հայսական ժամանակահատվածում:

Հայասա-Ազգիում, ամենայն հավանականությամբ, գոյություն է ունեցել նաև քրմական դաս: Հայաստանում հայտնարեր-

²⁵² Friedrich J., Staatsverträge des Ḫatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 117, 132.

²⁵³ Götze A., Die Annalen des Muršiliš, S. 130-139.

²⁵⁴ Friedrich J., Staatsverträge des Ḫatti-Reiches in hethitischer Sprache, S. 103-163. Carruba O., Die Hajasa-Verträge Hattis, S. 59-75. CTH 42.

²⁵⁵ Կրլաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. 1Vդդ.), Երևան, 2005, էջ 96:

Ված վիմական տվյալներից և Մովսես Խորենացու վկայություններից վստահ կերպով կարելի է եզրահանգել, որ քրմապետը Հայաստանում ևս, ինչպես և հարևան Երկրներում, քաջավորից հետո Երկրորդ դեմքն էր. Երբեմն քրմապետի պարտականությունները նույնիսկ միահյուսվում էին քաջավորի պարտականություններին, և միևնույն անձը հանդիսանում էր միաժամանակ և քաջավոր, և քրմապետ: Ասվածը կարելի է վերագրել նաև Հայաս-Ազգի ժամանակաշրջանին, եթե հաճախ քաջավորը հանդես էր գալիս նաև՝ որպես քրմապետ²⁵⁶:

Հայասայի դիցարանը ներկայացված է խեթական մի արձանագրության մեջ, որը, թերևս, խեթական և հայասական արքաների միջև կնքված համաձայնագրի մի հատված է: Այդ արձանագրության մեջ հիշատակվել են տասնշորս հայասական քաղաքների աստվածներ²⁵⁷: Ըստ այդ ցուցակի՝ կարելի է եզրահանգել, որ Հայասայի այդ 14 քնակավայրերում գոյություն են ունեցել «ռածաբարներ»՝ որպես այդ աստվածությունների պաշտամունքի կենտրոններ:

Խեթական սկզբնադրյուրներում հիշատակվում են Հայասա-Ազգի Երկու տասնյակից ավելի քաղաքներ (քնակավայրեր) (Արիսսա, Արիսիտա, Արնիյա, Գազու[...], Գասմիյախսա, Դուզգանա, Լախիրիսիլա, Լիտտա, Խալիլմանա, Խարսալասա, Կամ[...], Հայասա, Պախսուտեյա, Պատտեռ[...], Պարրայա, Տախ(ա)նիսարա, Տամատտա, Տավատենա, Ուտկունիսա, Ուրա, Քադկոսա):

Այսպիսով, խեթական սկզբնադրյուրներում հիշատակված Հայասա-Ազգի քաղաքները փաստում են այդ Երկրում քաղաքային կյանքի գոյության և այդ քաղաքներում հոգևոր պաշտամունքի կենտրոնների առկայության մասին:

Հայկական լեռնաշխարհի տվյալ ժամանակաշրջանի բնակչավայրերը և բերդ-շենքերը քաղաքական, առևտրական, տնտե-

²⁵⁶ Մովսես Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ Երրորդ հազարամյակում, Երևան, 2005, էջ 92 (տես՝ հղում 2):

²⁵⁷ Forrer E., Majasa-Azzi, Caucasicca, 1931, № 9, S. 6.

սական և ուզմական կենտրոններ էին²⁵⁸: Դրանք տեղաբաշխված էին հիմնականում կիկլոպյան տիպի ամրոցների շուրջ²⁵⁹: Այդպիսի հուշարձաններ ուսումնաժրվել են Հայկական լեռնաշխարհի տարրեր մասերում՝ Արարատյան դաշտավայրում, Ծիրակում, Վանանդում, Կարինի, Մուշի շրջաններում, Վասպուրականում, Տաշիր-Զորագետում, Ջավախիրում, Թուղթում, Արցախում և այլուր²⁶⁰:

Բարձր Հայքի և շրջակա տարածքների հնագիտական պեղումները նոր լուս են սփռում Հայասայի պատմության, մշակույթի և նրա քաղաքական ու տնտեսական կապերի վրա: Կատարված հնագիտական պեղումները, սակայն, հնարավորություն չեն ընձեռում փաստել այդ տարածքում խոշոր բնակավայրերի գոյության մասին. դրանք կարելի է փնտրել դեպի արևելյան ընկած տարածքում՝ հետագայի Մեծ Հայքի Տուրութերան, Այրարատ և Տայք աշխարհներում:

«Խուկանայի պայմանագրի» մի հատվածից կարելի է եզրակցնել, որ հայասացիներն ունեցել են զարգացած երկրագործություն և անասնապահություն, քանի որ խնքական կողմն ի դեմս Սուպափլուղումաս I-ի, սպանում էր պայմանագիրը խախտելու դեպքում ավերել և ոչնչացնել նրանց տները, դաշտերը, խաղողի այգիները, արոտները, անասունները և այլն²⁶¹:

Ներկայիս Երզումի մարզի տարածքը, որտեղ գտնվում են Սոս, Գյուղելովա, Բլուր, Կարագ (Արծն) հնավայրերը, հնուց ի վեր հայտնի է եղել իր տնտեսական նշանակությամբ: Տարածաշրջանի գյուղատնտեսական զարգացմանը զգալի կերպով

²⁵⁸ Аресян Г., Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков, Научные сообщения, Москва, 1978, № X, с. 91-108.

²⁵⁹ Belli O., Konyar E., Archaeological Survey on Early Iron Age Fortresses and Necropoleis in Northeast Anatolia, Istanbul, 2001, p. 331- 335. Özfirat A., Research on the Cultures of East Anatolia in the 2nd Millennium B.C., Istanbul, 2001, p. 326.

²⁶⁰ Карапетян Л., Производящее хозяйство и духовная культура племен Армении в эпоху поздней бронзы и раннего железа, Ереван, 1980, с. 31.

²⁶¹ Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 Т., 1930, S. 134-136 (տես՝ հավելված 10).

նպաստել է գետային ցանցը: Մարզի տարածքից են սկիզբ առնում Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերից՝ Երեքը՝ Արևմտյան Եփրատը, Արաքսն ու Շորոխը, որոնք իրենց ջրային խլու ցանցով ոռոգման լայն հնարավորություններ են ստեղծում Երկրագործության զարգացման համար: Այդ առումով առավել բարենպաստ պայմաններ ունեն Երզրումի ու Բասենի դաշտերը²⁶²: Հայաստանի ուշբոնզեղարյան բնակատեղիները, որոնք, որպես կանոն, գետեղված են համեմատաբար բարձրադիր վայրերում, գետերի ափերին կամ նրանցից ոչ հեռու՝ տափարակ ու բարերեր դաշտերի մեջ, գրավում են մի քանի հեկտար տարածություն: Բնակատեղիների ու նրանց կից ցանքատարածությունների այսպիսի տեղադրությունը լայն հնարավորություններ է ստեղծել մշակելի հողատարածությունների ոռոգման համար: Երկրագործությունը զարգանում էր գերազանցապես մեծ ու փոքր գետերի, արհեստական ջրանցքների ու առուների ջրերով ոռոգվող հարթակներում ու բարերեր հովիտներում: Երկրի բարձրադիր շրջաններում՝ ալպյան մարգագետիններին կից, ստեղծվում էր ջրանցքների ու ջրավազանների մի ամրող համակարգ²⁶³:

Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում զարգանում էր նաև անասնապահությունը: Այստեղ, ի տարբերություն երկրի նախալեռնային ու լեռնային շրջանների, որտեղ հիմնական հարստությունը մանր եղջերավոր անասուններն էին, առաջատար հշանակություն էին ստանում խոշոր եղջերավոր անասունները, որոնք լայնորեն օգտագործվում էին Երկրագործության մեջ՝ որպես քաշող ուժ²⁶⁴: Տարբեր բնակավայրերի պեղումների ժամանակ գտնվել են ընտանի կենդանիների՝ կովերի, եղների, ոչխալների, այծերի, խոզերի, ավանակների, ծիծերի ու շների կմախքների մնացորդներ²⁶⁵:

²⁶² Սելյոնյան Ա., Երզրում, Երևան, 1994, էջ 29-30:

²⁶³ Կարպետյան Լ., Աշխ., աշխ., էջ 33-44:

²⁶⁴ Նոյյան տեղում, էջ 53-72:

²⁶⁵ Նոյյան տեղում, էջ 53-72:

Հայասական քանակում եղել են մարտակառքեր, և դրանից ելենլով՝ կարելի է եզրակացնել նաև Հայասա-Ազգիում ծիարուծության գոյության մասին: Ծիարուծությունը դարեր շարունակ հանդիսացել է Հայկական լեռնաշխարհի բնակչության հիմնական անասնապահական ուղղություններից մեկը:

Փաստական նոր նյութի և հայտնի աղբյուրների քննական մեկնարանությունը թույլ է տալս պատկերացում կազմել Հայասա-Ազգի մասին: Այն ուզմական նշանակալի կարողություններ ունեցող պետական միավոր էր, որն ի վիճակի էր հավասար պայքար մղել ժամանակաշրջանի հզոր տերություններից մեկի՝ Խաքրիի դեմ: Որոշակի ժամանակահատվածում Խեթական պետության և Հայասայի միջև դաշնակցային հարաբերություններ էին հաստատվել: Հայասան, որպես պետական միավոր, ունեցել է իր տարածքը, քանակը, արքունիքը, դիցարանը, քաղաքային կենտրոնները: Դատելով «Խուկկանայի պայմանագրից», քաղաքորի իշխանությունը, հավանաբար, փոխանցվել է ժառանգարար: Հայասայի բնակչությունը Վարել է նստակյաց կյանք, ունեցել է բավականին զարգացած տնտեսություն:

Հարևան լինելով Խեթական պետությանը՝ Հայասան չէր կարող իր վրա չկրել նրա քաղաքական, մշակութային ու տնտեսական ազդեցությունը: Սակայն միևնույն ժամանակ, հանդես գալով որպես ինքնուրույն պետական և մշակութային միավոր, Հայասա-Ազգին իր ամբողջականությամբ մասն էր կազմում Հայկական լեռնաշխարհի միասնական քաղաքական, մշակութային, տնտեսական արեալի, որի արմատները Ք.ա. III հազարամյակում էին, և որն իր շարունակական զարգացումն է ունեցել նաև հետագա դարերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՑ

Հայկական լեռնաշխարհում Հայաստի տարածքային ընդգրկման խնդրի լուծմանը զգալիորեն նպաստելու է գալիս հնագիտական նյութի և խեթական սեպագիր աղբյուրների տվյալների համադրումը: Լեռնաշխարհի ուշբրոնգեղարյան հնագիտական վայրերի ժամանակագրական շղթայի մեջ ընդհանրությունների դիտարկումով հնարավորություն է ընձեռվում համակարգված մոտեցմամբ քննարկել Հայաստ-Ազգի հուշարձանների պատմական նշանակության խնդիրը:

Հայաստի թագավորության պատմությունն, ըստ խեթական սեպագիր սկզբնադրյուրների, ընթացել է Ք.ա. XIV-XIII դդ.: Այդ ժամանակահատվածը հնագիտորեն համընկնում է զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանին:

Հայաստ-Ազգի տարածքը մասնագետների մեծ մասը տեղորոշում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածում՝ որպես կենտրոն նշելով հիմնականում Բարձր Հայքը և հարակից տարածքները²⁶⁶. Ներկայումս այդ տարածաշրջանում փաստագրված են հնագույն ժամանակներից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հնավայրեր:

²⁶⁶ Forrer E., Hajasa-Azzi, Caucasica, 1931, № 9, S. 11. Ալոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 46: Կառաւան Ղ., Հայաս-կօլենել արման, Երևան, 1948, ս. 27. Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմակորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 30: Քոյսյան Ա., Մթ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 166:

Կարին-Երգումի շրջանը Հայկական լեռնաշխարհի բրոնզե-դարյան մշակութային արեալի մասն էր կազմում: Այս տարածքը մտնում էր Հայաստան-Ազգի կազմի մեջ և կապող կամուրջ էր հանդիսանում մի կողմից Արարատյան դաշտավայրի, Գուգարքի բրոնզեդարյան զարգացած շրջանների, մյուս կողմից՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջանների բնակավայրերի միջև: Կարագ, Բլուր, Գյուղելովա, Սոս հնավայրերն այս տարածքում ուշբրոնզեդարյան բնակավայրերի գոյության կարևոր վկայություններն են:

Երգումի շրջանում կատարված հնագիտական պեղումներն ի հայտ բերեցին Ք.ա. II հազարամյակի, մասնավորապես՝ ուշբրոնզեդարյան մշակույթի առկայությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում: Այս փաստը հիմնված է Երգումի շրջանի մի շարք բլուրներից, մասնավորապես՝ ներկայիս Բուլամաչ հյոյուք (գտնվում է Երգումից 30կմ դեպի արևելք՝ Հասանկալայի մոտ), Սոս հյոյուք, Ուզումահմեղ (գտնվում է Երգումից 15կմ արևելք), Էսկիշեհիր քամին (գտնվում է Երգումից 5կմ արևելք) կոչվող հնավայրերից պեղված խեցեղենի ուսումնասիրության վրա: Այս բլուրներից պեղված նյութը պատկերացնում է տալիս այն մասին, որ այս շրջանում վաղբրոնզեդարից մինչև երկարի դար ընկած ժամանակահատվածում բնակավայրեր են գոյություն ունեցել: Հնավայրերից պեղված խեցեղենը պատրաստված է բրուտի անիվի՝ դրագի վրա՝ ավազախառն կավից, մակերեսը սև ու կարմրավուն է, լավ հղկված է և ունի տեղական մշակույթին բնորոշ գծեր, սակայն գորկ չեն խեթական մշակույթի որոշ ազդեցությունից²⁶⁷:

Sos Höyük (Սոս) հնավայր-բլուրը գտնվում է Երգում քաղաքից 25կմ դեպի արևելք: Ակսած 1994թ.-ից՝ բուրք-ավաստրալական միացյալ հնագիտական արշավախումբն Անտոնիո Սագոնայի գլխավորությամբ ավելի ինտենսիվ կերպով շարունակեց բնակավայրի պեղումները: Պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը վերաբերում են տարբեր ժամանակաշրջանների՝ առնվազն Ք.ա. III հազարամյակից սկսած մինչև միջնադար (XIIIդ.):

²⁶⁷ Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, AST, 1988, № 5/2, s. 51-65.

Ժամանակագրական տարրեր շերտերի առկայությունը վկայում է, որ Սոսում կյանքը հարատևել է դարեր շարունակ: Սոսը բնակեցված է եղել նաև Ք.ա. II հազարամյակում: Այս հնավայրի հյուսիսային մասն ուշրոնզեղարյան ժամանակահատվածում արտադրական կենտրոն է եղել: Այրված և կտրտված ուվարերի և օջախի մնացորդները, որոնք գտնվել են այնտեղ, հաստատում են, որ այդ մասում գտնվել է մասմբերքի մշակման կենտրոն: Սոսում գտնվել են տների և շինուազների հետքեր: Բոլոր շերտերում հայտնաբերված կառույցները բաղկացած են զավիթներից, կլոր կացարաններից ու հարակից քառանկյունի տնտեսական շինուազներից, որոնց հարդախտան աղյուսն պատերը հենվում են քարե հիմնապատերի վրա: Տներն իրենց ներքին հարդարանքով նման են Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի նմանատիպ շինուազներին, սակայն տարբերվում են նախագծով և կառուցվածքով: Տների մոտ գտնվել են նաև հորեր՝ նախատեսված սննդամբերը պահելու համար: Սոս հնավայրում հայտնաբերվել են օրսիդիանե աշխատանքային գործիքներ: Այստեղից պեղված խեցեղենը սերտ առնչություն ունի Թուեղի խեցեղենի հետ: Դրա գերակշռող մեծամասնությունն ունի սև փայլեցված մակերես և գունավոր, սովորաբար կարմրավուն ներքին մաս: Երբեմն հանդիպում են նաև գորշ, վարդագույն և մոխրագույն մակերես ունեցող ամանենք: Գտնվել են լայնափոր սափորներ, որոնք ունեն «նախիջևանյան» տիպի բռնակներ: Խեցեղենի վրա արված նախշագարդերը հիմնականում աճորների վերին մասում են: Սոսի խեցեղենը սերտորեն առնչվում է նաև Բլուրի և Գյուղելիվայի խեցեղենի հետ²⁶⁸:

²⁶⁸ Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, s. 58-59. Sagona A., Sagona C., Özkorucuklu H., Excavations at Sos Höyük 1994, AnSt, 1995, № 45, p. 193-218. Նույնի, Excavations at Sos Höyük-1994, KST, 1995, № XVII, 1, p. 151-155. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1995, AnSt, 1996, № 46, p. 27-52. Sagona A., Erkmen M., Sagona C., Howells S., Excavations at Sos Höyük, 1996, Anatolica, 1997, № XXIII, p. 183-186. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1997, KST, 1998, № XX, 1, p. 205-206. Sagona A., Sagona C., Excavations at Sos Höyük, 1998 to 2000, ANES, 2000, № 37, p. 66-68.

Էրզրումից 16կմ դեպի հյուսիս-արևմուտք տեղորշվում է նշանակոր Karaz (Կարազ) հնագիտական վայրը: Կարազը (Ղարաբ, Կար Արծն) գտնվում է հին հայոց Արծն քաղաքի մոտ: Այստեղ պեղումներ են իրականացվել դեռևս XXդ. 40-ական թթ.: 1942թ. Հ. Քոչարը և Արա օգնական, Ք. Թուրքանը կատարել են փորձնական պեղումներ, այնուհետև դրանք շարունակել են 1944թ.-ին:

Կարազի համայնքում գտնվել են նյութեր, որոնք վերաբերում են Լնեոլիթից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Այստեղ հայտնաբերվել են կավե կլոր անորներ, լայնաբերան սափորներ, ծեռքի ապարանջան, կավե օջախներ և այլն: Խոցեղենը հիմնականում տեղական է՝ բնորոշ զարդանախշերով: Հայտնաբերվել են մեծ քանակությամբ օբյեկտներ՝ աշխատանքային գործիքներ: Այսպես կոչված՝ «Կարազի մշակույթը» նույնականացվել է առաջարկություն ունի Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակույթի հետ²⁶⁹: Ըստ հնագետ Ք. Քյորքենի կողմից Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջաններում իրականացված հետազոտությունների արդյունքների՝ Կարազի նյութական մշակույթի ոճը հանդիպում է Բարերդի և Երզնկայի շրջաններում: այն իր արեալի մեջ էր ընդգրկել նաև Երզնկայից հյուսիս գտնվող Pulur Höyük (Բլուր) հնավայրը: Կարազի նյութական մշակույթի ոճի ազդեցությունը նկատելի է նաև Վան լճի ավազանում²⁷⁰:

Pulur-ը (հայկական՝ Բլուր) նույնականացվել է հայտնի հնավայր է: Այն գտնվում է Էրզրումից 20կմ դեպի արևմուտք: Այս հնավայրում նույնականացվել է առաջնաբարություններ են կատարվել դեռևս XXդ. 40-ական թթ.-ին²⁷¹: Բլուրում պեղվել են Ք.ա. II հազարամյակի դամ-

²⁶⁹ Lamb W., The Culture of North-East Anatolia and its Neighbours, AnSt, 1954, № 4, p. 21-32. Koşay H., Turfan K., Erzurum-Karaz kazisi Raporu, TTKB, 1959, № XXIII, s. 349-413. Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, XXX, s. 152-158.

²⁷⁰ Lamb W., նույն տեղում:

²⁷¹ Kökten K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yapılan tarih öncesi araştırmaları, TTKB, 1944, № VIII/32, s. 659-680. Նույնի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında

բարաններ, որտեղից հայտնաբերվել է մեծ քանակությամբ խեցենեն: Ուշրոնգելարյան Բլուրի գերեզմաններն ուշագրավ են իրենց ձևով ուշափով: Բլուրում գտնվել է երեք գերեզման՝ 2 մ երկարությամբ: Սահացածների դիակները փառարված են եղել պատաճի մեջ: Թաղվածներց մեկը (III գերեզման) մի ծեր կին է, որի հետ հայտնաբերվել է արծաթե կրծքազարդ, իինգ բրոնզե ասեղ և երկու բրոնզե պապարանջան: Կարևոր է շեշտել, որ երկու գերեզմաններում գտնված բրոնզե նետասայրերը շատ նմանատիպ օրինակներ ունեն Թուերի համաժամանակյա գտածների մեջ: Պեղված բրոնզե նյութերը բվազրվում են Ք.ա. XIII-ի. վերջով և XII-ի. սկզբով, իսկ գերեզմանափոսերում գտնված կավանորմների մի մասը՝ Ք.ա. XIV կամ XIII դարերով: Թաղման արարողությունների ժամանակ ընտանի կենդանիներ են զոհաբերվել, և նրանց մնացորդները դրվել են գերեզմանափոսերում²⁷²: Այսպիսի բարումները փաստում են, որ մեր նախնիները հավատացել են անդրշիրխմյան կյանքի գոյությանը, այդ իսկ պատճառով դամբարանների մեջ աճյունի հետ միասին տեղակորել են կերակուր ու տնային սպասքի առարկաներ, զենքեր և աշխատանքային գործիքներ, զարդեր, սպանված կենդանիների մարմիններ, որոնք պետք է շարունակեին ծառայել տիրոջը հանդերձյալ կյանքում:

Ներկայումս GÜZELOVA (Գյուզելովա, հայ.՝ Գեղեցիկ դաշտ) կոչվող հուշարձանը գտնվում է Էրզյումից 15կմ դեպի հյուսիսարևելք: Այստեղ պեղումներ կատարվել են 1961թ.-ին: Պեղումներից ստացված նյութը վերաբերում է էնեոլիթից մինչ միջնադար ընկած ժամանակահատվածին: Այս բնակավայրը ևս բնակեցված է եղել Ք.ա. II հազարամյակում²⁷³:

Bayburt çevresinin yeri, 1945, № III/5, s. 465-505. Koşay H., Pulur ve Güzelova, TTKY, 1964, № XVII, 1, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzeysel Araştırması, s. 45-76. Նույնի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, XXX, s. 153-158.

²⁷² Koşay H., Vary H., Die Ausgrabungen von Pulur, Ankara, 1964.

²⁷³ Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967. Koşay H., Pulur ve Güzelova, s. 91-94. Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 153-158.

Բլուրից, Գյուգելովայից գտնվել են բրոնզե ապարանջաներ, ուղղվածներ, խեցեղեն, ոսկրե, օրսիդիան և փայտե իրեր²⁷⁴: Բլուրի դամբարաններից պեղված անորթները Կարազից, Գյուգելովայից գտնված անորթների հետ մի մշակութային շղթա են կազմում: Մյուս կողմից Բլուրի, Գյուգելովայի անորթների ձևերը նույնապես սերտ առնչություն ունեն Լեռնաշխարհի արևելյան մասի նույնատիպ խեցեղենի հետ: Բլուրից գտնված իրերը զուգահեռներ ունեն Թոեղըի մշակույթի հետ: Այդ նմուշները քազարվում են Ք.ա. XIV-XII դարերով: Զուգահեռներ կարելի է անցկացնել նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան մասից և Կարազից, Բլուրից գտնված ծայրակալների, դաշույնների, բրոնզե ապարանջանների, ուղունքների միջև: Բլուրի բրոնզե ապարանջանների և ուղունքների տիպեր կարելի է նկատել հետագա Վանի բազավորության նույնատիպ օրինակներում²⁷⁵:

Ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում բարձր զարգացման էր հասել երկրագործությունը: Ք.ա. II հազարամյակի վերջին դարերի բնակավայրերում հնագետները գտել են կարասներ, հացահատիկի բազմաթիվ մեծ հորեր: Երկրագործության բարձր զարգացման նախն են խոսում են ոչ միայն կավե ամանեղենի վրա պահպանված տարրեր բույսերի զարդապատկերներն ու պտղաբերության կամացի արձանիկները, որ բրոնզեդարյան բնակավայրերում համարվում են ամենուրեք, այև զանազան նյութերից բաղկացած գործիքների քանակն ու բազմազանությունը, որոնք ծառայում եին վար ու ցանքի, բերքահավաքի ու գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար²⁷⁶:

²⁷⁴ Kökten K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yapılan tarih öncesi araştırmaları, s. 659-680. Նույնի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 465-505. Koşay H., Pulur ve Güzelova, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, s. 45-76. Նույնի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 153-158. Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967.

²⁷⁵ Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 154-155.

²⁷⁶ Карапетян Л., Производящее хозяйства и духовная культура племен Армении в эпоху поздней бронзы и раннего железа, Ереван, 1980, с. 44-53.

Տնտեսության հիմնական ճյուղերին առընթեր զարգանում էր Հայկական լեռնաշխարհի ուշբրոնզեդարյան արհեստագործությունը, առաջին հերթին՝ խեցեգործությունը, որն անմիջականորեն կապված էր երկրագործական և անասնապահական մքերքների պահպանման, վերամշակման, տնային տնտեսության այլևայլ կարիքների հետ։ Բրուտները կավից պատրաստում էին տնտեսական և պաշտամունքային իրեր՝ հսկա կարսաներ, զանազան ամանեղին, կափարիչներ, պատվանդաններ, օգախներ ու նրանց տարատեսակ հենակներ, պղնձե իրեր ծովելու կաղապարներ, մարդու և կենդանիների արձանիկներ։

Ինչպես Արևելքի երկրագործական մարզերում, այնպես էլ Հայաստանի լեռնադաշտերում յուրաքանչյուր «համայնական տուն» քաղկացած էր կլոր ու քառանկյունի շինությունների միաւոհակ մեկուսացված խմբերից։ Կլոր կացարանների շուրջը համախմբված քառանկյունի շինություններն՝ իրենց մեծ ու փոքր հորերով, շտեմարաններով կամ պարզապես հարք հատակներով, հացահատիկի պահեստներ էին ու փարախներ ընտանի կենդանիների համար։ Կլոր կացարաններում որոշակի դասավորությամբ հանդես են զալիս կավակերտ երկարուկ նատարանները կամ մահճակալները, հատակի մեջ քաղված կարասներն ու պատի որևէ անկյունում պատրաստված օջախը՝ մոխրի ու սևացած ամանների մնացորդներով։ Օջախների մոտ հաճախ գտնվում են սանդեր, ծեծիչներ, աղորիքներ։ Կացարանների կենտրոնական մասում փորված է հացահատիկի հորը, որի եղթին կանգնեցվում էր պտղաբերության կանացի քարե արձանիկը։

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որի Ք.ա. II հազարամյակի հնագիտությունը կարևոր է Հայասա-Ազգի պատմության ուսումնասիրության համար, ճորոխ ու Գայլ (Լյուկոս) գետերի հովիտներն են։

Ուսումնասիրողների մեծ մասը, վերականգնելով խեթական քաղաքական աշխարհագրությունը, կարծում են, որ Վերին Երքաղաքական աշխարհագրությունը, կարծում են, որ Վերին Երքաղաքի գտնվում էր մերկայիս Սեբաստիա քաղաքի և Երիս ու Գայլ

գետերի ավազաններում²⁷⁷: Վերին Երկրից արևելք գտնվում էր Հայաստան: Վերին Գայլ գետի հովիտը, հավանաբար, այն շրջանն էր, որտեղ կասկական արևելյան ցեղերը շփվել են հայասցիների հետ:

Այս տարածքում՝ ներկայիս Գյումուշխանեի նահանգի Բարերդի և Կելկիսի (անունն ածանցվում է Գայլ գետի անունից և նրա աղավաղված տարբերակն է՝ Գայլ գետ-Կելկիս²⁷⁸) շրջաններում, 1980-ական թթ. վերջում սկսված հնագիտական աշխատանքներն ի հայտ բերեցին բազմաթիվ հնավայրեր²⁷⁹: Ուսումնասիրքել են 60-ից ավելի հնավայրեր, այդ թվում նաև՝ հնագետ Ք. Քյորքենի կողմից հիշատակված 5 վայրերը Բարերդի շրջանում, որտեղ նա եղել էր 1940-ական թթ. իր հնտագոտական արշավանքի ժամանակ²⁸⁰: 12 միջին չափի հնավայր-բլուրների մեջ են նաև Տերեսիկ (հայ.՝ Փոքր կատար, որի մասին զեկուցել է Ք. Քյորքենը՝ որպես Siptoros՝ Սուլը Թորոս հայկական բնակավայրի անվան աղավաղված ձևը²⁸¹), Kitre, Gundulak, Pülür Tere և այլ առավել լավ ուսումնասիրման կարոտ մի շարք հնավայրեր: Մեծ բլուրներ են Տօշութիւն-ն (զեկուցված Ք. Քյորքենի կողմից Hindi անվանք), Բլուրը՝ Gökcedere գյուղում, Karakilise Tere-ն (Աև Եկեղեցու զագաք), Çorak Höyük-ը (Զորակ հայկական բնակավայրի աղավաղված անվանումը²⁸²), Cengiler Tepesi-ն (Ցանքի լեռ), Büyüük Tere-ն՝ առանձնացված Կüçük Tere-ից բամբարդով, Kilise Tere-ն (Վանքի զագաք) և այլն²⁸³: Բարերդի շրջանում հնտագոտությունները

²⁷⁷ RGTC, VI, S. 293-294.

²⁷⁸ Մելքոնյան Ա., Երզրում, Երևան, 1994, էջ 32:

²⁷⁹ Sagona A., An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: Pre-classical Period, AST, 1989, № 7, p. 425-433.

²⁸⁰ Kötken K., Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 479-486, 498-505.

²⁸¹ Մելքոնյան Ա., Երզրում, էջ 161:

²⁸² Նույն տեղում:

²⁸³ Sagona A., նշվ. աշխ., էջ 425-433:

շարունակվեցին նաև XXդ. 90-ական թթ.-ի սկզբին՝ Բüyükterec Հöyük-ի պեղումների հետ միասին²⁸⁴:

Бüyükterec Հöyük (Բյույուքթէփի, հայ.՝ Մեծ գագաթ, այլ կերպ կոչվում է նաև Ikitzterec) կոչվող հնավայրը գտնվում է Բարերդից 30կմ դեպի հարավ-արևմուտը՝ Çiftetas (Չիֆթէքաշ) գյուղի մոտ: Այն Բարերդի դաշտում է՝ պատմական Սպեր գավառում: Այս հնավայրը հայտնագործվել է 1988թ.-ին Մելքոնի համալսարանի արշավախմբի կողմից, որը կանոնավոր պեղումներ սկսել է 1990թ.-ից: Ընդհանուր առմամբ, հնավայրից պեղված նյութը թվագրվում է վաղբրոնզեդարից մինչև վաղ հոոնեական ժամանակաշրջանը: Բյույուքթէփիյի Ք.ա. II հազարամյակի խեցեղենը նույնապես մուգ է, պատրաստված բրուտի անիվի վրա, փայլեցված է ու զարդանախշերով²⁸⁵, որը, կարծում ենք, նույնապես առնչվում է Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակութային ձևերի հետ²⁸⁶:

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որի՝ Ք.ա. II հազարամյակի հնագիտուրյունը կարևոր է ուսումնասիրության համար, նորոյն գետի հովիտն է: Հայկական լեռնաշխարհում Անծովի ավագանի ամենախոշոր գետը նորոյն է: Այն նաև Լեռնաշխարհի ամենաջրառատ գետերից մեկն է: Դեռ հնուց օգտագործվել է լաստառաքան նպատակներով: Արդվինից ցած գետը նապարկելի է ոչ խորանիստ նավերի համար: Բազմամետաղենապարկելի է ոչ խորանիստ նավերի համար:

²⁸⁴ Sagona A., Bayburt Survey, 1990, AST, 1991, № 9, p. 397-403. Նույնի, Bayburt Survey, 1991, AST, 1992, № 10, p. 261-268.

²⁸⁵ Sagona A., Pemberton E., McPhee I., Excavations at Büyüktöreç Höyük, 1992, AnSt, 1993, № 43, p. 69-83. Նույնի, Büyüktöreç Höyük 1993 Activities, KST, 1994, № XVI, 1, p.161-164.

²⁸⁶ Ներկայիս բուրք հնագիտների մոտ կա չիմենավորված մոտեցում Արևմտյան Հայաստանի (ըստ Երանց՝ Արևելյան Անսատովիա) ուշրոնզեդարյան մշակույթը առանձնացնել Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի համաժամանակյա մշակույթից՝ փորձելով դրանով ոչ մի կապ շտեսնել այդ երկու մասերի ուշրոնզեդարյան մշակույթի միջև, ավելի՛ փորձ է արվում կապ տեսնել Կենտրոնական Եվրասիայի բույրական և լեռնաշխարհի այդ մասի Գüzelova'da գεշ Karaz Kültürü evresi Yerleşmeleri ile ilgili arkeolojik keşifler, Doğudan yükselen ışık ışık arkeoloji yazıları, 2007, s. 267-324):

թը, ոսկին, արծաթը, գորշ ածխի պաշարները նորոխ գետի ավազանում մեծ հնարավորություն կարող էին ստեղծել լեռնահանքային գործի զարգացման համար²⁸⁷:

Բարերդի, Կելիխտի, Երզրումի շրջանների հնավայրերից հայտնաբերված հնագիտական նյութերի մի մասը վերաբերում է ուշ բյոնզի ժամանակաշրջանին, և դրանք կարելի է համարել Հայասայի նյութական մշակույթի իրեղեն փաստեր: Դրանց բվազրման համար ամենակարևոր տվյալները տալիս են հայտնաբերված խեցեգործական իրերը:

Բարձր Հայքի և հարակից տարածքների հնագիտական պեղումներն ի հայտ բերեցին հարուստ խեցեգործական արտադրանք: Ընդհանուր առնամբ, այդ ժամանակաշրջանի ամբողջ խեցեղենը պատրաստված է բրուտի անիվի վրա և դասակարգվում է երկու հիմնական խմբերի՝ միաերանգ և բազմերանգ գունազարդ խեցեղեն և հասարակ, առանց նախշազարդերի խեցեղեն: Անորների կավի քիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք պատրաստված են տեղում՝ տեղական հումքով: Բազմերանգ գունազարդված անորները պատրաստված են բարձր վարպետությամբ և տեխնիկայով: Չարդամոտիվները ցույց են տալիս առաջնորդաց՝ ավելի հարուստ երկրաշափական մոտիվներ, վերադիր կենդանակերպ զարդեր: Երկու խմբերում դիտարկվող ընդհանուր հատկանիշներից մեկն այն է, որ զարդամոտիվներն արված են անորների վերին հատվածում: Միաերանգ գունավոր մոտիվները կատարված են սև գույնով՝ բաց դարչնագույն ֆոնի վրա: Անորները հիմնականում լավ փայլեցված են: Բազմերանգ խեցեղենի վրա, որը համեմատարար ավելի բարդ է իր բազմատեսակ մոտիվներով, քան միաերանգ խեցեղենը, զարդամոտիվների մեծ մասը երկգույն են, շատ հաճախ՝ աղյուսագույն ու սև, կամ աղյուսագույն ու դարչնագույն: Նախշազարդերը գերազանցապես ներկայացված են մեծ ու փոքր եռանկյունի-

²⁸⁷ Գարրինյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000, էջ 187-188:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայաստանի հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար արժեքավոր նյութ են տալիս հնագիտական պեղումները և խեթական սեպագիր աղբյուրների տվյալները, որոնցում որոշ տեղեկություններ կան նաև նրա լեզվի և դիցարանի մասին:

Խեթերը պաշտել են ոչ միայն խեթական, այլ նաև իրենց հարևան և հեռավոր ժողովությունների քազմաթիվ աստվածությունների²⁹⁰, դրանց շարքում նաև՝ Հայաստանի աստվածներին: Խեթական տերության պետական վագերագրերը պետք է գերազույն աստվածների և աստվածությունների հովանավորության տակ լինեին, այդ պատճառով գրագիրները կազմում էին բոլոր տեղական աստվածությունների ցուցակները, որոնց պետք է նշեին պայմանագրերի ու քաջավորական իրամանագրերի մեջ: Ծատ տեղական աստվածություններ խմբավորվում էին՝ ըստ իրենց միանման գործառությունների, այդ պատճառով հարմարության համար խեթերն այդ աստվածությունների անվանումները համապատասխանեցրել են իրենց լեզվաշխարհին և կրոնական պատկերացումներին՝ դրանք դարձնելով ավելի հոգեհարազատ²⁹¹:

Այսպես, Սապագուրվանտա խեթական քաղաքում այլ երկրների աստվածների շարքում հիշատակվել է նաև «Ազգի երկրի Ամպրոպի աստվածը»²⁹²: Հիշատակություն կա նաև «Հայաստանի Ամպրոպի աստծո» և նրա արձանիկը սպասարկող քուրմ Վաննիի մասին²⁹³: Այլ խեթական տերստերից հայտնի է նաև, որ զոհեր են մատուցվել Հայաստան քաղաքի U.GUR աստծու²⁹⁴:

Հայաստանի դիցարանը ներկայացված է խեթական մի արձանագրության մեջ, որը, թերևս, խեթական և հայաստանական ար-

²⁹⁰ Haas V., Geschichte der hethitischen Religion, Leiden, New York, Köln, 1994, S. 539-615.

²⁹¹ Герни О., Хетты, Москва, 1987, с. 119.

²⁹² Bo 434 IV 18 (Forrer E., Hajaşa-Azzi, Caucasicca, 1931, № 9, S. 22).

²⁹³ KUB XII 2 24 (Forrer E., նշվ. աշխ., էջ 23: Թույան Ա., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, էջ 239).

²⁹⁴ KBo IV 13. KUB X 82 (Forrer E., նշվ. աշխ., էջ 22).

քաների համաձայնագրի մի հատված է: Այն առաջին անգամ հրատարակվել է Է. Ֆոռերի կողմից: Այդ արձանագրության մեջ հիշատակվել են տասնչորս հայասական քաղաքների աստվածներ, որոնցից երկուսը՝ գաղափարագրով ներկայացված Ամպրուի աստված ՈՒ-ն և ՈՒnagaštaš աստվածությունը, կրկնվում են²⁹⁵: Հայասա քաղաքի U.GUR աստվածը և Պատեր... քաղաքի ISTAR (INANNA) աստվածությն ցուցակի հայասական հատվածում տրվել են առաջինը: Այնուհետև մեկ տող դատարկ է, իսկ աստվածների բարկումը շարունակվել է մյուս տողից, ինչն առիթ է տվել Ե. Ֆոռերին իրավացիորեն կարծելու, որ այդ երկուսն են հանդիսացել Հայասայի զիսափոր աստվածները²⁹⁶:

U.GUR-ը դեռևս հինքարելոնական դարաշրջանից (Ք.ա. II հազարամյակի սկզբից) նույնացվել է Ներգալի հետ և դարձել նրա հիմնական անուններից մեկը: Ներգալը հնագույն հյուսիսացագետքյան աստված էր՝ կապված մահվան և պատերազմի հետ, անդրաշխարիի տիրակալը, որի պաշտամունքը հետագայում տարածվել է նաև հարևան երկրներում:

Ն. Մարտիրոսյանը Հայասա (ըստ հեղինակի՝ Խայաշա) անվան հիմքն ընդունել է Հայա (Խայա)-ն, որը գաղափարագրով էր տրվել՝ U-GUR, և ըստ նրա՝ կարող էր հանդիսանալ հայերի անվանադիր աստծո անունը և համապատասխանել է քարելոնական Էնլիլին²⁹⁷:

Գ. Ղափանցյանի կարծիքով հայասական պանթեոնը զիսափորեն է Ար կամ Արա Գեղեցիկ աստվածությունը (հիմնավորելով իր միտքն այն հանգամանքով, որ մեռնող և հարություն առնող աստվածները հաճախ դառնում են նաև անդրաշխարիի տերեր), մյուս կողմից նա հնարափոր է համարում ՈՒ.GUR-ի հնչյունական ընթերցումը (Ուգուր)²⁹⁸: ՈՒ.GUR-ի պաշտամունքն, ըստ

²⁹⁵ KUB XXVI 39.

²⁹⁶ Նոյմ տեղում, էջ 7:

²⁹⁷ Մարտիրոսյան Ն., Պրատումներ փոքրասիական անուններու մասին, ԹԲՀ,

1961, թիվ 3-4, էջ 100:

²⁹⁸ ИЛР, 1, с. 89.

նրա, հայասացիները վերցրել են Հյուսիսային Միջազգետքի խուռաներից²⁹⁹: Իշտար կամ Ինաննա աստվածութու գաղափարագիրը Գ. Ղափանցյանը համեմատել է Անահիտ դիցանվան հետ, որի հայասական անունը եղել է կամ Նանե, կամ Խեպատ, կամ Նվարդ: Հայտնի է նաև, որ և Անահիտ, և Նանե դիցուիհիների պաշտամունքի կենտրոն է հանդիսացել Բարձր Հայրի տարածքը: Այս դիցուիհիները (Խեպատ, Նանե)՝ որպես սիրո, պտղաբուրյան, բերքատվուրյան աստվածուիհիներ, աստվածների մեծ մայրեր, իրենց որոշ հատկանիշներով նաև են Ինաննային (Իշտար), իսկ Նվարդը հայտնի է՝ որպես Արա Գեղեցիկի կին (Արա Գեղեցիկը՝ որպես ^ԴՍ. GUR աստվածը):

Գ. Ղափանցյանն առաջարկում է նաև Զազգա... դիցանվան վերջում լրացնել -ga-a և կարդալ Zaggaga՝ հաշվի առնելով խեթական Զազգազա աստվածուրյունը: Հետաքրքիր է նաև Terittitūniš հայասական դիցանվան բացատրությունը, որն, ըստ նրա, նշանակում է «երեքոտանի, եռագի, երեքպոչանի»: Իսկ Baltaik հայասական դիցանունը նա դիտում է՝ որպես սեմական ծագում ունեցող բառ, որը նշանակում է «Կյանքի աստված» (աքադ. halta «կյանք», «առողջ լինել» բառերից)³⁰⁰:

Գ. Զահուկյանը հայասական Ուգուրը համեմատել է հայերն ոգոր-իմ՝ պայքարել բառի հետ: Իսկ հայասական ^ԴՍ (Անպրոպի) աստծուն նա համեմատել է հետազայի հայկական հեթանոսական դիցարանի Վահագն աստծո հետ³⁰¹: Ըստ նրա՝ հայասական դիցանուններից երկուսը՝ (Kar)հսիս-ը (եթե հավաստի է Kar-բաղադրիչի վերականգնումը) և Tagutus-ը, փոխառյալ աստվածուրյուններ են: Մրանցից առաջինը զուգահեռներ ունի լուսական Կարհսիա-ի հետ, որը Կարգամիսի գլխավոր աստվածուրյուններից երրորդն էր: -հսիս բաղադրիչը նույնական է

²⁹⁹ Նույն տեղում, էջ 306:

³⁰⁰ Նույն տեղում, էջ 90-94, 306:

³⁰¹ Ջայուկյան Ռ., Հայաստանի լեզու և այլ հայություններ, Երևան, 1964, էջ 57.

իսի(h)aš՝ «պապ», խեթալուվական բառի հետ³⁰²: Ըստ Գ. Զահորուկյանի՝ հայասական դիցարանում եղել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ աստվածություններ: Բնիկ աստվածություններն են՝ Šilili..., Terittituniš, Baltaik, Unagaštāš, Zakk(an...): Ըստ նրա՝ Tarumus-ը ն, եթե ճիշտ են վերականգնումները, [Izzišt]janus-ն ու [Kar]խսիս-ը փոխառյալ աստվածություններ են, այսինքն՝ հայասացինները պաշտում էին նաև փոքրասիական աստվածություններ: Tarumus-ի Taru բաղադրիչը նա նույնական է համարում խաթական Taru-ի՝ «Ժամանակի աստծո» հետ: Իսկ Terittituni դիցանունն, ըստ նրա, բաղկացած է t(e)ri-«երեր» և (t)tituni-«պոչ, վերջավորություն» կամ «օր, լույս, փայլ», -erhi-(erhi-g-u) «երեր» և տոտոն (տուտն) կամ տի «մեծ» բառերից³⁰³:

Գ. Զահորուկյանը ենթադրել է մի շարք հայասական դիցանունների հայկական ծագում: Դրանք են Šilili-ն՝ հայերեն sile՛ «սիրեկան» բառից, Terittituni-ն՝ հայերեն eri-«երեր» և ttun, tutn- «վերջավորություն» բառերից: Այսպիսով, նա ենթադրել է այս դիցանունների տեղական, հայկական ծագումը: Իսկ Unagaštā դիցանվան մեջ նա սկզբում ենթադրել է հնդեվրոպական *ong «օծել» բառարմատը և այն բարգմանել է՝ որպես «օծյալ», այնուհետև նույն բառի մեջ ենթադրել է հայերեն սուշ (քիթ, բեղեր) և (h)ast-(հաստ) բառարմատները: Ըստ Գ. Զահորուկյանի՝ Baltaik դիցանվան արմատն է հանդիսանում հնդեվրոպական *bh¹-to- «փայլուն» արմատը³⁰⁴: Baltaik և Unagaštāš դիցանունների -ik և -aštāš ածանցներն, ըստ նրա, բնիկ հայկական են, և դրանք կարելի է համեմատել հայերեն -իկ և -աստ վերջածանցների հետ³⁰⁵:

³⁰² Զահորուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 327:

³⁰³ Զահորուկյան Գ., Հայասայի լեզվի հիմնանատովական ծագման վարկածը, ՊԲՀ, թիվ 1, էջ 95, 108: Նոյնի, Լեզվական նոր տվյալներ հայոց 1976, թիվ 1, էջ 95, 108: Նոյնի, Լեզվական նոր տվյալներ հայոց 1976, թիվ 1, էջ 95, 108: Նոյնի, Օ соотношении хайасского и

³⁰⁴ Ջայուկյան Գ., Եզր. աշխ., էջ 48, 53-54: Նոյնի, Օ соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 1, с. 67.

³⁰⁵ Զահորուկյան Գ., Լեզվական նոր տվյալներ հայոց նախարիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, էջ 22:

Գ. Զահուկյանը, գրելով խեթալուվական լեզվական միջավայրի հետ հայասերենի ունեցած փոխառնչությունների մասին, հնարավոր է համարել, որ Հայաստան ոչ միայն աստվածություններ փոխառած լինի, այլև հենց ինքը լինի հարևան ժողովուրդների մեջ պաշտվող մի շարք աստվածությունների աղբյուրը: Այդպիսիք են Santa (քնիկ հնդկուպական «շանք» բառից) և Lušiti փոքրասիական («զուսոյ» քնիկ հնդկուպական բառից) աստվածությունները: Նա քննում է նաև, որոշ չստուգաբանված փոքրասիական դիցանուններ, որոնց հայկական-հայաստանան ծագումը նա չի բացառում՝ Andaliya (հողի աստված) և հայ. անդ (քոչուն), Huzziya և հայ. խուց (հնդկուպական *khu-sko-), Kallažare՝ հայ. քաղաքար, Šulutta՝ հայ. շողոտ, Zukki և հայ. ձուկն բառերի կապը³⁰⁶.

Լեզվագիտական համեմատության հիմքի վրա Գ. Վարդումյանը տվել է հայաստանան դիցանունների նշանակությունները՝ Տերիտորիոնիսը՝ «ճողոտանի, եռագի կամ եռամեծ», Ունագաստասը՝ «օծյալ», Բալտախիկը՝ «փայլուն» կամ «խելացի», Սիլլիին՝ «քարեհաճ, գրառատ, սիրելի», Թարումոս՝ «թարույի ուժ, հավերժ», Ուտակսանաս՝ արարիչ, ստեղծող կամ հավասարության և միջօրեկի աստված, Զակլանը՝ «առոր» կամ «ձուկն», Սաննուս՝ «առողջ» և այլն³⁰⁷: Ըստ նրա՝ գերագույն զույգի Ոգոր աստվածը ստորգետնյա աշխարհի տիրակալն էր, նաև ողջ Երկրի որոտկայծակի, ուզմի աստվածն էր («ոգորել»՝ կովել մարտնչել): Իսկ իգական կեսն Խշքար (Խնամնա) զաղափարագրով վկայված սիրո, գեղեցկության, պտղաբերության աստվածուին էր, որի հայաստան (հայկական) անունն Անահիտ էր³⁰⁸.

Հայաստան դիցարանին անդրադարձել է նաև Ս. Պետրոս-

³⁰⁶ Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 22-23:

³⁰⁷ Վարդումյան Գ., Дохристианские культы армян, ՀԱԲ, 1991, թիվ 18, էջ 67-68:

³⁰⁸ Վարդումյան Գ., Հայկական լեռնաշխարհը հայոց հավատքի բնօրրան, Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրության բնօրրան, Հայագիտական գիտաժողով, Երևան, 2004, էջ 148:

յանը: Ըստ նրա՝ այդ դիցարանի գերագույն աստված ^DU.GUR-ը որպես առասպելաբանական նախատիպ ունեցել է ամպրոպի այն նույն աստվածությունը, որի մյուս զարգացումներն էին հանդիսանում հեթանոսական Արամազդը և ժողովրդական հավատալիքների Գոզո բարան: Այսինքն հնագույն հայերի ամպրոպի աստվածը կրում էր իր ամպրոպային բնույթը բացահայտող բնաձայն Գրգուռ անունը կամ մականունը, որից սերում են ինչպես Գրգուռ լեռնանունը, այնպես էլ ամսվա երրորդ տասնօրյակը սկզբնավորած օրվա հին հայկական Գրգուռ անունը: Իսկ հնաննան (Խշքար), ըստ նրա, որպես մայր դիցուիի հեթանոսական դարաշրջանում Երեզում պաշտված Անահիտի նախատիպն էր: Երեզ (Երեզ) անունով նախապես հայտնի են եղել ինչպես Մայր դիցուին, այնպես էլ նրա տաճարի շուրջ տարածված դաշտը կամ Վերջինին՝ խոպան քողման պահպան մի հատվածը: Այնուհետև Երեզ դաշտի սրբավայրը կոչվել է Երեզ-աւան կամ ուղղակի Երեզ: Ըստ այդմ՝ Մայր դիցուիու Երեզ անունից կամ մականունից կազմվել է նրան ձոնված ամսվա 11-րդ օրվա անունը՝ Երեզկան<*Երեզ-ական: Մայր դիցուին, ըստ Ս. Պետրոսյանի, իր պաշտամունքի վայրի անունով Երեզկական է կոչվել³⁰⁹: Հայասական Սուագաշտա աստվածությունն, ըստ նրա, հանդիսացել է խաղողագործության և գինեգործության հովանափորը: Այդ դիցանվան Սուագ- բաղադրիչի հիմքում ընկած է եղել հնդեվրոպական *սեւօն՝ նախաձեկը³¹⁰:

Ըստ Ս. Պետրոսյանի և Ծ. Պետրոսյանի՝ հայասական ^DU.GUR-ը, իսուվական ^DU-ն, հայոց տոմարում իր հիշատակը քողած Գրգուռը և հայ հեթանոսական դիցարանի Արամազդը ներկայացրել են Հայկական Լեռնաշխարհի բնակչության Ամպներկայացրել հիմքում ընկած է եղել հնդեվրոպական *սեւօն՝ նախաձեկը³¹⁰:

³⁰⁹ Պետրոսյան Ս., Դասերը և եռադատության դրսնորումները հին ու վաղինադադարյան Հայաստանում, Երևան, 2001, էջ 117, 121:

³¹⁰ Պետրոսյան Ս., Հին հայոց խաղողագործ աստվածը, Հայկական Լեռնաշխարհի հայոց և համաշխարհային բաղաքակրության բնօրրան, Հայագիտական գիտաժողով, Երևան, 160, 162:

^DINANNA-ն, հայոց տոմարի Երեզկանը և հեթանոս հայերի Ա-նահիտը ներկայացրել են Մայր դիցուիուն, իսկ հայասական ^DIzzi-istanu-ն, խուվական ^DPirua-ն, հայոց տոմարի Արեգը և հայ հեթանոսական դիցարանի նախնական Վահագնը՝ Արևի աստ-ծուն³¹¹:

Ըստ Ա. Պետրոսյանի՝ Խեթական և լուվական աղբյուրնե-րում U.GUR-ը հիշատակվել է շատ հաճախ: Մեկական անգամ հիշատակվել են Խալպուտիլին քաղաքի U.GUR-ը և նրա պաշ-տամունքը Զիխիլայում, ապա քազմիցու հիշատակվել է Հայա-սայի U.GUR-ը: Սա ցույց է տալիս, որ Խարքի և նրա ազդեցութ-յան ոլորտում գտնվող երկրներից հենց Հայասան է եղել U.GUR-ի պաշտամունքի նշանակալի կենտրոնը: Խեթախաթական ա-վանդույթում երկրորդ հազարամյակի կեսից միջազգետքյան Ներ-գալլ (U.GUR) նույնացվել է խարական Տulikatte՝ «Սուլի արք» կամ Տulinkatte՝ «Սուլիի արք» աստծո հետ, որի «արքա» լինելը նորից շեշտում է U.GUR-ի տիրող դիբքը դիցարանում³¹²: Ըստ Ա. Պետրոսյանի՝ U.GUR-ը և DINANNA-ն հայկական նախարիս-տոնեական դիցարանի կառույցում համապատասխանել են աստվածների նահապետ Արամագդին և մայր աստվածուի Ա-նահիտին: Արամագդի պաշտամունքի կենտրոնը հանդիսացող Անի ամրոցում էր գտնվում իին հայոց արքաների գերեզմանոցը: Ըստ այդմ՝ Արամագդը՝ աստվածների նահապետն ու, թերևս, արքան, առնչվել է արքայատոհմի, ապա և անդրաշխարհի հետ³¹³:

Ըստ Ա. Պետրոսյանի՝ Հայկը նույնացես համայրելի է «Հայա-սա քաղաքի» մեծ աստծո՝ U.GUR-Ներգալի հետ: Հայկ և Հայա-սա անունների համահնչությունն էլ հնարավոր է դարձնում այդ անունների ստուգաբանական կապի և Հայկի նախատիպի՝ Հա-

³¹¹ Պետրոսյան Ա., Պետրոսյան Ծ., Հնագույն Ծոփքի դիցական գլխավոր եռյակի շուրջ, Գիտական աշխատություններ, 2001, թիվ 4, էջ 81:

³¹² Haas V., Geschichte der hethitischen Religion, S. 366-367.

³¹³ Պետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՀ, 2004, թիվ 2, էջ 209,222:

յասայի էպոնիմ աստված լինելու ենթադրությունը (Հայկ<Հայ-իկ, իին դիցանունների բնորոշ քննչական իկ ածանցով): Ըստ այդմ՝ Ա. Պետրոսյանը միանգամայն հավանական է համարում, որ Եփրատի ակունքների մեծ աստվածը՝ Արամազդի հնագույն նախորդը, եղել է Հայկը կամ նրա նախնական կերպարը, որն իր հատկանիշների և անվան նմանության պատճառով նույնացվել է միջազգետրյան U.GUR-Ներգալի, Էա-ի, արևմտասեմական El-kunirša-ի և խաթական Šulikatte-ի հետ³¹⁴: Հայկի՝ Հայասայի եպոնիմ լինելու վարկածը մինչ այդ առաջարկվել է Հ. Մանանդյանի կողմից, որը ենում էր Հայասայի՝ Հարքի շրջանում տեղայնացումից³¹⁵:

Հայասական երրորդ աստծո անունը, որից պահպանվել է Վերջին մասը, ըստ մի կարծիքի, կարող է լինել Izzištanuš³¹⁶, այսինքն՝ խաթական արևի աստված Eštan-ի խնթական մի ձեր (հնարավոր է՝ Ezzi Eštan-ից՝ «քարի արևի աստված»): Ըստ Ա. Պետրոսյանի՝ հայոց Արամազդ, Անահիտ և Վահագն եռյակի առաջին նախատիպը հայասական է, որը հետագայում է միայն Վերանվանվել իրանական անուններով³¹⁷: Հայասական դիցարանի Վեցերորդ աստված Tarumut-ն (Ta-a-ru-u-mu-uš), ըստ նրա, անթաժամնելի է թվում Taru-Tarawa-ից (ըստ Գ. Զահորկյանի՝ Taru-muwa>Tarumut՝ «Տարուի ուժ»³¹⁸): Իսկ Վահագն աստծո պաշտամունքի կենտրոնի Տարան (Tarawn) անվանումը պետք է կապվի խաթախեթական Taru/Tarawa-ի հետ³¹⁹:

Ըստ Հ. Հմայակյանի՝ Արան օժտված է եղել ուազմի, պտղաբերության, մեռնող և հարություն առնող և անդրշիրիմյան աստծո գործառույթներով և կարող էր հայասական պանթեոնում գրավել զյանական դերը՝ հանդես գալով ^ԴU.GUR զաղափարագ-

³¹⁴ Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 224-227:

³¹⁵ Մանանդյան Յ., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 149.

³¹⁶ Խաչատրյան Բ., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 148.

³¹⁷ Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 223:

³¹⁸ Ջաւակյան Ր., Խայասկий язык и его отношение к индоевропейским языкам, с. 51.

³¹⁹ Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 223-224:

րով³²⁰: Իսկ ^DISTAR-ը, ըստ նրա, Անահիտ կամ Աստղիկ դիցուիհն է եղել: Այդ գաղափարագրերի տակ (^DU.GUR և ^DISTAR) նկատի են առնվել երկու տեղական աստվածություններ: Հ. Հմայակյանը շեշտել է ^DU.GUR-ի առանձնահատուկ դերը հայասական պանթեոնում, որը պաշտվել է նաև խեթերի կողմից: Այդ աստվածության պաշտամունքն, ըստ նրա, պետք է կապված լիներ անդրաշխարհի և նրա հետ առնչվող պատկերացումների հետ: Եվ քանի որ անդրերկարային հատկություններով օժտված են լինում նաև մեռնող-հարություն առնող, պարզաբերության աստվածությունները, ապա նրանցից ոմանք դառնում են նաև անդրաշխարհի տերեր, ինչպես օրինակ՝ եգիպտական Օսիրիսը: Այստեղից էլ Հ. Հմայակյանը նույնապես ենթադրել է, որ ^DU.GUR գաղափարագրով հանդես է եկել Արա Գեղեցիկ աստվածությունը³²¹:

Ա. Դավթյանը «Հայոց աստղային դիցարանություն» աշխատության մեջ անդրադարձել է հայասական դիցարանին: Նա նույնպես համաձայնել է այն կարծիքի հետ, որ ^DU.GUR-ն այդ տեքստում ներկայացվել է վանկագիր, այսինքն՝ ^DU.GUR դիցանունը հնչել է հենց Ուգորը: Իսկ «կովել, մարտնչել» հմաստներով U.gur-ոգոր-ը նա նույնացրել է Մարս մոլորակը մարմնավորող Ներգալ աստծո հետ՝ իրեւ ուզմիկ աստված: Ըստ Ա. Դավթյանի՝ Աստղիկ-^DISTAR գաղափարագրով գրված Patteus... քաղաքի դիցուիհն զլխավոր դիցուիհն եր՝ Ներգալի կինը: Իսկ Teritituni դիցանվան մեջ նա տեսնում է հայերեն թերատ-տուն- «կարիճ» բառը: Իսկ հայասական Utakšanaš դիցանունը Ա. Դավթյանը տառադարձել է հայերեն ութարսան ձևով, այսինքն՝ դա քանուր բառն է: Նա այս աստծուն նույնացրել է հայկական ամսի 28-րդ օրվա՝ Սիմ (Սեհն) աստծո հետ³²²:

Հայասայի առասպելների վերաբերյալ ուղղակի տվյալներ

³²⁰ Հմայակյան Հ., Հայասական ^DU.GUR-ը և Արա Գեղեցիկը, ՄՄԱԵԺ, 2004, XXIII, էջ 381-394:

³²¹ Հմայակյան Հ., Հոգևոր ավանդությների ժառանգականությունը (Պատղաբերության պաշտամունքից մինչև քրիստոնեություն), 21-րդ դար, 2005, թիվ 2, էջ 167-168:

³²² Դավթյան Ա., Հայոց աստղային դիցարանություն, Երևան, 2004, էջ 207-222:

շկան: Սակայն ուշ խեթական ժամանակաշրջանի (Ք.ա XIV-XIII դդ.) աղբյուրներից մեկում հիշվում է մի արևմտասեմական՝ քանաանական առասպել՝ տեղայնացած այս շրջանում: Ըստ այդ առասպելի՝ Ասերտու (Ašertu) աստվածուին՝ զերագույն աստված Էլ-կունիիրսայի (El-kunirša) կինը, սիրո առաջարկություն է անում Էլ-կունիիրսայի որդի Ամարոպի աստծուն (արևմտասեմական համատեքստում՝ Ba'äl, ուգարիթյան՝ Ba'lu): Ամպրոպի աստվածը «զնաց դեսի Mala գետի ակունքները: Նա զնաց Էլ-կունիիրսայի՝ Ասերտուի ամուսնու մոտ, [և] մտավ վրանը (= տուն, կացարան) Էլ-կունիիրսայի»: Էլ-կունիիրսա անունը խեթական հաղորդումն է սեմական Էլ աստծու և նրա մակդիրի՝ ‘՛ը զնո՛ (‘a)rsa «Երկրի արարիչ Էլ», իսկ Մալան Եփրատի խեթական անվանումն է: Ք.ա. XIV-XIII դարերում Եփրատի ակունքների երկիրը Հայասան էր, իսկ Եփրատի ակունքներում բնակվող «Երկրի արարիչ Էլը» պետք է նույնացվեր Հայասայի մեծ աստծո հետ: Ասերտուն (= Աստարտե) և Իշտարը համադրելի են U.GUR-ի կնոջ հետ³²³:

Հայասայի դիցարանի ^DU.GUR-ը և ^DSTAR-ը գլխավոր աստվածների զույգ են Եղել՝ աստվածների նահապետն ու նրա կինը: Այդ աստվածների անունները ներկայացվել են գաղափարագրով, այսինքն՝ տեղական աստվածները համապատասխանեցվել են միջազգետքյան U.GUR-ին և INANNA-ին: Իսկ INANNA-ն մայր աստվածուիո շումերոգրամն է (=արադ. Իշտար): Հայասայի ^DU.GUR-ը նույնպես պետք է լիներ հանդերձյալ աշխարհի, ինչպես նաև մեռնող և հարություն առնող աստվածությունը՝ հինարևնելյան որոշ աստվածությունների նման: Այս հատկանիշներով նա կարող էր հանդես գալ նաև՝ որպես Արա Գեղեցիկի նախատիպը: Այս աստծո անունն առաջինն է իիշատակվում՝ տրվելով Հայասա քաղաքի հետ, որը, հավանաբար, երկրի մայրաքաղաքն էր, ինչը նույնպես խոսում է ^DU.GUR-ի՝ Հայասայի դիցարանում գլխավոր աստվածությունը լինելու փաստի օգտին:

³²³ Պետրոսյան Ա., նշվ. աշխ.. էջ 224-225:

ՈՒ.GUR-ի հնչյունական (Ուգուր, այստեղից՝ ոգոր-իմ) կամ քնածայնական (Գրգուր) ընթերցումը քիչ հավանական է: Դիցարանի զիշավոր աստծո կինն իր հատկանիշներով նման է Եղել շումերական Ինաննային, ասուրաբարելոնական Խշտար-Աստարտային: Սովորաբար զիշավոր աստվածուին հանդիսացել է նաև երկրի հովանավորը, ինչը հիմք է տալիս նրան համեմատելու Անահիտ աստվածուիու հետ:

Վաղմիջնադարյան հայկական սկզբաղբյուրներից հայտնի նախաքրիստոնեական Հայոց աստվածների մեծ մասի (Արամազդ, Անահիտ, Նանե) պաշտամունքի կենտրոններից էին Մեծ Հայրի հյուսիսարևմտյան Դարանադի, Եկեղյաց և Դերջան զավառները: Այս տարածքները Ք.ա. XIV-XIII դարերում ընդգրկված են Եղել Հայասայի կազմում և որպես կարևորագույն կրոնական կենտրոն մնացին նաև քրիստոնեության հաստատումից հետո:

Այսպիսով, ակնհայտ է, որ U.GUR-ը և INANNA-ն հայկական նախաքրիստոնեական դիցարանի կառույցում պետք է համապատասխանեին աստվածների նահապետ Արամազդին և մայր աստվածուիի Անահիտին, և կարելի է կարծել, որ հենց Հայասայի աստվածներն են հանդիսացել հայոց նախաքրիստոնեական աստվածների հնագույն նախատիպերը³²⁴:

Չանի որ Հայասա-Ազգից որևէ գրավոր աղբյուր չի պահպանվել նրա հոգևոր մշակույթի մասին կարելի է պատկերացում կազմել հայասական հատուկ անունների ուսումնասիրությամբ, որոնք հիշատակվել են խեթական սեպագիր տեքստերում: Պահպանված հայասական հատուկ անունները կարելի է դասակարգել երեք խմբի՝ անձնանուններ, դիցանուններ և տեղանուններ: Բուն հայասական անձնանուններն են Anniya-(An-ni-ya-), Հուկկա-(Hu-uk-ka-na-a-), Karanni-(Kar-an-ni-), Mariya-(Ma-ri-ya-), Mutti-(Mu-ut-ti-), դիցանուններն են՝ Baltaig (Ba-al-ta-ig), Šillili (Ši-il-[i?]-l-[i?]), Tarumuš (Ta-a-ru-u-mu-uš), Terittituniš (Te-ri-it-ti-

³²⁴ Թետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, էջ 222:

tu-u-ni-i[š?]), Unagaštaš (Ú-na-ga-aš-ta-aš), Zagga (Za-ag-ga-...), (...)-šanuš (...š/t)ja-an-nu-uš) и (...)-ħu-ħu-uš)³²⁵:

Համեմատարար մեծ թիվ են կազմում հայասական տեղանունները (քաղաքանուններ, երկրանուններ, լեռնանուն)՝ Arjita, Aripša, Arniya, Azzi, Հayaša, Հalimana, Հaršalaša, Հuddu, Iyaninna, Kam..., Gašmiyaḥa, Gazú, Laħirħila, Lalatta, Litta, Paħħuteyha, Parraya, Partanta, Patteu..., Taħ(ħa)nišara, Tamatta, Tawatena, Dukama, Ukšu, Ura, Utkuniša: Հայտնի է նաև մի քաղաքանուն, որի ընթերցումը կասկածելի է՝ Qa?-ad-ku-ša?: Հայասայի տարածքում հիշատակված են նաև Laħa[La-ħa-a] անունը կրող լեռներ:

Եղած փոքրաբիկ տվյալների հիման վրա Հայասայի լեզվի մասին իրենց ուսումնասիրություններն են կատարել Գ. Ղափանցյանը և Գ. Զահոռլյանը:

Ըստ Գ. Ղափանցյանի՝ Հայասայի անունը կապված է հայերի անվան հետ, հայասացիները հայերի անմիջական նախնիներն են, Արանց լեզուն եղել է վաղնջական հայերենը³²⁶: Նա հայերնի բնույթի մասին գրել է հետևյալը. «Հայերենն իր ժողովորդի կազմավորման այրողեսի կենդանի զավակն է և իր գոյացման հնագույն շրջանում ելնում է, ամտարակույս, Հայասայի ցեղերի լեզվից, որը ազգակից է եղել նախալսերենին և խերերենին, այդ թվում նաև «Ժիերոգլիֆիկ-խերերենին», այնուհետև բալայերենին և վերջապես վրացերենին, հատկապես նրա արևմտյան Եերկայացուցիչներին՝ մեզրելաճանական բարբառներին... Գրավոր վկայությամբ չհաստատված Հայասայի այս լեզուն... հիմք ծառայելով պատմական հայերենին, հետազոտում ենթարկել է ուժեղ փոփոխման՝ խաչաձևան հետևանքով, մի

³²⁵ Forrer E., Հայա-Azzi, S. 6. Friedrich J., Der Vertrag des Šuppiluliumaš mit Հսկկաš und den Leuten von Հayaša, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., Leipzig, 1930, S. 103-163. Götz A., Die Annalen des Mursiliš, MVAG, 1933, № 38. Gütterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2, p. 66.

³²⁶ ИЛР, 1, с. 240-249.

կողմից ինչ-որ հնդեվրոպական՝ սլավոնա-սկյութական և հունական տիպի լեզուների, մյուս կողմից՝ Տիգրիսի վերին հոսանքում (գուցե և Տուրուբերանում) ընկած Արմե-Շուապրիա երկրի խոտիերեն լեզվի հետ, որով և բացատրվում են հայերենի և խոտի-ուրարտերենի միջև գոյություն ունեցող բառապաշարային և ձևաբանական որոշ ազգակցական տարրերը»³²⁷: Այսպիսով, Գ. Ղափանցյանը հայերենը համարել է փոքրասիական, կամ առնվազն «խառն», երկտարր լեզու, իսկ հայերին՝ զուտ բնիկ տեղական ժողովուրդ:

Ըստ Գ. Զահուկյանի նախնական տեսակետի՝ հայասական և փոքրասիական հատուկ անունների մեջ նկատվող ընդհանուրությունների օգալի մասը բացատրվում է Հայասայի բնակչության մեջ խեթալուվական լեզվական տարրի առկայությամբ և նույնիսկ գերակշռությամբ: Հայասերենն, ըստ նրա, հայերենից տարրեր խեթալուվական բնույթի լեզու եր, որը հայերենում պահպանվել է՝ որպես ենթաշերտ³²⁸: «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ այս տեսակետը զգալիորեն ձևափոխվել է: Հայասայի բնակչությունն, ըստ նրա, բաղկացած է եղել տարասեռ ցեղերից, որոնց մեջ, ի թիվս խեթալուվական, խոտիական, կովկասյան, քրակյան ցեղերի՝ նա տեղ է տվել նաև հայկական տարրին³²⁹: Ավելի ուշ Գ. Զահուկյանը հաստատում է, որ Հայասայի հիմնական լեզուն եղել է հայերենը, և որ հայկական տարրը գերակշռող դիրք է գրավել հայասական պետության մեջ: Նա ելնում է այն դրույթից, որ եթե հայասական հատուկ անունների մեջ խեթալուվական և, թերևս, այլ լեզվական տարրերի առկայությունը դեռևս չի խոսում նրանցով խոսող ցեղերի առկայության մասին (հնարավոր են փոխներթափանցման և փոխառության մասին)՝ այսպիսի պատմություն, եջ 338-339:

³²⁷ Նույն տեղում, էջ 248:

³²⁸ Jahukyan G., The Hayasā Language and its Relation to the Indo-European Languages, Ar.Or., 1961, № 29/3, p. 398-405. Նույնի, Հայերենի և խեթալուվական լեզուների բառային կազմի ծագումնային զուգայինությունը, էջ 57: Նույնի, Հայասայի լեզվի հիմնանատոյիական ծագման վարկածը, էջ 107-108:

³²⁹ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 338-339:

յան երևույթներ), ապա հայկական լեզվական տարրի ներկայությունը նա բացատրում է միայն հայկական ցեղերի առկայությամբ: Դրա մասին են խոսում հայասական այն հատուկ անունները, որոնք հայկական բնույթ ունեն և որոնք փոխանցող օղակներ են հնդեվրոպական լեզվի և հայերենի միջև. հմմտ. *poti-կամ թթio-(թթiu-?)>Հai(aša)>հայ. *aigiiā>Aišia>այծի, *aniiā> Anniā>հանի, «նախնի», հետագա «տատ», *tri->T(e)ri-(Teritittuni)>երի (հմմտ. երից), *dei-dun-, (dun-ից)>-tituni (Terittituni)>տտուն, *k'e-i-l->Šillili>սիլեղ, argiiā>Arziiā>*արծ- (արծաթ, արծն-ել) և այլն³³⁰:

Իսկ ըստ Ի. Դյակոնովի՝ լեզվական առումով որևէ կապ չկա հայասացիների և հայերի միջև, և հայասական անվանումները (տեղանուններ, անձնանուններ, դիցանուններ) խորը են հայերենին: Ըստ նրա՝ Հայասա անունը բաղկացած է haya- արմատից և -sa խեթական ածանցից, իսկ Հայր բառի հիմքակազմ ձայնավորը «ո»-ն է (սեռ. hn̩l՝ հայոց) և ոչ «ա»: Ուստի և դրանք կապ չունեն իրար հետ: Նա, զարգացնելով իր այդ տեսակետը, գտնում է, որ Հայասան կապ չունի հայ անվան հետ նաև այն պատճառով, որ նրանում առկա է «խ» և ոչ «հ» հնչյունը: Ի. Դյակոնովը միևնույն ժամանակ հավանական է համարում, որ հայ անունը առաջացել է Հattî-ից՝ >j հնչյունափոխությամբ³³¹: Սակայն, ինչպես գտնում են խեթագետները, խեթերենի «ի»-ն կոկորդային հնչյուն է: Այն հնդեվրոպական նախալեզվից է եկել և, որպես այդպիսին, իիմնականում պահպանվել է խեթերենում և հայերենում: Խեթերը հարևան երկրների տեղանունները, որոնց մի մասը պարունակում է «խ», իսկ մյուսները՝ «հ», գրության մեջ արտահայտել են միևնույն «ի» սեպանշանով³³²: Վ. Խաչատրյանը և Գ.

³³⁰ Ջայուքյան Գ., О соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 2, с. 87-88.

³³¹ Դյակոնով Ի., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 209-214, 236-237.

³³² Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 40-41:

Զահուկյանը իրավացիորեն գտել են, որ Հայասա անվան մեջ առկա է խեթերենի ածականակերտ -աշա ածանցը³³³:

Խեթալուվական լեզուների կրողների և հայերի անմիջական շփումը կարող էր լինել մինչև Խեթական տերության անկումը (Ք.ա. XIIդ. սկիզբ), ուստի հայերեն՝ խեթալուվական լեզուների հետ շփման առյուծի քաժինը զայս է Հայասա-Ազգի գոյության ժամանակներից (Ք.ա. XIV-XIIIդդ.), երբ Հայասան ակտիվ ռազմաքարական, նաև մշակութային կապերի մեջ էր Խարքի հետ³³⁴: Խեթերենի և հայերենի փոխադարձ կապը չի սահմանափակվել միայն նրանց՝ հնդեվրոպական լեզվաշնոտանիքին պատկանելու հանգամանքով: Այդ կապն ավելի կարևոր է դառնում նրանց երկուատեր հարևանության, միատեսակ պատմական պայմանների ու միևնույն շրջապատի լեզուներից կրած ընդհանուր ազդեցության հանգամանքներով: Խեթերենի քառապաշարի՝ դեռևս չպարզված կամ ենթադրվող նոտավոր նշանակությունների որոշ մասը հաստատվում կամ պարզվում է հայոց լեզվի շնորհիվ, քանի որ դրանք պահպանվել են միայն հայերենում: Գործածությունից դրւու եկած կամ մթագնած իմաստ ունեցող շատ հայերեն քառերի նշանակությունը հնարավոր է լինում պարզել միայն խեթերենի շնորհիվ³³⁵:

³³³ Խաչատրյան Վ., Հայասց, ՅՈՒ, 1972, № 8, ս. 38. Ջկայքյան Գ., Օ соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 1, с. 68.

³³⁴ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 312:

³³⁵ Սկրտչյան Ն., Խեթա-հայկական ընդհանրություններ, ԼՀԳ, 1970, թիվ 7, էջ 58-69: Մարտիրոսյան Ն., Նպաստ մը հեր և հայ քառաբնության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 168-186: Ջկայքյան Գ., Օ соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 2, ս. 70-85. Նույնի, Լեզվական նոր տվյալներ հայոց նախարիստունեական կրոնի և հավատալիքների մասին, էջ 22-23:

Զահուկյանը իրավացիորեն գտել են, որ Հայասա անվան մեջ առկա է խեթերենի ածականակերտ -աշա ածանցը³³³:

Խեթալուվական լեզուների կրողների և հայերի անմիջական շփումը կարող էր լինել մինչև Խեթական տերության անկումը (Ք.ա. XIIդ. սկիզբ), ուստի հայերենի՝ խեթալուվական լեզուների հետ շփման առյուծի քաժինը զայս է Հայասա-Ազգի գոյության ժամանակներից (Ք.ա. XIV-XIIIդդ.), երբ Հայասան ակտիվ ռազմաքաղաքական, նաև մշակութային կապերի մեջ էր Խարքի հետ³³⁴: Խեթերենի և հայերենի փոխադարձ կապը չի սահմանափակվել միայն նրանց՝ հնդեվրոպական լեզվաշնուրանիքին պատկանելու հանգամանքով: Այդ կապն ավելի կարևոր է դառնում նրանց երկուստեր հարևանության, միատեսակ պատմական պայմանների ու միևնույն շրջապատի լեզուներից կրած ընդհանուր ազդեցության հանգամանքներով: Խեթերենի քառապաշարի՝ դեռևս չպարզված կամ նմբադրվող մոտավոր նշանակությունների որոշ մասը հաստատվում կամ պարզվում է հայոց լեզվի շնորհիվ, քանի որ դրանք պահպանվել են միայն հայերենում: Գործածությունից դրւու եկած կամ մթագնած իմաստ ունեցող շատ հայերեն քառերի նշանակությունը հնարավոր է լինում պարզել միայն խեթերենի շնորհիվ³³⁵:

³³³ Խաչատրյան Բ., Հայասց, ՅՈՒ, 1972, № 8, ս. 38. Ջայուկյան Գ., Օ соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 1, ս. 68.

³³⁴ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Եջ 312:

³³⁵ Սկրտչյան Ն., Խեթա-հայկական ընդհանրություններ, ԼՀԳ, 1970, թիվ 7, Եջ 58-69: Մարտիրոսյան Ն., Նպաստ մը հեր և հայ քառարենության, ՊԲՀ, 1972, թիվ 2, Եջ 168-186: Ջայուկյան Գ., Օ соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, № 2, ս. 70-85. Նույնի, Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքարիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, Եջ 22-23:

այդ արշավանքի ընթացքում՝ նշված ժամանակահատվածում (գարնանից մինչև ձմեռնամբույ), շարժվել էր Բարձր Հայքի տարածքից և անցնելով Տուրութերանով՝ հասել մինչև Վանա լճի ափերը, որտեղ և գտնվել է Արիասան: Այսպիսով, այն հեղինակները, ովքեր ենթադրյալ են այս քաղաքի գտնվելը Վանա լճի ափերին՝ իրավացի են, և Հայասա-Ազգին կարող ենք տեղորշել առնվազն Արևմտյան Եփրատի վերին հոսանքներից մինչև Վանա լճի ավագանը:

Փաստական նոր նյութի և հայտնի աղբյուրներից բննական մեկնարանությունը բույլ է տալիս պատկերացում կազմել Հայասա-Ազգի մասին: Այն ուազմական նշանակալի կարողություններ ունեցող պետական միավոր էր, որն ի վիճակի էր հավասար պայքար մղել ժամանակաշրջանի հզոր տերություններից մեկի՝ Խաթթի դեմ: Որոշակի ժամանակահատվածում Խեթական պետությունը նաև Հայասայի դաշնակիցն էր: «Խորվանայի պայմանագիրը» խեթահայասական հարաբերությունների ամենավառ դրսւորումներից մեկն է հանդիսացել: Պայմանագրում գերակայող էր միմյանց միջև հաստատված խաղաղությունը և օրինականությունը պահպանելու պայմանը՝ կապված տարածաշրջանում ուժերի դասավորվածության հետ:

Ըստ Ք.ա. XIII և XII դ. ասորեստանյան արձանագրությունների՝ Հայկական լեռնաշխարհի պետական միավորներին տրվել է Նաիրյան երկրներ անվանումը: Հայասա-Ազգին, զարգացում ապրելով, հավանաբար, այդ ժամանակաշրջանում շարունակել է իր գոյությունը՝ որպես մի շարք քաղաքական միավորներից քաղկացած երկիր: Խեթական և ասորեստանյան սկզբնադրյուրներում Հայասա-Ազգի և Նաիրի երկրներ անվանումների համաժամանակյա հիշատակությունը վկայում է Հայկական լեռնաշխարհի՝ խնդրո առարկա տարածքում պետական կազմավորումների ներքաղաքական զարգացումների մասին՝ միևնույն ժամանակ, թերևս, ցույց տալով, որ դրանք հանդես են եկել իրենց իշխանավորների գլխավորությամբ:

Ք.ա. XIII դ. երկրորդ կեսին Հայասա-Ազգին հանդես է եկել՝

որպես անկախ երկիր, որը չի մտել ո՞չ Խաքքիի և ո՞չ էլ Ասորես-
տանի տիրապետության տակ: Ք.ա. XIIդ. սկզբին Խաքքիի
տրոհվելը մի շարք պետությունների նոր, ավելի նպաստավոր ի-
րադրություն պետք է ստեղծեր Հայաստ-Ազգի համար: Ասորես-
տանը նույնպես քաղաքական անկում է ապրել այդ ժամանա-
կաշրջանում: Այսպիսով, տարածաշրջանում որևէ արտարին
լուրջ գործոն չկար, որը կարող էր բերել Հայաստ-Ազգի անկան-
նը: Հավանաբար, Հայաստ-Ազգին իր գոյությունը պահպանել է
նաև Ք.ա. XIIդ. ընթացքում, սակայն ոչ որպես միասնական պե-
տություն, այլ մի շարք քաղաքական միավորներից քաղկացած
երկիր:

Ուշ բրոնզեդարում պատմական Հայաստ-Ազգի մասն էին
կազմում ներկայիս Էրզրումի, Գյումուշխանեի մարզերի տա-
րածքը (Մեծ Հայքի Տայք, Բարձր Հայք նահանգների տարածք-
ների մի մասը, Այրարատի արևմտյան գավառները, Տուրուբե-
րան նահանգի հյուսիսային գավառները և Փոքր Հայքի հյուսիս-
արևելյան մասը), որտեղ գտնվում են Սոս, Բլուր, Կարագ, Բյու-
յութքեփի, Գյուղելովա և այլ հնավայրերը: Բարձր Հայքի և
շրջակա տարածքների հնագիտական պեղումները նոր լուս են
սփոռում Հայաստայի պատմության, մշակույթի և նրա քաղաքա-
կան ու տնտեսական կապերի վրա: Սակայն կատարված հնա-
գիտական պեղումները հնարավորություն չեն ընձեռում փաստել
այդ տարածքում խոշոր բնակավայրերի գոյության մասին.
Դրանք կարելի է փնտրել ավելի արևելք՝ Մեծ Հայքի Տուրուբե-
րան, Այրարատ և Տայք նահանգների տարածքում:

Հայաստական ^ՊU.GUR աստծո անունն առաջինն է հիշա-
տակվել խեթահայաստական պայմանագրի վերջում նշված աստ-
վածների ցուցակում՝ տրվելով Հայաստ քաղաքի հետ, որը, հա-
վանաբար, երկրի մայրաքաղաքն է հանդիսացել, ինչը նույնպես
խոսում է ^ՊU.GUR-ի՝ Հայաստայի դիցարանում գլխավոր աստվա-
ծությունը լինելու փաստի օգտին: ^ՊU.GUR-ի հնչյունական (Ու-
գուր, այստեղից՝ ոգոր-ին) կամ բնածայնական (Գրգուր) ընթեր-
ցումը թիշ հավանական է:

Հայաստանունից չէ, որ առաջ է եկել հայ անունը, այլ հայ անունից՝ Հայաստան: Խեթերը, պարզապես ծանոր լինելով իրենցից արևելք ընկած երկրի բնակիչների հայ ինքնանվանը, նրանց երկիրը կոչել են իրենց լեզվական օրինաշափուրյունների համաձայն՝ Հայաստան, այսինքն՝ հայերի հայ ինքնանվանը ավելացրել են իրենց լեզվին հատուկ տեղ, բնակվայր, երկիր ցույց տվող «աստ» վերջածանցը, որով և՝ Հայ+աստ երկրանունը:

Հարևան լինելով Խեթական պետությանը՝ Հայաստան չէր կարող իր վրա չկրել ոյրա քաղաքական, մշակութային և տնտեսական ազդեցությունը: Սակայն միևնույն ժամանակ, հանդես գալով որպես ինքնուրույն պետական և մշակութային միավոր, Հայաստան-Ազգին իր ամբողջականությամբ մասն էր կազմում Հայկական լեռնաշխարհի միասնական քաղաքական, մշակութային, տնտեսական արեալի, որի արմատները Ք.ա. III հազարամյակում էին, և որն իր շարունակական զարգացումն է ունեցել նաև հետագա դարերում:

ՀԱՎԵԼՎԱԾ

1. BoTU 34=KUB XIX 11 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2, p. 62-63).

2. ma-ab-ḥa-a[n-m]a *A-BU-YA* i-y[a-...]
3. nu nam-ma ^{LÚ}*KÚR* ^{URU}Ha-ya-ša *I-NA* KUR *Ú-UL*
4. ú-e-mi-ya-zi nu *A-BU-YA* *A-NA* ^{LÚ}*KÚR* [^{URU}Ha-ya-ša EGIR-an-da]
5. i-ya-at-ta-at na-an-ša-an nam-ma *Ú-U*[*L* ú-e-mi-ya-zi]
6. nu ^{LÚ}*KÚR* ^{URU}Ga-aš-ga pa-a-an-ku-un *ÉRIN*^{MEŠ} *ŠU-TI* *I-NA* [ŠÀ. KUR^{II}]
7. *IK-ŠU-UD* nu-uš-ši DINGIR^{MEŠ} kat-ta-an ti-i-e-er [^PUTU ^{URU}PÚ-na]
8. ^DU ^{URU}Ha-at-ti ^DU KARAŠ ^DIŠTAR LÍL nu ^L[^Ú*KÚR*]
9. pa-an-ga-ri-it BA.ÚŠ LÚ^{MEŠ} ŠU.DIB-an-na me[-ek-ki-in] *IS-BAT*
10. na-an EGIR-pa *I-NA* ^{URU}Ša-mu-ḥa ú-wa-te[-et]

2. Իսկ երք հայրս գնաց ...
3. և Հայասա երկրի թշնամուն [... երկրում]
4. չհանդիպեց և հայրս դեպի թշնամական Հայասա ետ գնաց և նրան հետո չ[հանդիպեց],
6. իսկ թշնամի Կասկա երկրի բոլոր զորաջոկատներին [երկր-ներում]
7. հպատակեցրեց, և նրան աստվածներն օժանդակեցին՝ Արիննայի Արևի աստվածուիին,
8. Խաթթի Ամպրոպի աստվածը, քանակի Ամպրոպի աստվածը, Դաշտի աստվածուիին: Եվ թշնամին
9. մեծ քանակորյամբ սպանվեց, շատ գերիներ նա վերցրեց,
10. և նա ետ Սամուխս քաղաք վերադարձավ:

2. Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, TTKY, № VI/34, Ankara, 1991, S. 298-301. Թույան Ա., Նոր հյութերի խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, էջ 234 -235:

1. [.....] x x [.....]
2. [.....] x x n[u] SI[GI_s-i]n ŠEŠ "Ta-pa-li-ya"
3. [pa-ra-a ne-e]h-ħu-un nu a-pé-e-da-ni KUR-c a-pa-a-aš
4. [.....] x ša-ra-a I-NA KUR.UGU i-it
5. [a-pé-c]d-[d]a-n[i] ud-da-ni-i EGIR-an ti-ya
6. [.....] x-ni ú-[w]a-ši nu-ut-ta ku-e ku-e wa-aš-túl x x [...]
7. [.....] x x KUR-[y]a-[a]z a[n]-da II-ŠU III-ŠU
8. [.....] p[c?]-e? [...] x GIŠTUKUL [K]UR-ya-az
9. [pa-ra-a pí-ħu-te-š]i
10. [.....] x [k]i-[i]t pa-an-d[a]-la-az-pát EGIR-an ti-ya
11. [.....] x x k[i-i]t pa-an-ta-la-za-pát
12. [...] a-ša-a]n-du ú-wa-ši I-NA KUR ^{URU}Ha-a-ya-š[a]
13. [pa-a-i-ši] n[a-a]t-kán pé-e-di ħa-an-da-a-an-te-eš
14. [a-ša-an-du ..-a]t-ta ú-iz-zi EG[IR?] ^{DUTU}_{SI}
15. [ti-ya-az-zi] [n]u-[z]a ú-wa-ši ERÍN ^{MEŠ.HI.A} ni-ni-in-ku-wa-an-z[i]
16. [pa-a-i-š]i
17. [ÉRÍN ^{MEŠ} KUR.KU]R ^{MEŠ} KUR.UGU ^{TIM} KUR ^{URU}I-š-ħu-pí-it-ta
18. [...] KUR ^{HUR.S}_{AG} Ša-ka[d]-du-nu-wa KUR ^{URU}Ša-na-ħu-it-t[a]
19. [.....]x KUR [^URUTU-u-pa-az-zi-ya
20. [KUR ^{URU}La-ħ]u-u-wa-za-an-ti-ya KUR ^{URU}I-šu-wa
21. [.....]x-ya [k]u-[i]t ku-it ŠA KUR.UGU ^{TIM}
22. [ÉRÍJN ^{MEŠ.HI.A} na-aš ħu-u-ma-an-du-uš ni-ni-i[k]
23. [...]x K[UR.K]UR ^{HI.A} wa-a-tar-na-ah im-ma
24. [...]x u-wa-mi ^DUTU ^{SI} ha-at-ra-a-mi
25. [...]n]i?-ni?-i[k?]-zi QA-TAM-MA e-ep-ši
26. [...]x na-[aš-t]a an-tu-uħ-šu-uš
27. [.....]p]a-r[a]-a ne-[eh-ħi]

- [.....] x x [.....]
- [.....]x x Այ[ժմ] (ամեն ինչ) լա[կ] է: Տապալիյայի եղորը ես
- [այնտեղ ուղարկեցի]: Եվ այդ երկիր նա
- [.....] x դեպի Վերին երկիր գնա,
- [այ]դ բանը նրանց առջև դիր:
- [.....] դու կ[զ]աս: Եվ ինչ էլ որ լինի, մեղքը քեզ x x [...]
- [.....] x x երկրում երկու անգամ, երեք անգամ
- [.....] վերցնել? [...] x երկրից գենք
- [կրերես]:
- [.....] x այդ? պահից նորից օգնիր:
- [.....] x x այդ? պահից
- դու պիտի [.... լին]ես: Դու կզաս: Հայաս[ա] երկիր
- [դու կզնաս]: Ե[վ դ]ու այդ վայրը կարգի
- [կրերես: ...Եվ] դու կզաս (ու) Արևիս ետ(ևում)
- [կկանգնես]: Եվ դու կզնաս՝ զորքերը հավաքելու
- [կզնաս]:
- [Չորքերը երկր]ների՝ Վերին երկրի, Խսխուալիտտա քաղաքի երկրի,
- Սակադրունուվա [լեռ]ան երկրի, Սանախուիտտ[ա] քաղաքի երկրի,
- [.....]x, Տուպացցիյա քաղաքի երկրի,
- [Լախ]ուվացանտիյա [քաղաքի երկրի], Խսուվա քաղաքի երկրի,
- [.....-]x և [ինչ] որ կան, Վերին երկրի
- [զորացոկատ]ները, բոլորը շարժման մեջ դ[իր]
- [.....]x երկրներին հրամայիր այդպես
- [.....]x ես կզամ: Ես՝ Արևս կզրեմ:
- [.....] նա շարժմ[ան] մեջ կդնի: Դու պարզապես վերցրու:
- [.....]x Եվ մարդիկ
- [.....ես] կու[ղարկեմ]:

3. KBo V 3 (Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches
in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 126-129).

III.

45. ŠA É.GAL^{LIM} MUNUS ma-a-na-aš EL.LUM ma-a-na<-aš>
MUNUS SUHUR.LÁ
46. nu-uš-ši ma-ni-in-ku-wa-an le-e ti-ya-ši nu-uš-ši ma-ni-i[n-ku-]
jwa-an
47. le-e pa-a-i-ši me-mi-ya-an-na-aš-ši le-e me-ma-at-ti
48. İR-KA-ya-aš-ši GÉME-KA ma-ni-in-ku-wa-an le-e pa-iz-[zi]
49. na-an-za-an me-ek-ki uš-ga-ah-ḥu-ut ŠA É.GAL^{LIM} ku-wa[-pi
MUNUS ú-iz-zí]
50. na-aš-ta KAS-az ar-ḥa me-ek-ki wa-at-ka-ah-ḥu-ut
51. nu-uš-ši KAS-an ar-ḥa tu-u-wa tar-na nu-za ki-i ŠA [É.G(AL^{LIM})]
52. [A-]WA-AT MUNUS me-ek-ki a-ru-ma uš-g[(a-ah-ḥu-ut)]
53. "Ma-ri-ya-aš ku-iš e-eš-ta na-aš ku-e-da-ni ud-d[a-ni-i še-er
(BA.ÚŠ)]
54. U.UL MUNUS SUHUR.LÁ i-ya-at-ta-at a-pa-a-ša-an-kán a[n-da a-
uš-zí]
55. A-BI DUTU^{S/}-ma-kán im-ma ^{GIS}AB-az ar-ḥa a-uš-Z[i na-an-kán]
IS.BAT
56. zi-ik-wa-kán a-pu-u-un an-da ku-wa-at a-u[š-ta)]
57. na-aš a-pé-e-da-ni ud-da-ni-i še-er BA.ÚŠ nu [ku-e-da-ni ud-da-
ni-y]a
58. še-er an-tu-uh-ša-aš ḥar-ak-ta nu-za zi-ik-ka [me-ek-ki uš-g(a-ah-
ḥu-)]ut

III.

45. Պալատական կինը, եթե նա ազատ (ազնվագարմ) է, եթե նա
ստրկուիի է,
46. նրան մոտ չգնաս և նրա մոտ
47. չգնաս և ոչ մի խոսք չփոխանակես նրա հետ:

48. Լինի դա քո ստրուկը կամ ստրկուիին, շմոտենաս
 49. և նրան շատ շնայես: Հենց որ պալատական կինը գա՝
 50. դու ճանապարհից դուրս արի,
 51. և նրա ճանապարհից հեռու մնա: Իսկ այն պալատական կնոց
 52. գործը, որի պատճառով պետք է շատ զգույշ լինել,
 53. Մարդիյան, որ կար, նա այդ գործի պատճառով մահացավ,
 54. Արդյո՞ք, նա չգնաց ստրկուիու մոտ, և արդյո՞ք չեր նայել նրան:
 55. Սակայն, հայրս՝ Արևը, այդ պահին պատուհանից դուրս եք
 նայել և նրան տեսել:
 56. Ինչո՞ւ դու նայեցիր:
 57. Եվ նա այդ բանի համար մահացավ և այդ գործի
 58. պատճառով մարդը զոհվեց, և դու պետք է շատ զգույշ լինես:

4. KUB XXXIV 23 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 3, p. 83-84).

I.

18.] e-eš-ta *A-BU-YA-ma-za*
 19.me-n]a-aḥ-ḥa-an-da kat-ta-wa-tar kat-ta
 20.KUR ^U]RU Zu-uḥ-ḥa-pa pa-it na-an ar-ḥa
 21.-z]a a-ra-aḥ-za-an-da e-eš-ta
 22.ar-ḥa wa-ar-nu]-ut ^{URU}Zu-uḥ-ḥa-pa-an-ma-kán URU-an
 23. [ḥu-u-ma-an-da-an ar-ḥ]a wa-ar-nu-ut NAM.RA ^{MES}-ma-kán
 24.I-N]A ^{URU}Ha-ya-ša i-ya-at-ta-at
 25.] x-at na-an IŠ-[T]U ^{HUR.SAG}La-ḥa-a
 26.]-ir

I.

18.] կար: Եվ հայրս
 19.ընդ]դեմ, վրեժիսնդրության նպատակով
 20.երկիր քաղաք Ծուխապա գնաց: Եվ նրա

21.] շուրջը ինչ կար
22.այրեց: Քաղաք Ծոլխապան, քաղաքը
23. [ամբողջը այլուեց, և տարագիրները
24.] դեպի Հայաստան գնացին
25.] x-at և նրանց Լախան լեռներից
26.]-ir:

**5. KBo III 4=2Bo TU 48 (Götze A., Die Annalen des Muršiliš,
MVAG, 1933, № 38, S. 96-97).**

III.

93. nam-ma-za ma-aḥ-ḥa-an KUR ^{URU}Ti-pí-ya tar-aḥ-ḥu-un nu *A-NA*
"An-ni-ya LUGAL ^{URU}Azzi
94. LÚ *TE4-MA* u-i-ya-nu-un nu-uš-ši ḥa-at-ra-a-nu-un ku-it-ma-an-wa *A-BU-YA*
95. *I-NA* KUR ^{URU}Mi-it-ta-an-ni e-eš-tu nu-wa-ták-kán ^{IR}^{MES}-YA ku-i-e-eš an-da ú-e-er

IV.

1. [nu-wa-ra-aš-mu EGIR-pa pa-a-i....]

III.

93. Այնուհետև, երբ Տիրիյա երկիրը նվաճեցի (հպատակեցրի),
Աննիյայի՝ Ազգի թագավորի մոտ
94. պատվիրակ (դեսպանորդ) ուղարկեցի և նրան ես գրել եի.
«Այն ժամանակ, երբ հայրս
95. Միտաննի երկրում եր, ծառաներս, որ քեզ մոտ եկան

IV.

1. [ինձ ես վերադարձրու....]

6. KUB XIV 17=2BoTU 56 (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 94-99).

III.

1. [.....] [.....]
2. [.....]-ta na-aš ú-it [nu *I-NA* KUR ^{URU}Da-an-ku-wa]
3. [i-ya-at-ta-at na-an GU]^L-ah̄-ta na-an *IŠ[-TU NAM.RA*^{MES}]
4. [GUD UDU ša-ra-a da-a-aš na-an-kán *I-NA* ^{URU}Ha-ya-ša kat[-ta-an-da pe-e-da]-ja-aš]
5. [GIM-an-ma-at ^DUTU^{SI} iš-ta-ma-aš-šu-un] nu-uš-ši ha-at-ra-a-nu-un [.....]
6. [.....] a-pi-ya-wa-mu-kán *Ú-UL* ku[-it-ki]-jir LÚ^{MES}
^{URU}*Iš-te?-te?-na?-ya-wa-mu-kán UL* ku-i-e-eš-ka [x]
7. [.....zi-ik-ma-wa] ú-it nu-wa *I-NA* KUR ^{URU}Da-[an-ku-wa]
8. [i-ya-at-ta-at-ti nu-wa-ra-an GUL-a]^{h̄}-ta nu-wa-ra-an *IŠ-TU*
[NAM.RA^{MES}]
9. GUD UDU ša-ra-a da-at-ta nu-wa-ra-an-kán] *I-NA* KUR ^{URU}Ha-ya-ša kat[-ta-an-da pe-e-da-a-aš]
10. [EN KU](R ^{URU}Az)[-zi-ma-mu.....] ki-iš-ša-an EGIR-pa [ha-at-ra-a-iš]
11. [ku-it-ma-wa-mu zi-ik] (ha-at-re-eš)-ki-ši nu-wa-mu-kán ma-a-an [NAM.RA^{MES}]
12. [an-da ú-e-er] (an-da-ya ku-e-iš-ka? ú-w)[a-an-te-eš nu-wa-ra-aš pa-ra-a *Ú-UL*]
13. [pi-ya-u-e-ni](ma-a-an-ma-wa ša-a)[n-h̄i](-eš-ki-ši-ya?)[.....]..[.....am-mu-uk-ma]
14. (ki-iš-ša-an EGIR-pa ha-a)t-ra-a-nu-un am-mu-uk-wa ú-wa-nu-[un nu-wa-ká](n)
15. (*A-NA* ZAG KUR-*KA* pí-ra-an) [tu]-uz-zi-ya-nu-un nu-wa KUR-*KA* *Ú-UL* wa-al-ah̄-h̄u-un
16. [nu-wa-ra-at am-mu-uk *IŠ-TU* NAM.RA GUD UDU *Ú-UL* da-ah̄-h̄u-un

17. (nu-wa zi-ik) [*A-NA* ^D*UTU*^{ŠI} šu]-*Jul-le-e-et* nu-wa ú-it KUR
_{URU}*Da-an-ku-wa*
18. [GUL-aḥ-ta na-at dan-na-at-ta-ah-]ta nu DINGIR^{MES} am-m(e-e-da)-az ti-an-du
19. [nu-wa DI-eš-šar am-me-e-](da-az) ḥa-an-na-an-du
20. [a-pa-a-aš-ma-mu ku-it i-da-a-la]-u-wa *A-WA-TE*^{MES} me-mi-iš-ki-u-an da-a-iš
21. [nu-uš-ši am-mu-uk ku-ru-](ri-ya)-ah-ḥu-un nu-uš-ši pa-a-un nu
_{URU}*U-ra-aš ku-iš URU-aš*
22. [*ŠA* KUR ^{URU}](*A-az-zi* ḥa-an-te-ez-zi-iš) a-ú-ri-iš e-eš-ta na-aš-kán na-ak-ki-i pe-e-di
23. [a-ša](-an-za nu ku-iš ke-e *TUP-PA*^{HIA}) x x x-ya iš-ta-ma-aš-zi nu u-ya-ad-du
24. (nu a-ši ^{URU}*U-ra-an* URU-an) [a-uš-du ma-ah-ḥa-an-na-aš ú]-je-da-an-za e-eš-ta

III.

1. [.....] [.....]
2. [.....]-ta և նա եկավ [և Դանկուվա երկիրը]
3. [գնաց և այն զրյավեց: Եվ [գերիներ],
4. [խոշոր և մանր եղջերավոր անասուն վերցրեց և նրանց Հայասա երկիր տարավ]
5. [երբ այդ մասին Արևս լսեցի], նրան զրեցի [....]
6. [.....] այնուհետև ինձ ոչի[նչ]-իր: Եվ Իստիտիմա? քաղաքի մարդիկ ով (էլ) որ չ[x]
7. [.....Քայց դու] եկար և դեպի Դանկուվա երկիր
8. [գնացիր և զրյավեցիր և այնտեղից [գերիներ]
9. [խոշոր և մանր եղջերավոր անասուններ վերցրեցիր և Հայասա երկիր տարար]:
10. [Սակայն տերը (Ազ)[զի երկրի ինձ.....] ինչ պատասխան զրեցիր]:
11. [Այն ինչ դու ինձ] (զրեց)իր: [Գերիները] ինձ հետ
12. [եկան] (և ով որ? եկ)[ավ, նրան շեմ]

13. [տա?]: (Բայց եթե հարձակվեցիր?) [...]. [...Ես]
14. (նորից) ուղարկեցի նամակ: Եվ ես եկ[ա և]
15. (քո երկրի սահմանի մոտ) [բա]նակեցի, բայց քո երկրի վրա շահրձակվեցի:
16. [Եվ ես] զերիներին, խոշոր և մանր եղերավոր անասուն չվերցրեցի:
17. (Իսկ դու) [Արևիս բ]արձվացրեցիր, եկար և Դանկովա երկրի վրա
18. [հարձակվեցիր և այն ամայացրեցի]ր: Եվ աստվածները քող ինձ հետ լինեն,
19. [քող դատեն և ին](ձ) առաջնորդեն:
20. [Նա ինձ թշնամակ]ան քառեր գրեց:
21. [Եվ ես բա](ր)կացա և գնացի դեպի նա: Եվ Ուրա քաղաքը, որն
22. (Ազգի) [երկրի] առաջին սահմանային ամրոցն է, այն մի զարիվայր (դժվարամատչելի) տեղում էր գտնվում:
23. (Եվ ով որ այս նամակները) x x x-ya լսի, քող գա
24. (և Ուրա քաղաքը) [տեսնի, երբ նա] կանգուն էր:

7. 2BoTU 56 (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 102-103).

IV.

7. [.....] LÚ^{MEŠ} URU^{Ha]}-ya-ša-ma GIM-an
8. [.....] iš-ta-ma-aš-ši-ir^DUTU^{ši}-wa ú-iz-zí
9. [nu-mu-kán LÚ TE4-MA me-na-aḥ-ḥa-a]n-da pa-ra-a ne-e-e-er
10. [nu-mu wa-tar-na-aḥ-ḥi-ir BE-]LÍ-NI-wa-kán ku[-it x]
11. [.....] n]u-wa-ra-at na-aḥ[-šar-ri-ya-an-ta-at]
12. [.....]-wa-kán [.....]

IV.

7. [.....] Երբ Հայասայի մարդիկ
8. [.....] լսեցին, որ Արևը գալիս է,
9. [ինձ ընդառաջ պատվիրակ(դեսպանորդ) ուղարկեցին]:

10. [ԵՎ ինձ հաղորդեցին: Ինչու է մեյր տերը]
11. [.....] վախեցան
12. [.....]-wa-kán [.....]

8. KBo IV 4=2BoTU 58 (Götze A., Die Annalen des Muršiliš,
MVAG, 1933, № 38, S. 130-139).

III.

57. ma-ah-ja-an-ma ha-me-eš-ja-an-za ki-ša-at nu *I-NA* KUR ^{URU}Az-zi
58. da-a-an KAS-ši nam-ma pa-a-un nu-za *I-NA* ^{URU}In-ga-la-wa
59. *A-NA* ÉRIN^{MES} ANŠU.KUR.RA ^{HIA} ú-wa-a-tar i-ya-nu-un LÚ^{MES}
^{URU}Az-zi-ma
60. ^DUTU^{š/} ku-it ka-ru-ú hu-ul-li-iš-ki-nu-un
61. ^mNu-u-wa-an-za-ša-aš GAL.GEŠTIN ŠA-PAL ^{URU}Kán-nu-wa-ra
hu-u[l-li-iš-ki-i]t
62. nu-mu-za nam-ma UD.KAM^{HIA} za-ah-hi-ya-u-wa-an-zi *Ú-UL*
[ku-wa-at-ka]
63. ha-an-da-al-li-i-e-er nu-mu-za-kán MÚ.KAM-za wa-al-hu[-u-
wa-an-zi]
64. zi-ik-ki-ir MÚ.KAM-za-wa-aš[-ši-kán] an-da [ha-at-ke-eš-nu-
um-me-ni]
65. ma-ah-ja-an-ma ^DUTU^{š/} [me-mi-a]n iš-[ta-ma-aš-šu-un]
66. LÚ^{MES} ^{URU}Az-zi-wa[-ták-kán] MÚ.KAM-za ŠA(G) K[ARAŠ^{HIA}]
67. GUL-ah-hu-u-wa-an-z[i] zi-ik-kán-zi [x]
68. nu-za ^DUTU^{š/} KARAŠ^{HIA} iš-hi-ú-ul-la-ah-hu-un [KARAŠ^{HIA}]
69. ma-ah-ja-an UD.KAM-ti pu-tal-li-ya-an-da i-ya-at-ta-[ri]
70. MÚ.KAM-az-ma-at-kán še-e-na-ah-aš *QA-TAM-MA* e-eš-zi
71. nu ma-ah-ja-an LÚ^{MES} ^{URU}Az-zi e-ni-iš-ša-an pa-ah-ša[-nu-wa-
an.....]
72. a-ú-e-cr nu nam-ma (.....)

- III.
57. Հենց որ գարունը քացվեց, դեպի Ազգի երկիր
 58. երկրորդ անգամ ճանապարհ ընկա և Ինձալավա քաղաքում
 59. հետիոտն զորբերի և մարտակառքերի զորատես անցակացրեցի: Բայց Ազգի մարդիկ
 60. Արևի դեմ արդեն կովել էին,
 61. Նուվանցան՝ մեծ մատանապետը Կանոնվարա քաղաքի մոտ հաղթել էր]:
 62. Եվ ինձ հետ այնուհետև ցերեկով կովել [բոլորովին]
 63. շիամարձակվեցին և ինձ գիշերը հարվածել
 64. որոշեցին: Գիշերը [նրանց] կ[ճնշենք]
 65. Խսկ երք Արևս [այդ լու]ը լսեցի],
 66. Ազգի մարդիկ գիշերով զ[որքերի] կենտրոնին
 67. էին նախատեսում հարվածել [x]:
 68. Եվ Արևս զորքերը միավորեցի: [Չորքերը]
 69. գիշերը ցերեկվա նման մարտական վիճակով գնացին:
 70. Գիշերն այդ կերպ դարանում մնացին:
 71. Եվ երք Ազգի մարդիկ այդ պաշտպանությունը.....]
 72. տեսան, այնուհետև (.....)

IV.

4. nu *I-NA URU A-ri-ip-ša-a an-da[-an za-ah-hi-ya i-ya-an-ni-ya-nu-un]*
5. a-ši-ma-kán *URU A-ri-ip-ša-aš Š[À A.A]B.BA ki-it-ta-ri*
6. nam-ma-aš-ši *URU-ri-a-še-eš-šar ku-it na-aš HUR.SAG NÀ pe-e-ru-nu[-uš ḥar-kir]*
7. nam-ma-at me-ek-ki pár-ku nu-kán KUR-e ku-it ḥu-u-ma-an ša-ra-a pa-a[-an]
8. e-eš-ta na-an ÉRIN^{MES} pa-an-ku-uš ḥar-ta na-an ^DUTU^{SI} za-ah-hi-ya-nu-u[n]
9. nu-mu ^DU NIR.GÁL *BE-LÍ-YA* ^DUTU *URU A-ri-in-na GAŠAN-YA*
^DU *URU Ha-at-ti*
10. ^DLAMMA *URU Ha-at-ti* ^DU KARAŠ ^DİŞSTAR LÍL DINGIR^{MES}-ya
ḥu-u-ma-an-te-cš

11. pi-ra-an ḥu-u-i-e-er ŠA 1-EN GAL-ya U-UL pa-it
12. [nu-]kán URU A-ri-ip-ša-a-an za-ah-hi-ya-az kat-ta da-ah-ḥu-un
13. [n]a-an URU Ha-at-tu-ši ḥu-u-ma-an-ti-i ša-a-ru-ù-i ma-ni-ya-ah-ḥu-un
14. [nu]-za ÉRIN^{MEŠ} ANŠU.KUR.RA^{HIL} ŠA BI-IR-TI IŠ-TU NAM.RA^{HIL} GUD UDU-ya
15. [me]-ek-ki ú-e-mi-ya-at nu DUTU^{SI} a-pe-e-da-ni-pát UD-ti
16. [A-]NA URU A-ri-ip-ša-a-pit še-e-šu-un
17. lu-uk-kat-ta-ma I-NA URU Du-uk-ka-am-ma an-da-an za-ah-hi-ya-i-ya-an-ni-ya-nu-un
18. ma-ah-ḥa-an-ma-mu-kán LÚ^{MEŠ} URU Du-uk-ka-am-ma me-na-ah-ḥa<-an>-da a-ú-e-ir
19. na-at-mu me-na-ah-ḥa-an-da ú-e-ir na-at-mu GÌR^{MEŠ}-aš kat-ta-an
20. ḥa-a-li-i-e-cr nu-mu me-mi-ir BE-LÍ-NI-wa-an-na-aš ŠA URU A-ri-ip-ša-a
21. i-wa-ar URU Ha-at-tu-ši ša-a-ru-u-wa-an-zi le-e ma-ni-ya-ah-ti
22. nu-wa-an-na-aš BE-LÍ-NI an-da a-ra-an-da ar-nu-ut nu-wa-an-na-aš URU Ha-at<-tu>-ši
23. ar-ḥa pe-e-ḥu-te nu-wa-an-na-aš-za ÉRIN^{MEŠ}
ANŠU.KUR.RA^{HIL} i-ya nu nam-ma DUTU^{SI}
24. URU Du-uk-ka-ma-an URU-an [ša-]a-ru-u-wa-an-zi U-UL tar-na-ah-ḥu-un
25. na-an-kán IŠ-TU NAM.RA x x-ḥ-ḥu-un NAM.RA URU Du-uk-ká-ma
26. 3 LI-IM NAM.RA I-NA É[LUGAL] ku-in ú-wa-te-nu-un
27. na-an-za-an ÉRIN^{MEŠ} ANŠU.KUR.RA^{HIL} i-ya-nu-un
28. ma-ah-ḥa-an-ma LÚ^{MEŠ} URU Az-zi a-ú-e-er URU.DIDLI^{HIL} BÀD-kán ku-it za-ah-ḥi-ya-az
29. kat-ta da-aš-ki-u-wa-an te-eh-ḥu-un nu LÚ^{MEŠ} URU Az-zi ku-i-e-eš
30. URU.DIDLI^{HIL} BÀD NÂpé-e-ru-nu-uš HUR.SAG^{MEŠ}-uš pár-ga-u-e-eš na-ak-ki-i

31. *AŠ-RJ^{Hl.A}* EGIR-pa ḥar-kir na-at na-aḥ-ša-ri-ya-an-da-ti nu-mu LÚ^{MEŠ} ŠU.GI KUR⁷⁷
32. me-na-aḥ-ḥa-an-da ú-e-er na-at-mu GIR^{MEŠ}-aš kat-ta-an ḥa-a-li-i-e-er
33. nu-mu me-mi-ir *BE-LÍ-NI*-wa-an-na-aš le-e ku-it-ki ḥar-ni-ik-ti
34. nu-wa-an-na-aš-za *BE-LÍ-NI* ̄IR-an-ni da-a nu-wa *A-NA BE-LÍ-<NI>* ÉRIN^{MEŠ} ANŠU.KUR.RA^{Hl.A}
35. pe-eš-ki-u-wa-an ti-i-ya-u-e-ni [NAM.R]A ^{URU}Ha-at-ti-ya-wa-an-na-aš-kán ku-iš
36. an-da nu-wa-ra-at^ī pa-ra-a pi-i-y[a-u]-e-ni na-aš nam-ma ^DUTU^{SI} ̄U-UL
37. ḥar-ni-in-ku-un na-aš-za ̄IR-an-ni da-aḥ-ḥu-un na-aš-za ̄IR-aḥ-ḥu-un
38. nu-mu MU.KAM-za ku-it še-ir te-e-pa-u-e-eš-ša-an-za e-eš-ta nu nam-ma
39. KUR ^{URU}Az-zi ̄U-UL da-ni-nu-nu-un nu LÚ^{MEŠ} ^{URU}Az-zi li-in-ga-nu-nu-un
40. nam-ma ^{URU}Ha-at-tu-ši ú-wa-nu-un nu ^{URU}Ha-at-tu-ši
41. gi-im-ma-an-da-ri<-ya>-nu-un

IV.

4. Եվ Արիպսա քաղաքը գրավելու համար շարժվեցի:
5. Այդ Արիպսա քաղաքը ծխվի մեջ էր գտնվում:
6. Նրա բնակչությունը հեռացել էր և գրադեցրել էր ժայռոտ լեռը,
7. հեռվից այն շատ բարձր էր երևում: Եվ ողջ երկիրը վեր էր բարձրացել:
8. Եվ այն զորքերը ամբողջովին ավերեցին: Եվ նրան Արևս հարվածեցի:
9. Եվ ինձ Ամպրոպի հզոր աստվածը՝ իմ տերը, Արիննայի Արևի աստվածությն՝ իմ տիրությն, Խարթի Ամպրոպի աստվածը,
10. Խարթի Հովանավոր աստվածը, Բանակի Ամպրոպի աստվածը, Դաշտի Խշտար աստվածությն, բոլոր աստվածները

11. առաջնորդում էին և ինձ հետ էին և ինձ շլեցին:
12. Եվ Արիպսա քաղաքին հարվածեցի, նվաճեցի
13. և Խաթթուսաս քաղաք ամբողջ ավարը ուղարկեցի:
14. Եվ զինվորները, կառամարտիկները ամրոցում գերիներ, խոշոր և մանր եղջերավոր անասուն
15. շատ գտան: Եվ ես՝ Արևս, այդ օրը
16. Արիպսայում զիշերեցի:
17. Հաջորդ օրը դեպի Դուզզամա քաղաք արշավեցի՝ այն նվաճելու համար:
18. Երբ Դուզզամա քաղաքի մարդիկ ինձ տեսան իրենց առջև,
19. Նրանք ինձ ընդառաջ եկան և իմ ոտքերի առջև
20. ծունկի եկան և ինձ ասացին՝ մեր տե՛ր, մեզ Արիպսա քաղաքի
21. նման Խաթթուսաս քաղաքի համար ավարի շմատնես:
22. Մեզ, մեր տե՛ր, ամրողովին մի ավարադի, այլս մեզ Խաթթուսաս քաղաքի համար
23. մի՛ տար: Մեզ՝ որպես զինվորներ, կառամարտիկնե՛ր վերցրու: Այնուհետև Արևս
24. Դուզզաման՝ այդ քաղաքը, չափերեցի:
25. Եվ նրանցից գերիներ չ չ-ի-ես-սո, գերիներ Դուզզամայից
26. 3000 զերի թագավորական պալատ բերեցի:
27. Եվ նրանց զինվորներ և կառամարտիկներ դարձրեցի:
28. Երբ Ազգի մարդիկ տեսան, որ իրենց ամրացված քաղաքները ինչպես եմ
29. նվաճում, Ազգի երկրի մարդիկ, որոնք
30. ամրոցներում և լեռների բարձր և դժվարանատչ
31. վայրերում էին ապաստանել, նրանք վախեցան: Եվ երկրի ավագներն ինձ
32. ընդառաջ եկան: Եվ ոտքերիս առջև ծունկի եկան:
33. Եվ ինձ ասացին՝ մեր տե՛ր, մեզ մի՛ ոչնչացրու,
34. այլս մեզ, մեր տե՛ր, ծառայության վերցրու, և մեր տիրոջը զինվորներ, կառամարտիկներ
35. կուղարկենք: Խաթթի գերիներին, որ մեզ մոտ են,

36. նրանց կուտարկեմք: Եվ քող այնուհետև Արևը
37. չոչնչացնի, այլ ծառայության վերցնի:
38. Եվ քամի որ տարին վերջանում էր,
39. Ազգի երկիրը շամբացրեցի և Ազգի մարդկանց երդման տակ դրեցի:
40. Այնուհետև Խաքքուսաս քաղաք եկա: Եվ Խաքքուսասում
41. ձմեռեցի:

9. KBo IV 4=2BoTU 58 (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 138-141).

IV.

42. ma-ah-ḥa-an-ma ḥa-me-eš-ḥa-an-za ki-ša-at ma-an *I-NA* KUR
URU Az-zi ta-ni-nu-ma-an-zi
43. pa-a-un ma-ah-ḥa-an-ma LÚ^{MEŠ} URU Az-zi iš-ta-ma-aš-šir ^DUTU^{SI}-
wa ú-iz-zi
44. nu LÚ^{MEŠ} URU Az-zi ^mMu-ut-ti-in LÚ^{URU} Ha-li-ma-na-a me-na-
ah-ḥa-an-da
45. [u]-ji-e-er nu-mu ki-iš-ša-an wa-a[-tar-]na-ah-ḥi-ir *BE-LÍ<-NI>*-
wa-an-na-aš ka-ru-ú
46. [ku-]it ḥar-ni-ik-ta nu-wa *BE-LÍ-NI* li-e nam-ma ú-wa-ši nu-wa-
an-na-aš-za *BE-LÍ-NI*
47. [^{IR-}a]n-ni da-a nu-wa *A-NA* *BE-LÍ-NI* ÉRIN^{MEŠ}
ANŠU.KUR.RA^{MEŠ} pc-eš-ki-u-wa-an ti-ya-u-e-ni
48. [NAM.RA] ^{URU}Ha-at-ti-ya-wa-an-na-aš-kán ku-iš an-da nu-wa-
ra-an pa-ra-a pi-i-ya-u-e-ni
49. [nu-mu NA]M.RA ^{URU}Ha-at-ti 1 *L/-[IM]* NAM.RA EGIR-pa pi-
i-e-er
50. [nu-m]u e-ni-iš-ša-an ku-it [^mMu-]ut-ti-in LÚ^{URU} Ha-li-ma-na-a
51. [me-]na-ah-ḥa-an-da u-i-e-er [NAM.RA] ^{URU}Ha-at-ti-ya-mu
EGIR-pa pi-i-e-er

52. nu nam-ma ^DUTU^{SJ} I-NA KUR ^{U[RU]}Az-z]i U-UL pa-a-un na-aš-za īR-an-ni
53. da-aħ-ħu-un na-aš-za īR-aħ-ħu[-un] nu nam-ma ^DUTU^{SJ} a-pé-e-da-ni MU.KAM-ti
54. gi-im-ri U-UL ku-wa-pi-ik-ki pa-a-un nu I-NA ^{URU}A-an-ku-wa an-da-an
55. ú-wa-nu-un nu I-NA ^{URU}A-an-ku-wa gi-im-ma-an-ta-ri-ya-nu-un

IV.

42. Երբ գարունը քացվեց, Ազգի երկիրը կարգավորելու համար
43. զնացի: Երբ Ազգի երկրի մարդիկ լսեցին, որ Արև գալիս է,
44. Ազգիի մարդիկ Սուտտիին՝ Խալիմանա քաղաքի մարդուն ընդառաջ
45. ուղարկեցին: Եվ ինձ այսպես դիմեց. մեր տե՛ր, մեզ արդեն
46. հարվածել ես: Մեր տե՛ր, նորից մեզ մոտ մի' արի, այլ մեր տե՛ր, մեզ
47. [ծառայության վերցրու: Մեր տիրոջը զինվորներ և կառամարտիկներ կուղարկենք:
48. Խաթթիի գերիները, որ մեզ մոտ են, նրանց կուղարկենք:
49. [Եվ ինձ] Խաթթի երկրի 1000 գերի վերադարձեցին:
50. [Եվ ինձ] քանի որ [Սուլ]տտին՝ Խալիմանա քաղաքի մարդը
51. [ընդ]առաջ եկավ և [գերիներին] Խաթթի երկրի վերադարձեց,
